

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

ԸՆԿԵՐ ՓԱՆՉՈՒՆԻ



Փ Ա Ր Ի Զ

1935

891.99

0-79

Կ Ա Զ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՒՆ

1929ի աշնան էր, որ խումբ մը մտաւրականներ հիմք դրին Նահատակ Գրադէտներու Բարեկամներ հրատարական ընկերութեան, նպատակ ունենալով հաւաքել եւ հբառարակութեան տալ արեւմտահայ նահատակ կամ մեռած գրողներու երկերը:

Արդէն կը թեւակրիսենք մեր գոյութեան վեցերորդ տարին, եւ հակառակ տնտեսական տագնապին, ուրախ ենք յայտարարելու որ կրցեր ենք հրատարակել արդէն ինը գեղեցիկ եւ ընտիր հատորներ:

Պատրաստ դրամագլուխով մը չէր, որ գործի ձեռնարկեցինք: Շնորհիւ հիմնադիրներու աննահանջ եւ անձնուեր գործունեութեան եւ եռանդին, ինչպէս նաև նուիրատու եւ համակիր ընթերցողներու բազմութեան մը, հրատարակչական այս գործը մեր գրականութեան համար անհրաժեշտ ձեռնարկ մը դարձուցինք: Պէտք ունինք սակայն նոր օժանդակողներու եւ ընթերցողներու, գիրքերու այս գեղեցիկ շարքը շարունակելու համար:

Կը հաւատանք որ այդ կերպով միայն մեր նահատակ գրագետներուն յիշատակը յարգած ու յաւերժացուցած պիտի ըլլանիք:

ՆԱՀԱՏԱԿ ԳՐԱԳԵՏՆԵՐՈՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ

Ս. Վացեան, Մկրտիչ Պարսամեան,

Բժ.Լ.Գրիգորեան, Շ.Նարդունի, Կ.Սասունի

890.014
035
1935

« ՆԱՀԱՏԱԿ ԳՐԱԳԵՑՆԵՐՈՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ »

ՄԱՏԵՆԱՅԱՐ — ԹԻՒ 9



ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

ԸՆԿԵՐ ՓԱՆԶՈՒՆԻ



Printed in France

Փ Ա Ր Ի Զ

1935

Այս գիրքն տպագրուած է 500 օրինակ
մասնաւոր վելեն բղբի վրայ բուգրուած
1 — 500:

Թիւ . 55 .

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

	Էջ
Երուանդ Օտեան	9
1.— Առավելութիւն մը ի Ծաղկար	17
Ընկերվարական նամականի ընկ.Բ.Փանջունիկ	
2.— Ընկեր Փանջունի Վասպուրականի մէջ . . .	93
3.— Իմ աշխարհայեցքները	166
(Դասախոսութիւններ օրուայ հարցերուն շուրջ)	
4.— Պահպանողականը (պոլսական տիպար մը) . .	204

03 SEP 2013

61359

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

Ծնած է 19 Սեպտեմբեր 1869ին, Պոլսոյ Ենիքիւլ
արուարձանը:

Գեղեցիկ մանուկ մըն էր եւ ուշիմ: Դպրոց չի յա-
ճախեր, մասնաւոր դասեր կ'առնէ տան մէջ: 1878ին, կը
ճամբորդէ Ֆրանսա եւ Իտալիա, Գրիգոր Օտեանի հետ,
որ իր հօրեղբայրն էր: Յետոյ պահ մը կը հաստատուի
Ճուրճովայի մէջ (Ռումանիա), ուր զրկուած էր հայրը
իբրեւ օսմ. հիւպատոս: Քանի մը տարի վերջ կը վերա-
դառնայ Պոլս եւ կը մտնէ Պէրպէրեան վարժարան, ուր
կը հրատարակէ ճեռագիր թերթ մը, Վառարան: Ռ. Պէր-
պէրեան կը խափանէ Օտեանի թերթը, բայց նոր մը կը
հանէ ան, նոր անունով մը դարձեալ, Անհաշտ: Կը շա-
րունակէ նաև մասնաւոր դասեր առնել Գրիգոր Մար-
դարեանէ, Տիւպիւայէ եւ Տիւփրէ:

1888ին կը ճամբորդէ Անտիոք, Գէորգ Ասլանի հետ,
որ մօրեղբայրն էր: Վերադարձին, 1893ին, կը մտնէ
Հանրային Պարտուց Վարչութեան մէջ: Այդ ըրջանին կը
սկսի աշխատակցիլ Մասփսին, Մանգումէի Եփեարին,
Արեւելքին: 1894ին կը մտնէ Հայրենիքի խմբադրութեան
մէջ, ուր կ'աշխատի մինչեւ 1896 Օգոստոս 24, երբ, Պան-
քայի Դէպքին պատճառով, կը հեռանայ Պոլիսէն: 6-7



1046-2011

ամիս կը մնայ Աթէնք, ուր կ'աշխատակցի Միութիւն թերթին: Յետոյ կը մեկնի Եղիպտոս: 1897—1898 կ'աշխատի Պօղոս Նուպարի աղարակին մէջ իբրեւ հաշուակալ: 1899ին կ'անցնի Փարիզ: Կ'աշխատակցի Գուիտոն Լուսինեանի Փրանս — Հայերէն բառդիրքին խմբագրութեան, յետոյ միջնորդ՝ հնարժէք առարկաներու, պահ մըն ալ պաշտօնեայ՝ արշաւի ձիերու հայթայթիչի մը մօտ: Կը մեկնի Վիէննա, աշխատակցելու Եուանէսքուի բառարանին, յետոյ Լոնտոն՝ դործակցելու Նոր Կիանքին, ապա դարձեալ Փարիզ՝ խմբագրելու Ազատ Խօսք: 1902ին Եղիպտոս է նորէն, քանի մը տարի պաշտօնեայ՝ ձուլիչի մը մօտ: 1904ին՝ Հնդկաստան, իբրեւ աղտմանդի վաճառական: 1905ին՝ Եղիպտոս, իբրեւ ձուլարանի պաշտօնեայ: Մինչեւ 1908, այստեղ կը հրատարակէ Ազատ Բեմ, Ազատ Խօսք, Արեւ, Կրակ, Օրէնք:

Օսմ. Սահմանադրութենէն յետոյ Պոլիս է: Կ'աշխատակցի Արեւելքի, Ազատամարտի, Հայրենիքի, Բիւզանդիոնի, Շանքի, միաժամանակ կը հրատարակէ շարք մը Երգիծաթերթէր:

1915ին՝ կ'աքսորուի եւ կը հասնի Տէր-Զօր, ուր աւելածու է պահ մը, յետոյ թարգման՝ թուրք սպայի մը մօտ, ապա՝ գերման սպայի մը մօտ: Այստեղ կ'իսլամացնեն զինք եւ ուսուցիչ կը նշանակեն Համայի: Ժամանակ մը վերջ կը բանտարկեն:

Զինադադարին՝ Պոլիս է: 1919—1922 կ'աշխատակցի Ժամանակի, Վերջին Լուրի, Ճակատամարտի: Քէմալական արշաւին առջեւ, 1922 Սեպտեմբերին կը թողու Պոլիսը եւ կ'անցնի Պուքրէչ: Կ'աշխատակցի Նաւասարդին: 1924ին կը մեկնի Սուրիա, հիւանդ մօրեղբօրը մօտ: Այստեղ կ'աշխատակցի Նոր Փիւնիկին ու Հայ Կիանքին:

Յետոյ կ'անցնի Եղիպտոս, ուր կ'աշխատակցի Արեւին, Հայկ. Սինէմային, եւ ուր կը մեռնի Յ Հոկտ. 1926ին: Բեղուն գրող մըն էր: Ահա իր աշխատութիւնները —

Ա. — ՎԵՊԵՐ

Սալիհա Հանըմ, Յ Հատոր (1912), Թաղականին Կնիկը (1921), Միջնորդ Տէր Պապան (1920), Դատաստանական Խորհուրդին առջեւ (1921), Մատնիչը (1920), Առաքելութիւն մը ի Ծապլվար (1913), Ընկեր Փանջունի Վասպուրականի մէջ (1914), Միֆէի սիրարկածը (1920), Զաքը Ավրամ (1920), Ճեպըթաց նորածինը (1920), Ընտանիք, Պատիւ, Բարոյական (Արեւելք), Ես դրսեցի չեմ առներ (Ժամանակ), Թիւ 17 Խափիէն (Վերջին Լուր), Կանանչ հովանոցով կինը (Վերջին Լուր), Կաւէ հերոսներ (Վերջին Լուր), Տարիքա (Վերջին Լուր), Ընկեր Փանջունի տարագրութեան մէջ (Նաւասարդ), Հայ կուլտուրականները (Շաւիշ), Հայ Տիասրորան (Արեւ), Ապտիւ Համիտ եւ Շէրլոն Հոլմս, Պատերազմ եւ Խաղաղութիւն (Շանթ):

Բ. — ՎԻՊԱԿՆԵՐ

Վաշլառուն (Հայրենիք), Գործ Եփող մը (Հայրենիք), Ազգային բարերար (Շիրակ), Ուկեմոլ (Շիրակ), Գործի մարդիկ (Անահիտ), Մուլէտ (Անահիտ), Բարի դահինը (Անահիտ), Մօսա Քլէսիմ (Անահիտ), Համբարձում աղա (Բանբեր), Բրոբականտիսքը (Նոր Կեանք), Վանականի մը նամակները (Մանանա), Ճուղուպիսք եւ Ընկ. (Կառավինատ), Վարպետ Պողիկարպոս (Վերջին Լուր), Յեղափոխութեան Մակաբոյծները (1920), Ազգ. Երևափոխաններ (Մանանա):

Գ. — ԹԱՏԵՐԱԽԱՂԵՐ

Զարշլը Արքին աղա, *Միքայէլ Կիւրճեանի աշխատակցութեամբ*, (1906), Զավալլըն (1909), Սահմանադրութեան 69րդ յօդուածը (1927), Վարդան Մամիկոնեան :

Դ. — ԹԵՌԹԵՐ

Մեծ մասը ինք հիմնած եւ խմբագրած է, մէկ մասն աւ ընկերովի:

Ազատ Բեմ, Հարաթաթերթ, Աղեքսանդրիա, 1903—1907, Ազատ Խօսֆ, Փարիզ, 1901—1902, Աղեքսանդրիա 1906—1907, Թերթիկ, օրաթերթ, Աղեքսանդրիա 1906. լոյս տեսած է միայն 28 թիւ, Օրէնֆ, Հարաթաթերթ, Աղեքսանդրիա, 1905, լոյս տեսած է միայն 13 թիւ: Կրակ, Հարաթաթերթ, Աղեքսանդրիա 1906, լոյս տեսած է միայն 3 թիւ: Են կատու, Հարաթաթերթ, 7 թիւ միայն, 1912—1913, Պոլիս, Մանանա, 1913—1914, Պոլիս, Արեւ, 1908, Գահիրէ, Կառավինատ, Հարաթաթերթ, 1919, Պոլիս, Իգնատ Աղա, Հարաթաթերթ, 8 թիւ միայն, 1919, Պոլիս, Շառիկ — Իգնատ Աղա, Հարաթաթերթ, 1920—1922, Պոլիս:

Ե. — ՈՒՍՈՒՄՆԱԾԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Նահապետ Ռուսինեան (*Մասիս*), Ծերենց (*Մասիս*), Ֆիզիք Պօղոս Պատուելի (*Մասիս*), Գրիգոր Օտեան (*Մասիս*), Ս. Ժողովները (*Հայրենիք*), Իշխանաց Կղզիները (*Արեւելք*), Կղէոպատրա (*Արեւելք*), Թէոտորոս (*Արեւելք*), Հին Խնդիրները (*Հայրենիք*), Փարսիները

(Աղատ Բեմ), Ժողովող (*Շիրակ*), Պօղոս Նուպար (1913), Հայկական Խնդիրը (1914):

Զ. — ՑԻՇԱՏԱԿՆԵՐ

Տասներկու տարի Պոլսէն դուրս (Ճամանակ), Արիւնու Յիշատակներ (Նոր Կեանք), Անիծեալ Տարիներ (Ճամանակ), Մանկութեան Յիշատակներ (Իգնատ Աղա), Գրական Յիշատակներ (Ոստան):

Է. — ՏԱՐԵՑՈՅՑՆԵՐ

Ումանց Տարեցոյցը, Աղեքսանդրիա (1909), Ապուշներու Տարեցոյցը, Պոլիս (1912), Երգիծական Տարեցոյց, Պոլիս, (1921—1922):

Ը. — ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Արգասաւորութիւն, Զոլա, (1910), Յարութիւն, Թուլսոոյ, Աննա Քարենինա, Թուլսոոյ, (1911), Նիֆ Քարքը, Հարթ, Նար Փինքէրքոն, Հարթ, Մեռեալներու Տունը, Տաստայէվսքի (*Հայրենիք*), Անժ Փիքու, Ալեքս. Տիւմա (*Հայրենիք*), Տավիտ, Փոլ Պուրժէ (*Արեւելք*), Յովիանիս Զմշկիկ, Կիւտթավ Շլումպէրժէ, (1914), Իշխանն ու Աղքատը, (*Արեւ*), Սուտին Իշխանութիւնը (*Արեւ*), Յակոբայ Զրիորը, (*Արեւ*):

Թ. — ՔՐՈՆԻԿՆԵՐ

Անթիւ են իր քրոնիկները, զորս կ'արտադրէր Հարթէ Հարթ կամ օրը օրին, զանազան խորագիրներու տակ, — «Առողջան տոմսակ», «Աւուր պատշաճի», «Իրիկուան

տոմսակ», «Վերնատունէն», եւ այլն։ Այդ քրոնիկները ցանցնած է Հայրենիքի, Արևելքի, Ազատամարտի, Ժամանակի, Վերջին Լուրի, Շաւիլի, Նոր Արշալոյսի, Նոր Փիւնիկի, Հայ Կեանիքի, Արեւի, Շանքի մէջ եւ այլուր։

Ժ. — ՕՏԵԱՆ ՕՏԱՐ ԼԵԶՈՒԹՅ

Օտեանի կարդ մը գործերը թարգմանուած են ֆրանսէրէնի, յունարէնի, թուրքերէնի, ոռուսերէնի եւ պուլկարէրէնի։

* * *

Ինչ որ կը տրուի այս հատորով, — ճիշդ է թէ անոնք Օտեանի ամէնէն դեղեցիկ ստեղծագործութիւններն են, — սխալ պիտի ըլլար կարծել թէ կը ներկայացնեն բեղուն երգիծաբանին տաղանդը։ Դժբախտաբար, Օտեան չունէր մշակումի ճաշակը, այնպէս որ դրած է առանց յատակագծի, առանց ձեւելու, յաճախ առանց ներշնչումի՝ եթէ կարելի է գործածել այս դասական բառը։ Ահա թէ ինչո՞ւ, Օտեանի տաղանդը չափելու համար, անհրաժեշտ է աչքի առջեւ ունենալ իր ամբողջական գործը եւ յետոյ տաշել, անընդհատ տաշել՝ դոնելու համար կորիզը, ուր պահուած է անգուգական տաղանդ մը։

Սկեպտիկի դասն աւիշը քիչ մը շատ կոտած էր իր ճաշակը, այնպէս որ պէտք չէ զարմանալ՝ երբ այս վաւերական եւ օժտուած երգիծաբանը կը ստորագրէ քիչ մը շատ անհամ տոմսերու տակ։ Օտեան չուզեց երեւնալ կոճկուած, տաշուած, ջնարակուած, — իր վարդապետութեամբ՝ կեանքը յաճախ երկար մանրամասնութիւններու բեռ մը կը նետէ վրան ու կը ծածկէ աստուածային հուրը։ Այդպէս են եւ իր ստեղծագործութիւնները, —

արուեստի անմահ բաբախումը գտնելու համար իր գործերուն մէջ՝ դուք ստիպուած էք փորել այն դէզը, որ գոյացեր է էջ լեցնելու ցանկութեամբ։ Իր տիպագրութիւնն ալ կը մատնէ այդ թէքնիքը։ Որքան ալ անմահ ըլլան, իր հերոսները քիչ մը շատ կապուած են իրենց ժամանակին՝ մանրամասնութիւններու բեռովվը, զոր կ'առնեն օրուան կեանքէն։

Իրեւ մարդ, եթէ հաւատաւոր մը չեղաւ, — հեգնական անտարբերութիւն մը, եթէ ոչ արհամարհանք, ցոյց կուտար գաղափարներու եւ խտէալներու պայքարին, — Օտեան միշտ պարկեշտ մնաց նկարագրով։ Ոչ իր տաղանդը ծախու դրաւ, ոչ ալ պարծենցաւ իր տաղանդով։ Համեստ էր հոգիով։ Համեստ ապրեցաւ եւ կեանքով, մինչ կընար բարեկեցիկ կեանք մը ունենալ, չնորհիւ իր ընտանիքին ընկերային դիրքին ու յարաբերութիւններուն։

ՆԱՀԱՏԱԿ ԳՐԱԳԻՏՆԵՐՈՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ

ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ ՄԸ Ի ԾԱՊԼՎԱՐ

ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ ԸՆԿԵՐ Բ. ՓԱՆՉՈՒՆԻՔ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՏԻԾԵՐ ԸՆԿԵՐ Բ. ՓԱՆՉՈՒՆԻՔ ՄԱՍԻՆ

10/26 - 2012

Կեանք մը որ տակաւին իր ամբողջ շրջափոխութիւնները չէ կատարած եւ իր գործունէութեան ամէնէն եռանդուն փուլին մէջ կը գտնուի, կարելի չէ լիակատար կերպով ներկայացնել, եւ նոյն իսկ անխոհեմ յանդէնութիւն մըն է այդպիսի կեանքի մը վրայ դատաստան կտրել կամ կարծիք յայտնելը:

Ուստի, ապագայ կենսագիրներու թողլով ընկեր Փանջունիի վարքն ու արարքները իրենց ամբողջութեամբը ներկայացնելու այնքան դժուար, որքան անհրաժեշտ աշխատութիւնը, ես պիտի դոհանամ կցկտուր ծանօթութիւններ տալով միայն Ընկերվարական Նամականիի հերոսին վրայ, պարզապէս նիւթեր՝ ապագայ կենսագիրներու գործը դիւրացնելու նպատակով եւ կամ սանկ ըսեմ՝ ատաղձներ այն յիշատակարանին համար զոր երախտագէտ Հայութիւնը օր մը պիտի կանգնէ իր Հերոսներուն ի պատիւ:





ՀՆԿԵՐ Բ. ՓԱՆԶՈՒԻՆԻ

կան սնունդին։ Ես, ինչպէս ըսի, չեմ ուզեր ուեւէ դատաստան ընել, այլ կը բաւականանամ իրողութիւնները արձանագրելով։

Փանջունի շատ ուշ լեզու ելած է, բայց անդամ մը խօսիլ սկսելէ ետքը, ա'լ բերանը դիւրաւ չէ գոցած։ Քանի կը մեծնար ա՛յնքան կ'աճէր իր խօսելու կատաղութիւնը, այն աստիճան որ խեղճ հայրը ստիպուեցաւ բժիշկի մը դիմել այդ անսովոր երեւոյթին դարման մը գըտնելու համար։ Բժիշկը քննեց տղան, լեզուն նայեցաւ, կոկորդը նայեցաւ, աչքերուն նայեցաւ եւ վճռաբար ըստ հօրը։

— Ճար ու դարման չկայ, այս տղան միշտ պիտի խօսի։

Ծնկեր Փանջունի
կրտսեր զաւակն է Տը-
րապիզոնցի ընտանիքի
մը, ու ծնած է 1875ին։
Մայրը տղաբերքի հե-
տեւանքով մեռած է,
առանց կարենալ սնու-
ցանելու իր երախան
զոր մեծցուցած են այ-
ծի կաթուլ։ Ուրիշ կեն-
ապիր մը դուցէ հետե-
ւութիւններ հ ա ն ե լ
փորձէր այս աննշան
դիպուածէն՝ ը ն կ ե ր
Փանջունիի ունայնա-
մտութիւնն ու թեթե-
ւութիւնը վերաբերելով
իր առած այդ սկզբա-
կան սնունդին։ Ես, ինչպէս ըսի, չեմ ուզեր ուեւէ դա-
տաստան ընել, այլ կը բաւականանամ իրողութիւնները արձանագրելով։

— Բայց տանը մէջ ա'լ դիմացուելիք բան չէ։
— Բամպակ թխեցէք ականջնիդ, այս է միակ մի-
ջոցը, պատասխանեց բժիշկը։

Հակառակ իր խօսելու մարմաջին՝ փոքրիկն Փան-
ջունի յաճախ սխալ կը դործածէր բառերը, բոլորովին
աղաւաղելով անոնց նշանակութիւնը։ Օր մը սեղանի մը
վրայ դրուած արժէքաւոր անօթ մը կ'առնէ ու գետին
նետելով ջարդ ու փշուր կ'ընէ։

Հայրը, իրիկունը դործէն վերադարձին, կը տեսնէ
եղածը, եւ տղան կանչելով ու անօթին կոտրուանքները
ցոյց տալով կը դոչէ։

— Ծօ', ի՞նչ ես ըրեր անօթը։
— Շինեցի, հայրիկ, կը պատասխանէ փոքրիկ Փան-
ջունի միամիտ համոզումով մը։

— Ծօ ի՞նչ շինել, կոտրեր ես, չան զաւակ։
— Զէ՛, հայրիկ, շինեցի, կը պատասխանէ տղան։

Ի զուր հայրը երկար բարակ կը բացատրէ թէ՛ երբ
առարկայ մը գետին նետելով կտոր կտոր կ'ընենք, այդ
գործողութիւնը «շինել» բայցով չի բացատրուիր՝ այլ
«կոտրել»։ Անկարելի եղաւ բառադիտական այդ նըրու-
թիւնը հասկցնել Փանջունիի որ շարունակեց տանը մէջ
դտնուած դաւաթները, պնակները, շիշերը կոտրաւել եւ
ամէն անդամ որ «ի՞նչ կ'ընես կոր» ըսելով զինքը կը
յանդիմանէին, անդրդուելի ու անխոռվ կը պատասխա-
նէր։

— Կը շինեմ կոր։

Դպրոցին մէջ Փանջունի ընկերներուն հետ վիճելով
ու ճառ խօսելով ժամանակ կ'անցընէր, իսկ դասերուն
ընաւ չէր հետեւեր, չհաւնելով կամ դասատուին, կամ

դասագրքին, կամ դասարանին եւ կամ տետրակին ու
ծայրին:

Օր մը թուաբանական խնդրի մը մասին վէճ ունե-
ցաւ իր դասընկերներէն մէկուն հետ:

— Հինգ անդամ հինգ՝ քսանըհինգ կ'ընէ, կ'ըսէր
ընկերը որ ողջամիտ տղայ մըն էր եւ որ յետոյ հարուստ
վաշխառու մը եղաւ:

— Զէ՛, կը յամառէր Փանջունի, հինգ անդամ հինգ՝
յիսուն կ'ընէ:

— Ո՛չ, քսանըհինգ կ'ընէ:

— Յիսուն կ'ընէ:

Միւսը տեսնելով որ դժուար է — ինչ կ'ըսե՞ս՝ ան-
կարելի է — խօսք հասկցնել Փանջունիի եւ չուզելով
անօդուստ կոխւի մը տեղի տալ, հաշտարար ոդիով մը
պատասխանեց.

— Լա՛ւ, ես թո՛ղ այնպէս գիտնամ թէ՝ քսանըհինգ
կ'ընէ, դուն ալ այնպէս դիտցիր թէ՝ յիսուն կ'ընէ, ու
ա՛լ չխօսինք այդ մասին ու երթանք միասին դնդակ խա-
ղանք:

— Զըլլար, պնդեց Փանջունի, պէտք է որ նախ հա-
մոզուիս թէ հինգ անդամ հինգ՝ յիսուն կ'ընէ:

— Այդ անկարելի է:

— Անպատճառ պէտք է որ քեզ համոզեմ, շարու-
նակեց մեր հերօսը հետզհետէ բորբոքելով:

— Երբեք չեմ կրնար համոզուիլ եւ դուն ալ երբեք
չես կրնար ապացուցանել ըսածդ, պատասխանեց ապա-
դայ վաշխառուն:

— Զեմ կրնար ապացուցանե՛լ, չեմ կրնար ապա-
ցուցանե՛լ, մոնչեց Փանջունի, ա՛ռ քեզի համոզիչ ա-
պացոյց մը:

Եւ գետնէն քար մը առնելով իջեցուց խօսակցին
գլխուն:

Գլուխը վիրաւորուեցաւ թեթեւապէս, բայց տղան
կրկին համոզում չգոյացուց թէ՝ հինգ անդամ հինգ կըր-
նայ յիսուն ընել, եւ լալով դնաց բողոքել վարժապետին:

Վարժապետը իսկոյն կանչեց Փանջունին եւ՝

— Ինչո՞ւ ընկերոջդ գլուխը պատռեցիր, գոչեց
ձայնով մը որով Եհովա ըսած էր Կայէնին. «Ի՞նչ ըրիր
քու եղբօրդ»:

— Զինքը համոզելու համար, պատասխանեց ապա-
դայ փրօփականտիսթը հանդիսաւորապէս:

Հայրը տեսնելով իր զաւկին այս տարօրինակ ըն-
թացքը, յաճախ ակռաները կրծտելով կը պոռար.

— Փորձա՞նք պիտի ըլլաս, փորձա՞նք...

Խեղճ մարդը կը սխալէր իր լաւատեսութեանը մէջ:
Փանջունի փորձանք չպիտի ըլլար, այլ յեղափոխական
գործիչ:

* * *

Տասնեւեօթը տարեկան պատանի մըն էր Փանջունի
երբ իր հայրը կորսնցուց: Երէց եղբայրը որ իրմէ տասը
տարեկան մեծ էր, արդէն իսկ ամուսնացած, տուն տեղ
եղած վաճառական մըն էր, բաւական լաւ դիրքի տէր:
Իր հօր մահուընէն հազիւ ամիս մը ետքը Փանջունի ար-
դէն դժտուած էր անոր հետ եւ տունը թողած՝ պահան-
ջելով իր ժառանգութեան բաժինը: Եղբայրը, առանց
դժուարութեան, անմիջապէս յանձնեց 300 ոսկիի մօտ
գումար մը որ Փանջունիի ամբողջ ժառանգութիւնը կը
ներկայացնէր:

Մեր պատանին դրամն առնելով Պոլիս եկաւ, երեք տարի անձնդիւր կեանք մը վարեց եւ օր մըն ալ տեսաւ որ փարա մը չէ մնացած դրապանը։ Այն ատեն եղբայրասիրական գդացումները արթնցան իր մէջ, գորովալից նամակ մը զրեց Տրապիզոն եւ իր կարօտակէդ սէրը յայտնելով՝ ճամբու ծախք մը ուզեց իր հայրենի երեխը վերադառնալու համար։

Եղբայրը «կորուսեալ էր եւ գտաւ»ի տպաւորութեան տակ՝ խսկոյն պէտք եղած գումարը զրկեց Փանջունիի որ երկու շաբաթ ետքը հասաւ Տրապիզոն ու ինկաւ եղբօրը թեւերուն մէջ։

Փանջունի տեսաւ որ երեք տարուան միջոցին իր անդրանիկը կրկնապատկած էր հարստութիւնը եւ շնորհիւ իր գործունեայ աշխատասիրութեան, քաղաքին մէջ առաջնակարգ դերք մը գրաւած։ միւս կողմէ տեսաւ նաեւ որ այդ ժամանակամիջոցին ինք փնացուցած էր ամբողջ իր ժառանգութիւնը եւ այսօր փարա մը չկար գրապան։ Այս երկու տեսողութիւնները իրարու մօտեցուց, իրար խառնեց, բաղադրեց, քննեց, տարբալուծեց եւ այդ քիմիկան գործողութիւններէն իր մէջ ծնաւ Ընկերվարութիւնը։

Այն ատեն ըմբռնեց թէ ի՞նչ դժոխային անարդարութիւն էր քափիթալիսմը, եւ թէ ի՞նչ հրամայողական պահանջք էր հարստութեան հաւասար բաժանումը։ Փանջունի գտած էր իր Դամասկոսի ճամբան, «Եղիցի Լոյս»ը հնչած էր մտքին մէջ։

Ընկերվարական էր։

Ու ա՛լ Տրապիզոնի խաղաղիկ սրճարաններուն մէջ, առտուընէ մինչեւ իրիկուն, կը լսուէր Փանջունիի ձայնը որ կը գոռար, կ'որոտար ընկերային անիրաւութեանց դէմ

որ կը սպառնար կործանել, բնաջինջ ընել ամէն բան։ Վեհերոտները սարսափիահար մտիկ կ'ընէին իրեն, միամիտները ապշահար կը նայէին այդ անդադար խօսող մարդուն, իսկ խելացիները քիթերնուն տակէն ինդալով՝ կ'եթային իրենց գործին։

Իսկ ա՛ն կը խօսէր, կը խօսէր ու կը խօսէր։

Խեղճ եղբայրը՝ շուարած, շմբրած՝ չէր գիտեր ինչպէս ազատիլ այս փորձանքէն։

Վերջապէս օր մը ըսաւ Փանջունիի։

— Եղբայր, բան մը մտածեցի։

— Զարմանալի՛ բան, պատասխանեց մեր հերոսը։

— Ինչո՞ւ, ի՞նչ բան զարմանալի կը գտնաս, հարցուց միւսը չկործած։

— Զարմանալի է որ բան մը կրցած ես մտածել, ըսաւ Փանջունի, որովհետեւ դուք վաճառականներդ, քափիթալիսթներդ մտածելու կարողութիւն չունիք։

Փանջունի այսպէս սիրուն խօսքեր շատ ունէր եւ եղբայրը վարժուած էր անոնց, ուստի առանց բարկանալու իր խօսքը շարունակեց։

— Մտածեցի որ փոխանակ հոս պարապ ժամանակ անցնելու, քեզ Մարսիլիա վաճառականական դպրոցը դրկեմ, ուր երեք տարի մնալով կրնաս վկայականդ առնել եւ հոս վերադառնալ ուր միասին կը շարունակենք իմ գործ։

Եւրոպայի մէջ ուսանող ըլլալու գաղափարը ժըպտեցաւ Փանջունիի որ անմիջապէս պատասխանեց։

— Շատ լաւ գաղափար է եւ սիրով կ'ընդունիմ։

Ամիս մը վերջը Փանջունի երկու ձեռքը մէջմէկ պայտակ ժօլիթի քարափը կը դնէր ոտքը։

Շաբաթ մը մնաց Մարսիլիոյ մէջ, Վաճառականա-

կան դպրոցը այցելեց, ծրագիրը աչքէ անցուց, դործին չեկաւ ու շոգեկառք նստելով զնաց ժընէվ ուր արձանագրուեցաւ իբրեւ Սօցիալ Գիտութիւններու ազատ ուսանող:

* * *

Սօցիալ Գիտութիւններու ազատ ուսանողի կեանքը չորս տարի տեւեց եւ այդ չորս տարուան միջոցին Փանչունի հինգ անդամ գնաց այն համալսարանը ուր արձանագրուած էր:

Առաջին անդամ՝ սուելու համար պատմութեան դասախոսը որ ֆրանսական Մեծ Յեղափոխութիւնը գովարանած էր, պախարակելով սակայն Պապէօֆի եւ իր կուսակիցներուն յախուռն գաղափարները: Երկրորդ անդամ գնաց ցոյց մը ընելու համար ընկերվարական դասախոսի մը դէմ որ քննադատած էր ոուս ոչնչականութիւնը: Երրորդ անդամ գնաց բողոքելու խմաստասիրութեան ուսուցչին դէմ՝ որ պէտք եղած խանդավառութիւնը ցոյց չէր տուած Քրոփոթքինի վարդապետութեանց: Չորրորդ անդամ՝ ձմեռ ատեն՝ գնաց համալսարան որովհետեւ իր սենեակին մէջ ցուրտ էր ու վառելանիւթը կը պակսէր եւ դարեջրատուն երթալու դրամ չունէր քովը: Եւ վերջապէս՝ հինգերորդ անդամ գնաց Սպանիացի ուտանողներու հետ ծեծ մը քաշելու ուսուցիչի մը որ Պարսելոնի անիշխանական արարքները քննադատած էր: Այս վերջին այցելութիւնը պատճառ եղաւ որ զինքը արտաքսեն համալսարանէն եւ անունը ջնջեն ուսանողներու արձանագրութեան տետրակէն:

Համալսարան յաճախած այս սուղ վայրկեաններէն դուրս, Փանչունի իր ժամանակը կ'անցընէր հայ եւ ոուս

յեղափոխական ընկերներու հետ վիճաբանելով ընկերային հարցերու մասին: Գարեջրատունները, որոնց մէջ կը լուծուէին մարդկային ընկերութիւնը տանջող բոլոր խընդիրները, իր գլուխուր կայաններն էին, իր անառիկ մարտկոցները ուրկէ կը ոմբակոծէր աշխարհի բոլոր կեղտոտ պուրժուանները, կեղեքիչ քափիթալիսթները, չխնայելով նոյնիսկ եղբօրը՝ որ կը շարունակէր ամսական երկու հարիւր Փրանք դրկել, ո'չ թէ իներ մը սպասելով Փանջունիէն, այլ որպէս զի ականջը տինձ ըլլայ:

Եւ սակայն 95ի ջարդերը վրայ հասեր էին, եղբօրը դործերը աւրուեր, ինք հալածուեր, բանտարկուեր. փճացեր էր եւ օր մըն ալ ստիպուեր էր ամէն բան թողլով կինն ու զաւակները առնուլ եւ հեռանալ Տրապիզոնէն դէպի արտասահման:

Նամակ մը ստացաւ Փանջունի որով իրեն իմաց կը տրուէր թէ այլ եւս եղբօրմէն տասը փարա յուտալու չէր:

— Կեղտո՞ւ արարած, գոչեց Փանջունի, բունցը սպասնագին դէպի վեր բարձրացնելով:

Այսպիսի ժէսթեր յաճախ ունէր մեր հերոսը, որ իր ըմբոստ խառնուածքը կը յատկանչէին:

Ամսական 200 Փրանքի այս յանկարծական դադարումը խանդարեց իր Սօցիալ Գիտութիւններու ազատ ուսանողի հանգստաւէտ կեանքը, որով կը յուսար տակաւին երկար տարիներ ապրիլ: Կամաց կամաց չքաւորութիւնը իր ժանտ երեսը ցուցուց եւ Փանջունի իր անձին վրայ ճանչցաւ բարերէ: Իր ամէն անհաճոյ երեւոյթներովը:

Իր ուսանող բարեկամները ժամանակ մը օգնեցին իրեն. բայց օր մըն ալ երթաս բարովը դրին, թէեւ շատ փափիկօրէն:

— Ինչպէս այս վաստ գրութենէն դուրս պիտի ել-
լեմ, ըսաւ այդ յուսահատական օրերուն իր բարեկամնե-
րէն մէկուն որ ուսանող, յեղափոխական եւ խմբագիր էր
միանդամայն :

— Եկո՛ւր քեզ յեղափոխական գործիչ շինենք, ըսաւ
բարեկամը. խօսելու դիւրութիւն ունիս՝ այդ բաւ է :

Ծովը իյնողը օձին կը փաթթուի, կ'ըսէ առածը,
մեր մէջ ալ կարելի է ըսել թէ՝ անօթի մնացողը յեղա-
փոխական կ'ըլլայ:

Փանջունի ընդունեց առաջարկը :

Ամիս մը ետքը մեր հերոսը ճամբայ ելաւ դէպի
Պուլկարիա «կենաց բանը» քարողելու, յետոյ անցաւ Յու-
նաստան, յետոյ՝ Եդիպտոս եւ ի վերջոյ Պարսկաստան եւ
Կովկաս : Իր տաք, համոզուած, եռանդուն ու անխոնջ
պերճախօսութիւնը կը հրդեհէր սառած հոգիները, կը
պրկէր, կը զօրացնէր թուլցած ջիղերը եւ կը խանդա-
վառէր միամիտ էռութիւնները : Իր պաշտօնն էր Փէտայի-
ներու հրոսախումբեր կազմակերպել ու զանոնք երկիր
դրկել, ինք մնալով արտասահմանի մէջ :

— Մենք ժամկոչներու կը նմանինք, կ'ըսէր յաճախ,
զանդակահարութեամբ ուրիշները կը հրաւիրենք ու եկե-
ղեցի կը մտցնենք, իսկ մենք դուրսը կը մնանք :

Ազնի՛ւ անձնազոհութիւն :

Փանջունի յեղափոխական այս տեսնդուտ գործունէու-
թեան մէջ էր պարսկական սահմանագլխին վրայ, երբ
յանկարծ լուր ստացաւ թէ Սահմանադրութիւնը հռչակ-
ւած է Թուրքիոյ մէջ, բանտարկեալներու ընդհանուր
ներում եղած է, մամուլի պատութիւն տրուած է եւ թէ
ամէն մարդ ազատորէն կրնայ թուրքիա մտնել :

Այս անակնկալ եղելութիւնները ափ ի բերան թո-
ղուցին մեր հերոսը :

— Մեր գործը պրծաւ, մտածեց մելամաղձուտ մտա-
տանջութեամբ մը :

Սակայն Փանջունի իր յատակատեսութեանը մէջ կը
սիալէր : Բուն գործը հիմա պիտի սկսէր :

Երբ քանի մը շաբաթ ետքը ստացաւ Կ. Պոլսոյ հայ
թերթերը, երբ տեսաւ կուսակցութիւններու խելայեղ
արշաւանքը հնոյն Բիւզանդիոնի վրայ, երբ կարդաց
խօսուած ճառերը, Պոլսեցիներու միամիտ խանդավա-
սութիւնը, «Ազատութիւնը մենք բերինք » ի հրաշալի
դիւտը, աւելի սահմոկեցուցիչ քան Մառքօնիի անթել
հեռագիրն ու Ռէօնթէկնեան ճառագայթները, այն ատեն
մեր գործիչը լայնեզր գլխարկը գլուխը դրաւ, պայուսա-
կը ձեռք առաւ եւ օր մըն ալ օդաքարի մը պէս ինկաւ Պո-
լիս, ինքն ալ իր կարգին քիչ մըն ալ ճաթեցնելու համար
տրամադիր գլուխները :

Բայց տեղերը բանուած էին, ուշ հասած էր Օֆէն-
պախի brigands երու զինուորներուն պէս : Իրա՛ւ է որ
ութը տասը «դասախօսութիւններ» ըրաւ թաղերու մէջ,
իրա՛ւ է որ Բարիզի Կոնկրէսին հրաշքները հագներգեց
Վոսփորի երկու ափերուն վրայ, բայց, ափսո՞ս, ականջ-
ները ա՛լ սկսած էին յափրանալ : Բաց աստի, իր պերճա-
խօսութիւնը չէր հասներ Ակնունիներու եւ Շահրիկեան-
ներու պերճախօսութեան կրակին որուն վարժուած էին
Պոլսեցիները, ինչպէս անշուշտ մենք՝ մեղաւորներս ալ՝
օր մը պիտի վարժուինք Դժոխվի կրակին . ուստի իր
խօսքերը յաճախ ցուրտ տպաւորութիւն մը կը թողէին
ունկնդիրներուն վրայ :

Այն ատեն Փանջունի վճռական որոշում մը տուաւ :

Պոլիսէն աւելի՝ հարկ անհրաժեշտ էր գաւառը դարթեցնել, լուսաւորել, յեղափոխել:

Ու մեկնեցաւ Արաբկիր, անկէ Ծապլվար ուր հաստեց իր գործունէութեան կեղրոնը:

Յետագայ նամակներուն մէջ պիտի տեսնենք այդ գործունէութիւնը որ զուրկ չէ տեսակ մը վեհափառութենէ, գոնէ ոմանց համար:

ՆԱԽԱԲԱՆԻ ՏԵՂ

Եթէ բանագող մը ըլլայի, պէտք չպիտի գտայի այս քանի մը բացատրողական տողերը գրելու եւ ձայն չհանած՝ պիտի որդեղը չի այն նամակներու ծրարը, որ գիպւածին մէկ քմահաճոյքովը ձեռքս հասաւ եւ զոր «Բիւղանդիոն»ի^(*) միջոցաւ կ'ուզեմ պարբերաբար հաղորդել հասարակութեան:

Տասներկուքի չափ են այն նամակներն եւ տարուան մը միջոցին գրուած: Բնադրին մէջ լեզուն Կովկասահայ բարբառին աւելի կը մօտենայ եւ գրեթէ կը նոյնանայ անոր հետ. սակայն ես հարկ համարեցի լնթերցողներու դիւրութեան համար, մեր աշխարհաբարին վերածել կարելի եղածին չափ: Արդէն դրողը «աշլամա» ոռոսահայ մըն է՝ ծնած ըլլալով Թուրքիոյ մէջ:

Եթէ այս նամակները իբրեւ երդիծական գրուածք մը կարդացուին՝ յանցանքը ապահովաբար գրողինը չէ. քանզի բո՛ւն հեղինակը ամրակուու սկզբունքներով շաղախուած, թունդ հաւատացեալ Հայ լնկերվարական յե-

*) Այս նամակները առաջին անգամ «Բիւղանդիոն»ի մէջ հրատարակուած են:

Դափոխական մըն է, Արջութեան ծայրագոյն սահմաններն
հասած ու հոն պատնիշացած:

Նամակները ուղղուած կ'երեւան կեդրոնական մարմ-
նի մը, որուն կողմէ զրկուած կը թուի նամակադիրը,
իր առաքելական պաշտօնը կատարելու համար:

ԵՐՈՒԱՆԴԻ ՕՏԵԱՆ

Ա.

ԾԱՊԼՎԱՐ, 15 Սեպտ. 1908

Սիրելի Բնկերներ,

Զեր հրահանդներն ստանալուս պէս փութացի Արաբ-
կիրէն ճամբայ ելլել եւ չորս օր ճամբորդելէ ու Շեփիկ,
վաղէն, կրանի և
Մաշկերտ գիւղերը
մէյմէկ գիշեր մնա-
լէ ետքը հասայ
Ծապլմար գիւղը,
որ ըստ իս մ ե ր
բրօքականակն հա-
մար յարմարագոյն
վայրն է:



ՏԵՐ ՍԱՀԱԿ

Կեցիկ, ժիր ու աշխատող են, հին բէժիմէն դժբախտա-

Ծապլմ ա ր՝
քսան տունէ բաղ-
կացած՝ զուտ հայ-
կական գիւղ մըն է,
գեղեցիկ ու բարե-
բեր հովիտի մ ը
մէջ, ուրկէ կ'անցնի
Զրբերիկ գետակը:
Գիւղացիները ընդ-
հանրապէս բարե-

բար շատ չեն տառապած եւ այս պատճառաւ նոր բէժիմը իրենց վրայ մեծ ներդործութիւն չէ ըրած։ Ատեն ատեն հալածանքներ կրած են միայն մօտակայ Քոմրաշ գիւղի Քրդերուն կողմէ, որոնք աւազակաբարոյ մարդիկ են։

Պէտք չկայ ըսելու որ Ծապլվար գիւղը խոր տղիթեան մէջ թաղուած է, մանաւանդ ընկերվարական հարցերու մասին։ Տասնըհինգ օր է որ այստեղ հասած եմ, եւ հասած օրիս հետեւեալ օրն իսկ սկսած եմ բրօբականտի, եւ տակաւին կարող չեմ եղած այդ գիւղացիներու մտքին մէջ մտցնել քափիթալիսմի գործած ոճիրները, բանւորական սէնտիքաներու հրամայողական անհրաժշտութիւնը, պրոլէտարիատի պահանջները, եւն։ Բայց ես չեմ յուսահատած, ընդհակառակը իրենց այդ անհասկացողութիւնը աւելի եռանդ կուտայ ինծի բրօբականտը առաջ տանելու։

Ինչ որ իմ պաշտօնս կը գժուարացնէ, այն է թէ Ծապլվարի մէջ գոյութիւն չունին դասակարգային որոշ բաժանումներ, կամ մանաւանդ լաւագոյն է ըսել թէ՝ այդ բաժանումներու գիտակցութիւնը չունին։ Իմ գործս պիտի ըլլայ նախ կազմակերպել դասակարգային բաժանումները, անոնց ցոյց տալ իրենց յատուկ պահանջումները, եւ գանոնք ձեռք բերելու միջոցները։

Պէտք է կոռուի պատրաստել այդ տղէտ գիւղացիները, եւ այդ հեշտ գործ չէ։

Երկու շաբաթէ ի վեր անընդհատ շփման մէջ եմ գիւղի բոլոր բնակիչներուն հետ, եւ կը ջանամ որոշել եւ ընտրել բոլոր այն անձերը որոնցմով կարող պիտի ըլլամ ստեղծել դասակարգային որոշ շարքերը։

Գիւղն ունի մի ծերուկ քահանայ՝ Տէր Սահակ այդ կը ներկայացնէ միջնադարեան կղերականութիւնը, խա-

ւարսամտութիւնը, «օպսքիւրանթիսմ»ը։ Անհրաժեշտ է տաք պայքար մղել իրեն դէմ։

Ծապլվարի պուրժուազիան կը ներկայացնեն Ռէս Սէրքօն եւ իր մէկ քանի արբանեակները։ Այդ կեղտոտ պուրժուան ունի երեք արտ, երկու կով, մէկ էշ եւ երկու այծ, արդիւնք՝ խեղճ անինչք գիւղացիներու վրայ ի գործ գրուած գարաւոր կեղեքումներու։ Զարմանալի է որ այդ մարդը գիւղին մէջ բարի համբաւ կը վայելէ եւ կը յարգուի ամէնէն, նոյն իսկ անոնց կողմէ որոնք պէտք էր որ իր բնական թշնամիները ըլլային։ Տեսէ՛ք թէ ո՛ր աստիճան տղիտութեան մէջ թաղուած են այդ խեղճերը։ Հայրկ է ըսել որ Տէր Սահակը շաբաթը մէկ քանի անգամ կը ճաշէ Ռէս Սէրքոյի տունը։ — Յաւիտենական դինակցութիւնը քափիթալիսմի եւ կղերականութեան՝ ընդդէմ ընչազուրկ գասակարդին։ — Բայց համբերութիւն, ամէն բան իր տեղը կուգայ։

Ծապլվարի մէջ բանուոր դասակարգը կը բաղկանայ պայտար Մկոյէ, որ միանգամայն երկաթագործ է։ Երկու օր առաջ Ռէս Սէրքոյի էշուն պայտն ինկած էր, եւ կեղտոտ պուրժուան ստիպուեցաւ գիմել Մկոյին։ Շատ ջանացի որ Մկոն համոզեմ ընդհանուր գործադուլ հրատարակելու եւ Ռէս Սէրքոյի էշն առանց պայտի ձգելու։ Այդ՝ շատ ցնցող տպաւորութիւն պիտի գործէր առ հասարակ առանձնաչնորհեալ դասակարգերուն վրայ։ Բայց գժբախտարար Մկօ ընդդէմացաւ, որովհետեւ տակաւին բաւականաչափ բրօբականու չէի արած։ Հոդ չէ, եթէ այս անգամ չյաջողուեցաւ՝ ուղիւ անդամ կը յաջողուի։ Ընդհանուր գործադուլն անհրաժեշտ է Ծապլվարի մէջ, մեր բրօբականտի գործնական արդիւնքը ցոյց տալու համար։

Վաղը կը մեկնիմ Քոմրաշ գիւղը, ուր պիտի

մնամ մէկ քանի օր, համերաշխութիւն քարողելու հայերու
եւ Քրդերու միջեւ: Քրդերը մեր բնական նեցուկներն են.
հարկ է հաշտ երթալ անոնց հետ եւ ի հարկին գործածել
զանոնք մեր քարողած սկզբունքներու յաղթանակին հա-
մար: Բայց ասոնք ապագայի հարցեր են:

Մի քիչ փող դրկեցէ՛ք ինձ:

Բ.

ԾԱՊԼՎԱՐ, 2 Հոկտեմբեր 1908

Սիրելի ընկերներ,

Ուրախ տրամադրութեան տակ կը գրեմ այս նա-
մակս եւ կը յուսամ որ յաջորդով կարող պիտի ըլլամ
փաստացի իրողութիւններ
հաղորդել ձեզ: Առաջին քայ-
լերն իրա՛ւ դժուարին եղան,
բայց ապագայի մասին չատ
մեծ յոյս ունիմ:



ՌԵՍ ՍԵՐԻՔԸ

Քոմըաշ գիւղի Քրդերը
լաւ ընդունելութիւն ըրին
ինձ. չորս օր մնացի իրենց
մօտ եւ տեսայ որ լաւ տրա-
մադրութիւններով լարուած
են: Էքսբրօքիացիայի տե-
սութիւններս չատ աւ եւ ի
գիւրաւ ըմբռնեցին քան մեր
ապուշ Ծապլվարցիք: Պատ-
րաստակամութիւն յայտնե-
ցին անմիջապէս գործնական
հողի վրայ դնելու հարուստ
պուրժուա կեղեքիչ գիւղացի-

ներու ինչքերը բռնի ուժով գրաւելու հարցը։ Հսկ թէ չպէտք է աճապարել եւ թէ հարկ է մի քիչ սպասել։ Յամենայն դէպս Քոմը զիւղը մեր փրօփականուայի համար մի ամուր կուռան է։

Մի հիանալի դէպս ցոյց կուտայ թէ ի՞նչ հզօր նը-կարագրի տէր են այդ քրդերը։ Զիս չորս օր ամենամեծ պատուով հիւրընկալելէ եւ մեծարելէ ետք, երբ ձիով առանձին կը վերադառնայի Ծապլվար, Քանը Օվա կոչ-ւած ձորին մէջ, նոյն այն քրդերն որոնց տանը մէջ հիւր եղած էի, յանկարծ՝ զինեալ՝ վրաս յարձակեցան եւ դիս կողոպտեցին՝ գրեթէ մօրէ մերկ ձգելով։

— Բայց ինչո՞ւ ձեր մօտ գտնուած առենս զիս չի թալեցիք, հարցուցի զարմացած։

— Այն ատեն մեր հիւրն էիր, պատասխանեց Քէլէշ Մըկօ տանուտէրը, բայց անդամ մը որ գիւղէն հեռացար, այլեւս եղար մեր որսը։

Այս պատասխանը իր մէջ կը պարունակէ մի սկըդ-բունքային խորին հարց որ արժանի է լուրջ խորհրդա-ծութեան։

Վերադառնալով Ծապլվար, եռանդով շարունակեցի միսիս։ Այժմ ունիմ իմ մօտ մի ջերմ հաւատացեալ կուսակից որը մօտաւոր ապադային կարող է լինել մի մեծ ուժ։ դա ծանօթ է գիւղին մէջ իեւ Աւո անունով։ Տասնըութը տարեկան մի կտրիճ երիտասարդ է իեւ Աւո, որ հօրենական տունէն արտաքսուած է մի շարք պատ-ճառներու համար որոնք մեզ չեն հետաքրքրեր։ Ծապլ-վարցիք ընդհանրապէս վատ վերաբերմունք ունին այդ երիտասարդի մասին՝ զոր կը նկատեն իրրեւ յիմար եւ անբարոյ։ Դա արդիւնք է միջնադարեան կղերական ողիի՝ միացած պուրժուազիական անձուկ ըմբռնումներու հետ։

Որովհետեւ նա տանտէրներու բացակայութեան ժամա-նակ անոնց տունէն մի քանի իրեղէններ վերցուցեր է։ որովհետեւ նա դաշտին մէջ առանձին հանդիպելով Կըր-պօէնց Սեխոյի աղջկան՝ բնական պահանջքէ մղուած՝ ա-նոր հետ յարաբերութիւն է մշակեր։ որովհետեւ Տէր Սահակէն փող պահանջնելով՝ այդ սեւհողի կղերամիտը մերժեր է տալ եւ իեւ Աւո անոր ըմբռութիւնը պատ-ժելու համար քարկոծեր է զայն, եւն. եւն., այժմ այդ խեղճ տղան կը նկատուի իրրեւ մի տեսակ յիմար չարա-գործ եւ անոր դէմ սարքուած է հալածանք եւ դաւա-գրութիւն։ Միշտ միեւնոյն պատմութիւնը։ կա'մ պէտք է խոնարհ ստրուկ դառնալ կեղտոտ պուրժուաներու եւ գը-լուխ ծուել անոնց կեղեքիչ նախապաշարումներուն եւ կամ հալածուիլ այդ վոհմակներու կողմէ։ Բայց վերջը խըն-դացողը լաւ պիտի խնդայ, կ'ասէ Փրանսական առածը։

Առաջին բովէն տեսայ որ իեւ Աւո մի լաւ խմոր էր եւ կարելի էր օգուտ քաղել իրմէ։ անմիջապէս հրաւիրե-ցի իմ մօտ, խրատեցի, հրահանդեցի, քարոզեցի եւ այժմ նա դարձաւ մի կատարեալ յեղափոխական ընկերվարա-կան։ Ծապլվարի յեղափոխական գործոն շարքերուն մէջ կարեւոր գեր կատարելու կոչուած է իեւ Աւո։

Անցած օր Քոմը զիւղէն երկու քուրդ փոխադարձ այցելութեան եկած էին ինձ մօտ։ Տանս մէջ զիրենք պատուասիրելու համար բաւականաչափ ճաշ չի կար։ այս պարագան յայտնեցի իեւ Աւոյի։

— Դու հոդ մի՛ տանիր, պատասխանեց եւ մեկնե-ցաւ։

Քիչ յետոյ երկու պատուական հաւերով վերադար-ձաւ։ Երկուքն ալ խաչեցինք ու կերանք, երբեք այդպի-սի համեղ հաւու միս չէի կերած։ Ես եւ երկու հիւրերը

ստիպեցինք Աւօն որ մեղ յայտնէ թէ ո՞ւսկից բերած էր
այդ հաւերը:

— Թէս Սէրքոյի պարտէդէն գողցայ, ըսաւ Աւօ,
ճիշտ այն միջոցին ուր իր կինն ու երկու հարսերը հոն
էին:

Շատ ծիծաղեցանք ամենքս ալ: Քրդերը հիացած
մնացին Աւոյի ճարպիկութեան վրայ. իսկ ես կը մտածէի
որ վերջապէս դարաւոր հարստահարեալն էր որ կ'ընդ-
վրդէր եւ գործնականալէս կը ջանար տիրանալու իր իրա-
ւունքին:

Մապլարի մէջ մեր կուսակցութեան յարած է նաեւ
Սմենց Վարդանը: Դա Թէս Սէրքոյի մշակներէն մին է,
զոր անցած օր այդ կեղտոտ արարածը ճամբեր է, ամբաս-
տանելով զինքը թէ՛ իբրեւ զող եւ թէ իբրեւ ծոյլ: Երբ
իրողութիւնը իմացայ, անմիջապէս իմ մօտ հրաւիրեցի
Վարդանը եւ ստիպեցի որ տեղի չլ տայ ու բռնի պահան-
ջէ որ զինքը կրկին քովը առնէ: Անկարելի եղաւ համո-
գել:

— Ո՛չ, ըսաւ, աւելի լաւ է որ ներում խնդրեմ, Տէր
Սահակի միջնորդութեան դիմեմ, որպէս զի ինձ համար
բարեխօսէ, Թէս Սէրքօ չար մարդ չէ եւ ինձ կը ներէ:

Տեսէ՛ք թէ ո՞ւր հասած է ստրկամտութիւնը:

Ժամերով համոզեցի որ ետ կենայ այդպիսի ստոր
միջոցներէ եւ վերջապէս որոշեցինք որ ես ուղղակի դի-
մեմ Թէս Սէրքոյի եւ պահանջեմ որ պատույ ատեան մը
կազմուի խնդիրը քննելու համար: Վարդանը հաւանե-
ցաւ, բայց Թէս Սէրքօ չուզեց մեր արդար պահանջըին
գոհացում տալ: Ես ալ երէկ մի սպառնական վերջնազիր
ուղղեցի այդ կեղտոտ արարածին եւ Խեւ Աւոյի հետ զըր-

կեցի: Տէր Սահակ պիտի գայ եղեր այդ մասին ինձի հետ
բանակցելու:

Եթէ բաւարարութիւն չտրուի մեր պահանջումին,
գործերը կը մտնեն տարբեր ուղիի մէջ:

Խեւ Աւոյի համար շատ հեշտ բան է կրակի տալ
Սէրքոյի կալը կամ գոմը, այն պարագային որ նա աւելի
առաջ տանի իր բրովօքացիան. . . :

Մի քիչ փող ուղարկեցէք:

Գ.

ԾԱՊԼՎԱՐ, 20 Հոկտեմբեր 1908

Սիրելի Բնկելներ,

Ինչպէս կը կասկածէի եւ ինչպէս նախորդ նամակիս մէջ զգացուցած էի մի քիչ, թէս Սէրքօ եւ Սմենց Վարդան հարցն ստացաւ ծանր հանդամանք:

Գիտէք որ Վարդան իրբեւ մշակ կը ծառայէր թէս Սէրքօյի մօտ. եւ այս վերջինը զինք արտաքսած էր իրբեւ ծոյլ եւ անբարոյ, եւ թէ ես անմիջապէս միջամտած էի, պաշտպանելու համար ընչաղուրկ պրօլէտարիատի իրաւունքները:

Տէր Սահակ, իրբեւ միջնորդ, թէս Սէրքոյի կողմէ ներկայացաւ ինձ եւ յայտնեց թէ թէ Սէրքօ, թէեւ դըժգոհ իր մշակէն, սակայն մեղքնալով անոր խեղճ վիճակին՝ պատրաստ էր ներելու եւ կրկին քովն առնելու, պայմանաւ որ ես երաշխաւորէի անոր պարկեշտութեան եւ աշխատասիրութեան մասին:

Իսկոյն տեսայ որ միջնադարեան կղերականութիւնը, ագրարային կապիտալիսմն եւ դիւզային պուրժուա-

դիան արդէն իսկ սկսած էին տեղի տալ որոտացող յեղափոխութեան դիմաց: Դա մեր առաջին յաղթանակն էր Ծաղլվարի մէջ եւ հարկ էր կարելի եղածին չափ շատ օգտուիլ անկէց:

Սմենց Վարդան, որ ներկայ էր մեր տեսակցութեան, լսելով տէրտէրին խօսքերը, այլայլած՝ չնորհակալութիւն կը յայտնէր, բագկատարած կ'աղօթէր թէս Սէրքոյի կենաց համար եւ կ'ուզէր անպատճառ Տէր Սահակի ձեռքերն համբուրել, երախտազիտութիւն յայտնելու համար:

Լաւ մը յանդիմանեցի այդ ստրկամիտ արածը եւ հրաւիրեցի իսկոյն որ դուրս ելլէ սենեակէն:

Երբ առանձին մնացինք տէրտէրին հետ, ըստի իրեն.

— Թէս Սէրքոյի զիջողութիւնները ո՛չ մէկ կերպով բաւարարութիւն չեն տար մեր սրահանջումներուն:

— Ա՛լ ի՞նչ կ'ուզէք, պատասխանեց Տէր Սահակ, քանի որ թէս Սէրքօ կը հաւանի կրկին իր քովը առնելու Վարդանը:

— Դա երկրորդական հարց է, բացարբացի իրեն, ըստ' ուն էական հարցը սկզբունքային է:



ԽԵՒ ԱԻՕ

Եւ սկսայ իրեն պարզել գիտական սօցիալիզմի տեսութիւնները հողային հարցերու մասին։ Ըսի թէ դեղացիները իրենց տունն ու հողային սեփականութիւնը միայն այն ժամանակ կրնան փրկել՝ երբ զանոնք դարձնեն ընկերական սեփականութիւն եւ ընկերական արտադրութիւն։ իսկ անհատական սեփականութեամբ գեղացին կը դիմէ դէպի կորուստ եւ կապիտալիստական խոշոր արտադրութիւնը դուրս կը չպրտէ անոր արտադրութեան հնացած եղանակը։ Եւ յիշեցի այս մասին էնդէլսի, Կառուցկի, Մարքսի, Շիշկոյի, Պրամպոլինի, Չերնովի, Վիխլիայէվի եւ այլոց զանազան տեսութիւնները։

Խեղճ Տէր Սահակ՝ դարաւոր խաւարէ կուրցած իր աչքերը խոշոր բացած՝ ապուշ ապուշ երեսս կը նայէր, ատեն ատեն մրմուալով։

— Բայց, օրհնա՛ծ, ատոնք լոնչ կապ ունին Սմենց վարդանի ճամբուելուն հետ։

Վերջապէս ինձ ըստաւ որ մեր վերջնական պատասխանը տամ իրեն որպէս զի հաղորդէ Տէր Սէրքոյի։

Որպէս զի յետոյ ուրացումներ կամ ինդաթիւրումներ տեղի չունենան, դրաւոր կերպով ներկայացուցի հետեւեալ նուազագոյն պահանջմունքներս, իրեւ նախահիմք մեր ապագայ բանակցութիւններուն։

Ա. Տէր Սէրքո պէտք է վճարէ Սմենց վարդանի ճամբուած թուականէն մինչեւ դործի սկսած թուականը անցած օրերու օրականները։

Բ. Օրականի յաւելում եւ աշխատութեան ժամերու նուազում։

Գ. Հանդստեան արկղ մշակներու համար։

Դ. Աշխատանքի արկածներու դէմ ապահովագրութիւն։

Ե. Տէր Սէրքո պէտք է յանձնառու ըլլայ առ նուազն 20 տարի իր քով պահելու Սմենց վարդանը։

Զ. Տէր Սէրքո այս միջազէպին կարդադրման համար յեղափոխական կուսակցութեան իրեն մատուցած ծառայութեանց իրեւ փոխարժէք, դրամական կարեւոր նըւէր մը պէտք է ընէ կուսակցութեանս Ծաղլվարի գանձին։

Ինչպէս կը տեսնէք հարցը տեղափոխեցի բոլորովին սկզբունքային հողի վրայ։

Տէր Սահակ մեկնեցաւ նշանակալից կերպով գլուխը օրօրելով։ Անցան մի քանի օրեր եւ ես ոեւէ պատասխան չստացայ։ Վարդան սկսաւ անհամբերութեան նշաններ ցոյց տալ։

— Քանի որ Տէր Սէրքո ներեր է ինձ՝ երթամ գործիս սկսիմ, կը կրկնէր այդ ապուշը, ուղելով այսպէս եսասիրաբար ոտնակոխ ընել միլիոնաւոր պրօլէտարիաներու իրաւունքը, իր անձնական շահին համար։

Վերջապէս առջի երեկոյ, տեսնելով որ պատասխանը կ'ուշանայ, մեր կողմէ, իրեւ լիազօր ներկայացուցիչ, կը զրկեմ իեւ Աւօն Տէր Սէրքոյի մօտ, ստանալու համար վճռական պատասխան։ Կ'երեւայ թէ մեր ընկեր Աւօն, որ յեղափոխականի լաւ խմոր ունի, մի քիչ խիստ լեզու կը գործածէ եւ զինքը ծեծելով դուրս կը վանեն Սէրքոյի բնակարանէն։ Քիչ յետոյ կուգայ նաեւ ինձ մօտ Տէր Սահակ եւ կը յայտնէ թէ Տէր Սէրքո այլեւս չուզեր նոյնիսկ վարդանի անունը լսել։

Դա պարզապէս պատերազմի յայտարարութիւն էր։ Կապիտալիզմի եւ օպսդիւրանթիզմի միացեալ ուժերն էին որ կը կանգնէին ընչազուրկ դասակարդի կորաքամակ ու

սերուն վրայ: Կարելի չէր լոել այդ ակնյայտնի պրօվօքացիայի հանդէպ եւ չգործէլ: Նոյն գիշերն իսկ պատրաստեցի հետեւեալ հրաւէր-յայտարարութիւնը, զոր այս առտու, արշալոյսին, իեւ Աւո տարաւ փակցուց եկեղեցիի պատին վրայ.

« Աշխատաւոր դասակարդ Ծապլվարի,
« Ահազանդը հնչեց:

« Սմենց Վարդանի եւ Ռէս Սէրքոյի դէպքը յայտնի է ամէնուդ: Հակառակ կուսակցութեանս խաղաղարար ջանքերուն՝ ադրաբային կապիտալիսմը անողոք պատերազմ կը հրատարակէ հողագործ պրօլետարիայի մասսաներուն դէմ: Վատութիւն է մեր կողմէն լոելը, վատութիւն է չգործելը: Ծապլվարի մութ ուժերը կազմակերպուած՝ կ'ուզեն ջախջախել բանտորական դասակարդի իրաւունքներն եւ տապալել նորածագ ազատութիւնը որ մեր այնքա՞ն զոհողութիւններով ձեռք բերինք:

« Բոլոր աշխարհի բանտորնե՛ր,

« Միթէ թոյլ պիտի տա՞ք որ մի կեղտոտ պուրժուածապլվարի մէջ ունակոխ ընէ վաթսուն միլիոն աշխատաւորներու իրաւունքը: Դա անկարելի է: Ամէնքը մէկուն համար. մէկը ամէնուն համար, ա՛յս պէտք է ըլլայ մեր նշանաբանը: Բոլոր աշխարհի բանտորները կը հրաւիրւին, կիրակի օր, Մկրենց կալը, ուր տեղի կ'ունենայ հըրապարակային բողոքի մեծ միթինկ: Պիտի բանախոսեն ընկեր Փանջունի, ընկեր Աւո եւ ադրաբային կապիտալիսմի նահատակ Սմենց Վարդան:

« Անկցի՛ կապիտալիսմը,
« Անկցի՛ օպսքիւրանթիսմը,
« Կեցցէ՛ սօցիալիզմը,
« Կեցցէ՛ պրօլետարիան,

« Կեցցէ՛ Մայիսի մէկը: »

Դժախտաբար այսօր լուր օր է եւ ամբողջ գիւղը կանուխ դաշտերը գացած է աշխատութեան. ուրիշ անպատեհութիւն մըն ալ այն է որ Ծապլվարի մէջ գրել կարգալ գիտցող ես միայն կամ. նոյն իսկ քահանան կարգալ չի գիտեր: Այսու հանդէրձ կը յուսայի որ յայտարարութիւնը ցնցող տպաւորութիւն առաջ պիտի բերէր երեկոյեան, երբ գիւղացիք վերադառնային գաշտերէն. բայց ահա՛ իեւ Աւո վաղելով կուգայ հեւ ի հեւ եւ կը գոչէ.

— Թուղթը պատուեր են եկեղեցիի պատին վրայէն...

Զէի կարող հաւատալ ականջներուս. Աւոյի հետ անմիջապէս գացի սառուցելու համար այդ ծանրակշիռ իրողութիւնը: Այո՛, ճշմարիտ էր. հրաւէր-յայտարարութիւնը պատառ բղիկ եղած էր, հաղիւ մէկ քանի կտորներ մնացած էին, որոնք չարագործ ձեռքեր չէին կրցած բղկաւել, լաւ փակած ըլլալուն համար, որովհետեւ իեւ Աւո ջուրն ու ալիւրը չէր խնայած յայտարարութիւնը փակցնելու համար:

Ովքէ՞ր գործէր էին այդ սրապղծութիւնը: Գիւղացիները բոլորն ալ դաշտն էին, եկեղեցիի շրջակայքը մարդ չի կար. ուրեմն գաւառըրութիւնը սարքուած էր շա՞տ խորհրդաւոր կերպով: Յամենայն դէպս սա որոշ էր թէ բէաքցիան զինաթափ չէր ըլլար: Ընդհակառակն իր այս նոր ցոյցով բրօվօքացիան կատաղօրէն առաջ կը մըղէր: Պէտք չէր ընկրկիլ: Որոշեցի անմիջապէս մի հակացոյց կազմակերպել: Վերադառնայ տուն, իեւ Աւոյի ձեռքը տուի մի երկար ձող, որուն ծայրը կապուած էր մի կարմիր կտաւ: Սմենց Վարդան շալակեց իր մշակի գործիքները, ես ալ անցայ իրենց գլուխը եւ այսպէս ամբոխը ժուռ եկաւ Ծապլվարի գլխաւոր փողոցները:

Երբ հասանք Տէր Սահակի տան առջեւ, յանկարծ
սկսայ երգել.

Debout, les damnés de la terre,
Debout, les forçats de la faim !

Կարծեմ առաջին անդամն էր որ յեղափոխական ըն-
կերպարական երգը՝ էնթէրնասիօնալը՝ կը հնչէր Ծապլ-
վարի մէջ: Տունը մնացած երախաները, լսելով բանու-
րական մարտադոչ երգը, վաղելով եկան միացան մեղի եւ
ամբոխն առաւ պատկառելի երեւոյթ:

Յուցարաները երբ հասան Ռէս Սէրքոյի տան առ-
ջեւ, ողեւորութիւնը ծայր աստիճանի հասած էր:

— Տղե՛րք, գոչեցի, վար առէք այդ դաւաճանի տան
ապակիները:

Բայց, ափսո՞ս, Ռէս Սէրքոյի տան պատուհանները
ապակի չունէին, եթէ ո՛չ այդ ապակիներու խորտակու-
մը ջախջախիչ տպաւորութիւն առաջ պիտի բերէր ապա-
հովաբար:

Խեւ Աւո որ հետզհետէ խանդավառուած էր, վրէժը
լուծեց՝ քարկոծելով Ռէս Սէրքոյի էշը որ դաշտին մէջ
կ'արածէր, նոյն իսկ դանակը քաշելով՝ ուղեց վրան յար-
ձակիլ, բայց ես արդիլեցի իսկոյն, չուզելով տեղի տալ
անօդուտ արիւնահեղութեան:

Ի վերջոյ բազմութիւնը ցրուեցաւ գոհ տրամադրու-
թեան տակ:

Ինչպէս կը տեսնէք, դըռութիւնը խիստ լարուած է
Ծապլվարի մէջ: Տեսնենք ի՞նչ հետեսանք կ'ունենայ գոր-
ծը: Մենք ուխտած ենք պայքարն առաջ մղել ամէն մի-
ջոցներով:

Մի քիչ փող ուղարկեցէ՛ք փութով:

* * *

Յ. Գ.— Վերջին բոպէին, երբ նամակս կը փակէի,
իմացայ թէ հրաէէր-յայտարարութիւնը ո՛չ թէ ոէաք-
ցիայի մութ ուժերուն ձեռքով պատուած է, այլ մի
ջատուկ պառաւի՝ Մարքոյի՝ այծը զայն պատուի ու կե-
րեր է, թուղթին ետեւ քսուած ջրախառն ալիւրէն հրա-
պուրուած:

Իսկ ընդհանուր կացութիւնը կը մնայ նոյնը: Մի-
թինկը՝ անպայման կը կայանայ կիրակի օր:

Դ.

ԾԱՊԼԱՐ, 2 Նոյեմբեր 1908

ՍԻՐԵԼԻ ԸՆԿԵՐՆԵՐ,

Դիրքերը հետզհետէ կը ճշգուին իրենց բնորոշ հանդամանքներով, եւ դասակարգային պայքարը իր բնական «էվօլիտցիան» կը կատարէ Ծապլվարի մէջ։ Գիտակից տարրերը կամաց կամաց կը բոլորուին մեր յեղափոխական դրօշի չուրջը։ Հողային բանւորականութիւնը (Սմենց Վարդան) եւ երիտասարդ մտաւորականութիւնը (Խել Աւօ) արդէն մեզ հետ են։ Մեզ հետ կ'ըլլայ նաեւ դպրոցականութիւնը։ Յամենայն դէպս անհրաժեշտ է մեր շարքերը սեղմել եւ պատրաստուիլ վերջնական կռուին։ որովհետեւ յետադիմական ուժերը անդործ չեն մնար, իրենց խուլ պայքարը կը մղեն մեզի դէմ։

Այսպէս, օրինակ, երբ նախորդ նամակով ծանուցւած բողոքի հսկայ միթինկը կիրակի օր տեղի կ'ունենար Մկրենց կալը, ի ներկայութեան հողային բանւորականութեան, երիտասարդ մտաւորականութեան եւ յեղափոխական տարրերուն, անդին։ Ծէս Մէրքոյի տանը մէջ,

գիւղին մենծաղայականութիւնը, գումարուած կղերականութեան եւ Ռէաքցիայի մութ ոյժերուն հետ, սատանայական մի խորհուրդ կը յղանար, այն է՝ գիմել Միացեալ Ընկերութեան եւ խնդրել որ Ծապլվարի մէջ դպրոց մը բանայ, պայմանաւ որ ծախսերու կէսը գիւղացիք հայթայթէն։



ՄՄԵՆՑ ՎԱՐԴԱՆ

հետեւեալ օր հրաւիրէ իր ընկերները մեր տան պարտէզը, ուր կը կայանայ մանկական պարահանդէս։

Հրաւէրը առաջ բերաւ մեծ խանդավառութիւն, եւ երկուշաբթի օր 10—12 լաճեր խոնուած էին պարտէզը։ Կատարուեցան մի քանի մանկական խաղեր։ Յետոյ չուրջս հաւաքեցի տղերքը, եւ բացատրեցի թէ ի՞նչ սարսափելի

դաւ մը կը պատրաստուէր իրենց դէմ եւ թէ ի՞նչ որոշ գիրք հարկ էր բռնել:

Մի առ մի ցոյց տուի իրենց իրաւունքները: Հսի թէ ի՞նչ պարագաներու մէջ իրենց բացարձակ իրաւունքն էր դասադրու ընել. թէ ե՞րբ պէտք էր որ ըմբռստանային ուսուցիչներու դէմ, թէ ե՞րբ հարկ էր պատժել ուսուցիչները եւ թէ ի՞նչ պատիժներ կարելի էր տնօրինել ուսուցիչներուն դէմ:

Խօսքերս առաջ բերին խորին տպաւորութիւն, եւ տղաք արդէն իսկ պատրաստակամութիւն յայտնեցին դասադրու ընելու:

Մի քանի օր յետոյ կրկին ժողով գումարուեցաւ, եւ այս անգամ կազմեցինք Ծապլվարի Դպրոցական Միութիւնը իր որոշ ծրագրով ու գործելակերպով: Կարօն ընտրուեցաւ նախագահ: Կայ նաեւ գործադիր ժողով, խըմբագրական մարմին եւ ահաբեկիչ խումբ:

Ինչպէս կը տեսնէք, տակաւին դպրոցը չբացուած՝ մենք ունինք Դպրոցական Միութիւնը, ամրապէս կազմակերպուած եւ պատրաստ կոիւ մղելու: Այժմ հանդարտ սրտով կը սպասենք: Ծապլվարի դպրոցին ուսուցիչը կը նայ գալ երբ որ կամի: Իրեն կը պատրաստուի մի փառաւոր ընդունելութիւն որ կարծեմ յաւիտեան չպիտի մոռնայ: Եթե Աւո շինած է արդէն գաւազաններ որպէս զի կրիտիկական բոպէին տղերքը անդէն չմնան:

Մեր քաղած տեղեկութիւններուն համեմատ՝ Արարկիրի Միացեալ Ընկերութեան ներկայացուցչին հետ բանակցութիւնները յաջող ելք ունեցեր են, եւ այժմ կը սպասուի ուսուցչի գալստեան: Ո՞վ է այդ պարոնը, ի՞նչ սկզբունքի կամ ի՞նչ գաղափարներու կը ծառայէ: Դա բոլորովին անծանօթ է ինձ: Յամենայն դէպս պէտք է

կատաղի կոիւ մղել անոր դէմ: Սա բացայայտ պայման է: Մմենց Վարդան եւ Խել Աւո Ծապլվարի կիներուն մէջ բռուն փրօփականտ կը մղեն Միացեալ Ընկերութեան Ծապլվարի դպրոցին բացման դէմ, եւ կ'ըսեն թէ այդ դպրոցին պատճառաւ իրենց տղաքը անսատուած պիտի ըլլան, Ս. Լուսաւորիչը պիտի ուրանան, Բրոդ պիտի դառնան, եւն: Այդ փրօփականտը առաջ կը բերէ մեծ յուղում, այն աստիճան որ երէկ Տ. Սահակ քահանան եկաւ ինձ մօտ եւ խնդրեց որ խրատեմ մեր ընկերները որպէս զի այդ տեսակ խօսքերով միտքերը չպղտորեն եւ դիւղին մէջ յուղում առաջ չբերեն:

Իրեւ ջախջախիչ փաստ կարգացի իրեն մեր ծրագիրը եւ «պլատֆորմ»ը, ցոյց տալու համար թէ մեր կուսակցութիւնը կրօնական խնդիրներու մէջ ի՞նչ աշխարհահայեցք ունի եւ թէ ի՞նչքան հակասութիւն էր մեղ իրեւ մոլեռանդ ներկայացնելը:

— Եւ սակայն այդպիսի խօսքեր կը տարածեն կոր, պնդեց Տէր Սահակ:

Այն ատեն իրեն բացատրեցի կուսակցութեանս գործելակերպը, թէ ի՞նչպէս իրեւ կուսակցական մենք պարտաւոր ենք ազատամիտ եւ անհաւատ ըլլալ, սակայն անհատապէս ազատ ենք հաւատացեալ եւ նոյն իսկ մոլեռանդ ըլլալու, հետեւաբար Մմենց Վարդան եւ Խել Աւո իրեւ կուսակցական չէ որ կը գործեն այս պարագայիս, այլ սոսկ անհատապէս, եւ մենք ո՛չ մի կերպով իրաւոնք չունինք բռնանալու մեր կուսակցիցներու անհատական համոզումներուն վրայ:

Տ. Սահակ մեկնեցաւ անխօսուկ, թէ եւ յայտնի կ'երեւար որ տուած բացատրութիւններս լաւ չէր կրցած

մարսել։ Որքա՞ն դժուար է սորկամիտներու համար ըմբռոնել մի ոեւէ ազատական միտք։

Վերջին անգամ փողի մասին պահանջմունքս մնաց անպատճախան։ Խնդրեմ ուշադրութիւն դարձուցէք այդ մասին։ Դա էական հարց է ինձ համար։

Ե.

ԾԱՓԼՎԱՐ, 10 Նոյեմբեր 1908

Սիրելի Բնկերներ,

Ստացայ ձեր նամակն եւ ձեր տուած հրահանգները։ Իմ ալ աշխարհահայեացքս բոլորովին համաձայն է ձերինին։ Մէկ կողմէն պէտք է կատաղի կոիւ մղել Հայ պուրժուաղիայի եւ իր դասակից կղերականութեան, քափիթալիսմի, հաստատուած հին կարգուսարքին, ապականած բարքերուն, ընտանեկան շղթաներուն, կրօնական կապանքներուն գէմ, միւս կողմէ եղբայրական սիրոյ եւ միաբանութեան ձեռք կարկառել հարեւան ազդաբնակութեանց, Քրդերու, Եղիաներու, Քըզըլսղաշներու եւ Լազերու։

Ձեր նամակը առնելուս պէս մեկնեցայ Քոմբաշ գիւղ, ուր մնացի մի շաբաթի չափ, սէր եւ եղբայրութիւն քարոզելով Քրդերուն։ Ըսի իրենց, որ մէր կուսակցութիւնն երբեք թշնամական յետին մտքեր չունի իրենց նկատմամբ, այլ ընդհակառակն կը փափաքի համերաշխաւթեան

դաշինք հաստատել իրենց հետ եւ միասին առաջ վարել պայքարը :

Քոմրաշի մէջ հիմնեցի նաեւ քրդական անդրանիկ քլիւպը զոր անուանեցի «Քոմրաշի սօցիալ յեղափոխական կարլ Մաքս Կլուբ»։ Առ այժմ քլիւպի նիստերը կը կայանան մի ախոռի մէջ, սպասելով որ մի յարմար կեղրոնատեղի գտնուի։ Քլիւպի նախադահն է Քէլէշ Մրկօ, որու մասին խօսած եմ նախորդ նամակներուս մէջ, իսկ քարտուղարը՝ Հասօ, որ մի համբաւաւոր կտրիծ է եւ Սահմանադրութեան առթիւ եղած ընդհանուր ներումին ատեն ելած է բանտէն, ուր կը գտնուէր տարիներէ ի վեր իր գործած կարգ մը ոճագործութիւններուն պատճառաւ։ Հասօ հերոսի խառնուածքով մը լաւ խմոր է որ կրնայ մէծ օգտակարութիւն ունենալ վճռական բոպէներուն։ «Կարլ Մաքս Կլուբ»ը կոչուած է փրկարար գեր կատարելու առ հասարակիւրդ եւ Հայ համայնքներուն մէջ։

Ծապլվարի մէջ մի կօօպէրատիվ ընկերութիւն կադմելու համար ըրած ջանքերս մնացին անհետեւանք։ Այդ



Քէլէշ Մրկօ

Քիւրդ եւ Հայ համայնքներուն մէջ։

ապուշ գիւղացիները իրենց բոլոր խելքն ու միտքը տուեր են դպրոցին, որուն համար այժմ կ'աշխատին մի յատուկ շէնք շինելու եկեղեցու կից։ Թո՛ղ շինեն եւ յետոյ մենք կը տեսնենք թէ ո՞ւմ կը ծառայէ այդ շէնքը։

Անշուշտ կը յիշէք որ իմացուցած էի թէ՝ պառաւ Մարոյի այծը պատուած ու կերած էր մեր հրաւէր-յայտարարութիւնը։ Անասունն անցեալները մեռաւ եւ Մարօ այժմ մեզ կ'ամբաստանէ ըսելով որ իմ յայտարարութեամբ թունաւորած եմ այծը, որովհետեւ «Ռէաքսիօնէր»ներ ըսած են իրեն որ հաւանականաբար կախարդական բաներ գրած էի մէջը։ Այս անախորժ դէպքը շատ վատ տպաւորութիւն ըրաւ մեր կողմէ դուրս եկած դրութիւններու փրկարիծին վրայ, այնպէս որ երկու օր առաջ երբ թուուցիկ մը հանեցի դպրոցական հարցի մասին, ո՛չ ոք ուզեց զայն ձեռք առնել, վախնալով որ կը թունաւորուի։ Մի այսպիսի միջավայրի մէջ ուր բոլոր մութ ուժերը «Լեկա» կազմած են մեզի դէմ, շատ դժուար է հիմնական քայլեր առնել։ Այսուհետերձ դպրոցական հարցի շուրջ մեր մղած բուռն պայքարը բոլորովին ամուլ չը մնաց։ Տէր Սահակ եկաւ ինձ մօտ եւ Ռէս Սէրքոյի կողմէ զիս հրաւէրեց անոր տունը, որպէս զի համաձայնութեան դանք, որովհետեւ լաւ կը զգային որ մենք որոշած ենք ընկրկիլ Ծապլվարի պուրժուա դասակարգի «բրօվօքացիա»ներու հանդէպ։

Յայտնեցի այդ տէրտէրին որ կուսակցութեանս ներկայացուցիչը չէր կարող բանակցութեան համար երթալ մի կեղտոտ պուրժուայի ոտքը, եւ եթէ Ռէս Սէրքօ մի խնդիր ունի՝ կրնայ գալ մեր կեղրոնատեղին։ Մեր բունած այս կորովի գիրքը խոր տպաւորութիւն գործեց Սմենց Վարդանի, իեւ Առոյի և Կարոյի վրայ։ Տէր Սահակ մէկ-

նեցաւ եւ հետեւեալ օրը լուր բերաւ թէ Իէս Սէրքօ չէ ու-
ղեր մեր մօտ դալ, չկամենալով դէմ առ դէմ գտնուիլ
Սմենց Վարդանի եւ Աւոյի հետ : Կը տեսնէ՞ք այդ ամբար-
տաւան քափիթալիստի հոգիին սեւութիւնը :

Եւ Տէր Սահակ առաջարկեց որ բանակցութիւնը կա-
տարուէր իր տանը մէջ, ուր պիտի դար նաեւ այդ աղ-
տոտ արարածը :

— Կուսակցութիւնս չի ծոկր միջնադարեան կղերա-
կանութեան առջեւ, եղաւ իմ պատասխանը :

Բանակցութիւնները շարունակուեցան մի քանի օր եւ
վերջապէս որոշուեցաւ որ տեսակցութիւնը տեղի ունենայ
չէզոք հողի վրայ, Քոմբաշ գիւղի Կարլ Մաքս կլուրին
մէջ :

Երէկ իրաւարարական սոյն ժողովը գումարուեցաւ
վերոյիշեալ քլիւպը :

Իէս Սէրքօ շատ հաշտարար ընթացք բռնեց, նոյն իսկ
առաջարկեց որ ես ըլլամ նոր դպրոցի տնօրէն ուսուցիչը :
Դա պուրժուազիկան մի կեղտոտ հնարք էր զիս կաշառե-
լու համար : Անպայման մերժեցի եւ ներկայացուցի մեր
հրամայողական հետեւեալ պահանջները :

Դպրոցի համար շինութեան վայր եղող եկեղեցիի կից
չէնքը վլցնել եւ մի նոր չէնք չինել չէզոք հողի վրայ, գերծ
միջնադարեան աղդեցութենէ :

Ուսուցչի ընտրութիւնը յանձնել իմ կազմած Ուսա-
նողական Միութեան :

Ընդունիլ իւառն դասարաններու դրութիւնը :
Պարտաւորիչ ընել ընկերվարական ուսուցումը :
Զնշել կրօնագիտութիւնը :

Պաշտօնապէս ճանչնալ Ուսանողական Միութիւնն եւ
վաւերացնել զայն :

Կը տեսնէք թէ որքա՞ն մեղմ էին մեր կողմէ եղած
պահանջմունքները, սակայն Իէս Սէրքօ եւ Տէր Սահակ
մերժեցին համաձայնիլ :

Խրամատը վերջնականապէս բացուած է մեր առջեւ :
Կ'սպասեմ վճռական դէպքերու :

Կարլ Մաքս Կլուրը իր քարտուղարին միջոցաւ իր
համակրանքը յայտնեց մեր պաշտպանած դատին : Դա մի
շատ սրտապնդիչ երեւոյթ է :

Խնդրեմ փող ուղարկեցէք :

Զ.

ԾԱՊԼՎԱՐ, 6 Դեկտ. 1908

Սիրելի Բնկերներ,

Կեցցէ՛ յեղափոխութիւն.

Կեցցէ՛ ազատութիւն:

Կրիտիկական մօմէնտը, ինչպէս կը գուշակէի, վերջապէս հասաւ եւ յեղափոխութիւնը իր դրօշակը պարզեց Ծաղլվարի մէջ: Երկու օրէ ի վեր պաշարուած դրութեան մէջ ենք եւ ամէն յարաբերութիւն խզած գիւղի բնակչութեան հետ: Պատմական դէպքեր տեղի ունեցան որոնք կ'արժէ մանրամասն պատմել այստեղ, ցոյց տալու համար թէ որքա՞ն շրջահայեցութեամբ վարուեցաւ կուսակցութիւնս, վճռական բոպէներուն եւ թէ՝ փաստացի կերպով ապացուցանելու համար մութ ուժերու անազնիւ եւ վատ դերը:

Մի շաբաթ առաջ աւարտեր էր եկեղեցու կից՝ դպրոցի շէնքը, որ կը բաղկանայ ցեխով ծեփուած փայտաշէն մի ընդարձակ սրահէ եւ վարժապետի համար մի փոքրիկ խուցէ, բոլորովին զուրկ գերմանական արդի մանկավար-

ժական ճարտարապետութեան պահանջմունքներէն. բայց հարցը դրա մէջ չէ:

Այսինչ իմացայ որ դպրոցի շէնքի շինութիւնը աւարտեր է եւ նոր ուսուցիչը ճամբայ ելած է Արարկիրէն հոս դալու համար, անմիջապէս իմ մօտ հրաւիրեցի Ծաղլվարի յեղափոխական գործօն շարքերը, Սմենց Վարդանը, և եւ Աւո եւ Ռւսանողական Միութեան նախադահ՝ Կարօնապէս զի խորհրդակցինք կացութեան եւ մեր բռնելիք ընթացքի մասին:



ԿՈՂՈՇԵՆՑ ՍԵԴՈ

Խեւ Աւո առաջարկեց, իբրեւ արմատական դարման, անմիջապէս կրակի տալ դպրոցի շէնքը, բայց ես մի քիչ «անտակտ» գտայ այդ միջոցը եւ բացատրեցի մեր ընկերներուն որ մենք պէտք է ցոյց տանք սառ պաղարինութիւն եւ մեր հակառակորդներու նման չդիմենք ծայրայեղ արարքներու: Այն տարբեր՝ եթէ Աւո կ'ուզէ մի այդպիսի բան ընել անհատական պատասխանառութեան տակ. առանց կուսակցութեանս պաշտօնական միջամտութեան. ես այն ատեն անհատապէս կրնայի համամիտ ըլլալ իրեն, քանի որ կուսակցութիւնս, որ ամէն հարցի մէջ ունի իր ազատ

հայեցակէտը, ո'եւէ կերպով չի կրնար բռնանալ իր ընկերներու անհատական գործունէութեան վրայ:

Երկար վիճաբանութենէ վերջ, որոշում կայացաւ կուսակցութեանս կողմէ մի ցոյց կազմակերպել ուսուցչի դէմ Ծապլվար հասած օրը, խսկ եթէ այդ ցոյցը մնար առանց որոշ արդիւնքի, այն ատեն ուսուցիչը պիտի ծեծէինք անհատապէս եւ ո'չ թէ յանուն կուսակցութեան, որ երբէք չընդունիր այդ տեսակ բռնի միջոցներ, եւ իր գաղափարներու յաղթանակին համար խօսքէ ու դրչէ զատ ուրիշ դէնքեր չի ճանչնար:

Որպէս զի կեղտոտ պուրժուազիայի եւ սեւ կղերականներու մութին մէջ սալքած դաւադրութեանց զոհ չըլլանք, խոհեմութիւն համարեցի վազօրօք մեր մօռ հրաւիրել Քոմրաչի Կարլ Մաքս Կլուբի քարտուղար Հասո, որ արդէն իր որոշ եւ գիտակից հայեցակէտը պարզած էր դպրոցական հարցի մասին:

Վերջապէս երկու օր առաջ լուր առինք թէ՝ ուսուցիչը ցերեկուսայ մօտ կը հասնէր Ծապլվար: Արդէն իսկ Բէրքօ, Տէր Սահակ, Սէրքոյի երկու որդիերը, Սըհօ Զան, Փրենց Յարօ եւ Կոլոշենց Սեղօ, գիւղին բոլոր մենձ աղայական կուսակցութիւնը իրենց արբանեակներով, հացկատակներով, պնակալէզներով գացեր էին դիմաւորելու պուրժուազիայի պաշտօնական ներկայացուցիչը, իրը թէ նա մի յեղափոխական-համարակական մեծ դործիչ կամ անձնուէր հերոս լինէր:

Մենք խսկոյն հաւաքուեցանք եկեղեցու մօտերը պատշաճ դիրքեր գրաւելու:

Եւ ահա երեւցաւ թափօրը: Երբ ուսուցիչը եւ իր ուղեկիցները կանգ առին եկեղեցու քով եւ վար իջան իրենց ձիերէն՝ ցոյցը պայթեցաւ.

— «Անկցին յետադիմականները, անկցին դաւաճանները, անկցին սուս դպրոցասէրները, անկցին կեղծաւոր ուսուցիչները, կեցցէ՛ յեղափոխութիւնը, կեցցէ՛ պլուետարիատի ինքնադիտակցութիւնը, կեցցէ՛ Ծապլվարի մտաւորական երիտասարդութիւնը», աղաղակները օդը կը թնդացնէին:

Տեսնելու էր մութ ուժերու շփոթութիւնն ու վախը: Տ. Սահակ անմիջապէս ինձ մօտ վազեց եւ աղաչեց որ վերջ տանք ցոյցին:

— Յեղափոխութիւնը պայթեցաւ Ծապլվարի մէջ, պատասխանեցի եւ կարելի չէ հեղեղի ընթացքը կասեցնել:

Այդ բոպէին մի սուր աղաղակ լսուեցաւ: Խեւ Աւո, իր անհատական պատասխանատուութեան տակ, քար մը շպրտած էր ուսուցի ճակտին եւ վիրաւորած զայն: Արիւնը կը հոսէր և խուճապն ընդհանուր էր: Բէս Սէրքօ, Սըհօ Զան, Փրենց Յարօ եւ Կոլոշենց Սեղօ մի վայրագ յարձակում գործեցին խեղմ պատանիին վրայ, որ շուարած՝ մեր մօտ ապաստանեցաւ:

— Հասի՛ր Հասո, գոչեցի Կլուբի քիւրդ քարտուղարին՝ որ հաստ դաւազանը ձեռքը մի քիչ անդին դիրք բռնած էր:

Այն ատեն պայքարն սուացաւ ծանր հանդամանք եւ հազիւ յաջողեցանք ես, Աւո, Կարո, Սմէնց Վարդան եւ Հասո, խուժանը ձեղքելով ապաստանիւ դպրոցի շէնքն որուն դուռը ամբապէս փակեցինք:

Կոիւի միջոցին մի քանի բէաքսիօնէր գլուխ վիրաւուեցան. մեր կողմէ ոչ ոք վնասուեցաւ:

Անմիջապէս դպրոցի տանիքի վրայ պարզեցինք կարմիր գրօշը զոր նախապէս պատրաստած էինք: Տպաւութիւնը խիստ ցնցող եղաւ ամբողջ գեւդին մէջ:

Այժմ երկու օրէ ի վեր կը մնանք դպրոցը, զօրաւոր
կերպով ամրացած։ Կը լսենք թէ մութ ուժերը վատա-
բար դիմում ըրած են կառավարութեան՝ մեզ բոնի դուրս
հանելու համար չէնքէ մը որ ամբողջ ժողովրդի սեփա-
կանութիւնն է։ Տեսնենք բանից ի՞նչ դուրս կուգայ։

Սուխնի քաղաքականութիւնն է որ ծայր կուտայ։
Դէ՛ւ, թո՛ղ ցոյց տան իրենց բո՛ւն, իսկական գոյնը։
Մենք չենք ընկրկիր։

Առ այժմ փութով փող ուղարկեցէ՛ք։

Է.

ԾԱ.ՊԼՎԱՐ, 14 Դեկտ. 1908

Սիրելի Բնկերներ,

Պաշարման դրութիւնն կը չարունակուի եւ մենք
ութը օրէ ի վեր փակուած կը մնանք դպրոցի չէնքին մէջ
զոր ամրացուցած ենք ուզմական պահանջմունքներու
համեմատ։ Դպրոցական Միութեան նախադահ Կարոյի
մայրը՝ Սարա՝ եկաւ միացաւ մեր չարքերուն։ Մի խելօք
պառաւ կին է դա, որուն հետ պէտք է խօսիլ նշանացի
կերպով, քանզի բոլորովին խուլ է։ Սարայի ներկայու-
թենէ օգտուելով՝ անմիջապէս ձեռնարկեցի կազմել «Ծա-
պըլվարի գիտակից տիկնանց Յառաջ ակումբ»ը, եւ օ-
ժանդակ մարմին մը «Ծապըլվարի Հայ կանանց Անձնուեր
խումբ» անունի տակ։ Այս վերջին կազմակերպութիւնը
հրամայողական պահանջք էր դարձած, որովհետեւ մի
քանի օրէ ի վեր թանջքէ կը տառապէի եւ պէտք ունէի
մի անձնուեր կնոջ ինամքին։

Թէեւ պաշարման վիճակի մէջ՝ սակայն անգործ
չմնացինք ութ օրէ ի վեր։ Նախ եւ առաջ ցրուեցի, նո-

բակազմ «Յառաջ» ակումբի միջոցաւ, մի պաշտօնական թոռոցիկ կուսակցութեանս Ծաղլվարի մասնաճիւղին կողմէ, ուղղուած մեր Թքահայ, Ռուսահայ, Պարսկա-հայ եւ Ամերիկահայ Կոմիթէներուն, Ենթակօմիթէներուն եւ ընկերներուն։ Այդ թոռոցիկով մանրամասն պարգեցի վերջին կարեւոր դէպքերը, փաստացի կերպով ցոյց տուի թէ կուսակցութիւնս որքա՞ն խոհեմութեամբ, զիջողութեամբ եւ բարեացակամութեամբ վարուած էր, եւ ցաւալի դէպքերուն ամբողջ պատասխանատուութիւնը ծանրացուցի մութ ուժերու սարքած դաւադրութիւններուն վրայ։ Այս գրութիւնը, որուն մէկ օրինակը կը դրեկեմ ձեզ, ինչպէս պիտի տեսնէք՝ ունի տրամարանական հիմք, հաստատ «Լօդիկա» եւ որոշ հայեցակէտ։

Յետոյ երեւցաւ մտաւորական երիտասարդութեան կողմէ մի թոռոցիկ՝ ուղղուած Ծաղլվարի գործաւորական դասակարգին։ Դա մի պերճախօս կոչ էր ընդհանուր գործադրութիւնի, ինչ որ ներկայ պայմաններու մէջ մի նուիրական պարտականութեան էր ամէն գիտակից գործաւորի համար, բայց ափսո՞ս որ պայտար Մկօ տակաւին չէ հասած այն բարձրութեան որ կարող ըլլայ ըմբռնել մասնաւորին շահն ընդհանուրին օդտին որհելու պարտադրիչ սկզբունքը։

Երրորդ թոռոցիկը, հողային բանւորականութեան կողմէ ստորագրուած, անդամ մը եւս կը գոռացնէր ընչագուրի Պրօլէտարիատի բողոքը հողային քափիթալիսմի դէմ։

Յետոյ երեւցաւ Քոմբաշ քիւրտ գիւղի Կարլ Մաքս Կլուրի մի ցնցող մանիփէսթը, որ եղբայրական ձեռք կը մեկնէր Ծաղլվարի մէջ պատնէչի վրայ կոռող իր գաղափարի ընկերակիցներուն։ Այս յայտարարութիւնը, որ

տաք չունչով մը գրուած էր, սրտապնդիչ տպաւորութիւն գործեց առ հասարակ բոլոր ընկերներու վրայ։

Հինգերորդը Ծաղլվարի գիտակից տիկնանց «Յառաջ» ակումբի անդրանիկ թոռոցիկն էր, որով հրաւէր կ'ըլլար Ծաղլվարի բոլոր տիկիններուն գալ բոլորուելու մեր շուրջը, դպրոցի գաղաթը բարձրացող կարմիր գրօշակին տակ։

Վերջապէս, երեւցաւ նաեւ Ծաղլվարի Հայ կանանց «Անձնուէր» խումբի թոռոցիկը, սրտապուչ մի կոչ, ուղղուած առ հասարակ բոլոր հայուհիներուն, որպէս զի փութան շուտով մի քիչ ամոքիչ տերեւներ հաւաքել եւ եփել։ Ասիկա մի համակրական ցոյց էր դէպի կուսակութեանս Ծաղլվարի ներկայացուցիչը, որ, ինչպէս ըստի, թանջքէ կը տառապէր։ Այս փափուկ հոգածութիւնը պարտաւոր ըրաւ զիս անմիջապէս միթինկ կայացնել եւ հրապարակային չնորհակալութիւն յայտնել՝ կուսակցութեանս կողմէ՝ Հայ կանանց «Անձնուէր» խումբին։ Իմ ճառս իեւ Աւո նշանացի կերպով թարգմանեց ընկերուէի Սարայի, որ շատ յուղուած կ'երեւար։

Բաց աստի, միւս կողմէ, բանակցութիւնները սկսուած են Ռէս Մէրքոյի և Տ. Մահակի հետ։ Ռէս Մէրքօ երեք օր առաջ եկաւ եւ ուզեց որ դպրոցը թողունք, հաշտութիւն գոյացնենք եւ գիւղը հանդարտի։ Մինչեւ իսկ խոստացաւ դպրոցն առ այժմ փակ պահել, ուսուցիչը ետ զրկել եւ ինձ յանձնել դպրոցի տնօրէնութիւնը, անպայման կերպով։

Այս խաղաղական առաջարկներն ի հարկէ կարելի չէ ընդունիլ — մենք կ'ուղէինք դպրափարական պայքար, յեղափոխական դործունէութիւն եւ ոչ թէ անշարժութիւն եւ մեռելութիւն։

— Մենք ամէնքս ալ զայ ենք, եղբայր ենք, ի՞նչու սիրով չապրինք իրարու հետ, ինչո՞ւ կոիւ ընենք,— կը կրկնէր այդ կեղտոտ պուրժուան որ կարող չէր ըմբռնել թէ կեանքի էական պայմանն էր կոիւը, թէ դասակարգային պայքար անհրաժեշտ էր ընկերվարութեան յաղթանակին համար, եւ թէ առանց արիւնահեղութեան կարելի չէր մի լաւ բան դուրս բերել:

Երկարօրէն բացատրեցի իրեն որ ինք, իրբեւ պուրժուակիայի ներկայացուցիչ, պարտաւոր է լինել մեր կատաղի հակառակորդը եւ իրբեւ այդ՝ պէտք է դիմէ կեղտուա միջոցներու. հրամայական պարտք է իրեն համար ոստիկանական աջակցութեան դիմել եւ մեզ բռնի դուրս հանել դպրոցէն, եւն.։

Թէս Սէրքօ պատասխանեց թէ իրբեւ գիւղապետ՝ երբեք չպիտի թոյլատրէր որ ոստիկան բերուէր եւ թէ կը նախընտրէր մեռնիլ՝ քան թէ ներքին կոիւներու համար կառավարութեան դիմում ընել:

Կը տեսնէ՞ք որ այդ կեղտոտ արարածը նոյն իսկ կարող չէ ունենալ իր դասակարգին պահանջած սեւ ոգին: Ի զո՞ւր կրկնեցի թէ մեր մէջ պէտք էր մղուել դասակարգային կատաղի կոիւ, թէ իրենք պարտաւոր էին մեզ դէմ գործածել բոլոր աղտոտ գէնքերը, մատնութիւն, դաւաճանութիւն, զրաքարտութիւն եւ ի հարկին դիմելու էին բռնի միջոցներու, թէ առանց ատոր կարելի չէր ունենալ պուրժուազիական կեղտոտ դասակարգ, որուն դութիւնը անհրաժեշտ է, անոր դէմ մղելու համար յեղափոխական ազնիւ պայքարը:

— Մենք եղբայր ենք, մենք քրիստոնեայ Հայեր ենք, մենք պէտք է իրար սիրենք, միաբանութեամբ ապրինք, կ'ըսէր ու կ'ըսէր այդ ապուշ արարածը:

Յամենայն դէպս, ես հաստատ մնացի կոիւի ասպարէզին վրայ: Պայքար առաջ բերելու համար այնքա՞ն չանքերէ վերջ, չէի կրնար մի յամառ գիւղացիի խաղաղասիրական զգացմունքներուն զոհել մեր երեք ամսուան ամբողջ ջանքերն ու գործունէութիւնը: Դա շատ վատ աղղեցութիւն պիտի գործէր մեր չարքերուն վրայ:

Վաղը ինձ մօտ կուգայ Տ. Սահակ նոր բանակցութիւններու համար:

Վճռական քայլը կ'առնուի այն ատեն. եւ այդ յիշար Բէս Սէրքօ վերջապէս կը ստիպուի դիմել կառավարութեան եւ ոստիկանութեան միջամտութիւն հրաւիրել, ինչ որ անհրաժեշտ է մեր պայքարի վերջնական յաղթանակին համար:

«Փօսթ»ը եկաւ, նամակներ, թերթեր եկան, հրահանքներ եկան, բայց փող չը կայ: Խնդրեմ ուշադրութիւն գարձրէք այդ կենսական հարցի վրայ:

Ա.

ԾԱՊԼՎԱՐ, 24 Դեկտ. 1908

ՍԻՐԵԼԻ ԲՆԿԵՐՆԵՐ,

Վերջապէս յեղափոխական գործունէութիւնը Ծապլվարի մէջ իր սուր հանդամանքը ստացաւ։ Այն կեղծու խաբէական կապերն որոնցմով մինչեւ այսօր պրոլետարիատ դասակարգը միացած էր պուրժուազիական, կղերական եւ աղքարային աղնուականութեան կեղեքիչ տարրերու հետ, խորուցան, ջախջախուեցան։ ինքնազիտակցութիւնը զարթեց դիւլացիական «մասսա»ներու մէջ, ստեղծուեցան որոշ հոսանքներ եւ կազմուեցան իրարու անհաջող այն թշնամի տարրերն որոնց անողոք ու կատաղի պայքարէն մի լաւ բան դուրս պիտի դայ անպայման։

Բայց հարկ է պատմել իրողութիւններն իրենց ժամանակական կարդով։

Բէս Սէրքոյի հաշտաքար միջամտութեան անյաջող փորձին հետեւեալ օրն իսկ մեր մօտ եկաւ Տ. Սահակ եւ կրկնեց, գրեթէ բառ առ բառ, իր դասակից կեղտու

պուրժուայի խօսքերը, ըսելով որ իրենք պատրաստ էին ամէն գոհացում տալ մեզի որպէս զի վերջ գտնէր Ծապլվարի մէջ զաղափարային յեղափոխական ազնիւ պայքարը, որուն «անխորհուրդ իրարանցում» անունը կուտար միջնադարեան ճիզուիթականութեան այդ սեւ հոգի ներկայացուցիչը։

Հարկ եղաւ բացատրել իրեն թէ՝ յեղափոխութիւնը չի կրնար ընդունիլ երբեք կղերականութեան կողմէ տըրւած խրատները, թէ պայքարը սկած է եւ կարելի չէ կասեցնել անոր յառաջխաղացում։

— Բայց ի՞նչ է ձեր նպատակը, պնդեց այդ խառամիտ տէրտէրը։

Իրը թէ յեղափոխական ազնիւ պայքար մղելու համար անհրաժեշտ ըլլար նպատակ մը ունենալ եւ թէ անկեղծ ու անձնուել յեղափոխականի համար պայքարն արդէն նպատակ մը եղած չըլլար։

Այդ ապականուած ու այլասերած էութիւններուն համար, որոնց ամէն մի քայլը մի շահամոլական նպատակ ունի, կարելի չէ ըմբռնել թէ մի մարդ կարող է մի ուեէ գործունէութիւն ցոյց տալ առանց նրա ծայրը անպատճառ մի օգտակարութիւն լինելու։ Անշուշտ, Տ. Սահակի նման յետադիմական ուղեղները չեն որ պիտի կրնան հասկնալ «պայքարը պայքարի համար» իմաստասիրական սկզբունքը, ուստի լաւագոյն համարեցի չպատասխանել։ Բայց նեւ Աւօ որ ներկայ էր եւ որուն յեղափոխական դաստիարակութիւնը տարօրինակ զարդացումի կը հասնի հետզհետէ, Տ. Սահակի այդ «պրօվօքացիա»յին չկարողացաւ համբերել եւ նրա խալիախը քաշեց, դուրս չպրտեց պատուանէն, ըսելով։

— Ահա! մեր նպատակը։

Խեւ Աւոյի այդ արարքը եւ կարճ խօսքը, ինչպէս կը տեսնէք, իրենց մէջ կը խտացնեն մեր ամբողջ յեղափոխական գործունէութեան «Քիսիխօլոգիան»:

Տգէտ տէրտէրն ի հարկէ չհասկցաւ այս ձեւով իրեն տրուած պատասխանին հոգեբանական բարձրութիւնն եւ նոյն իսկ համարձակեցաւ բողոքելու:

Անմիջապէս փաստացի կերպով ցոյց տուի իրեն թէ՝ «Ալրօվօքացիա»ն իր կողմէ եղած էր, թէ՝ ինքն էր նախայրձակը եւ ընկեր Աւոյի արարքը մի օրինաւոր անձնապաշտանութիւն էր պարզապէս:

Քահանան ոտքի ելաւ մեկնելու համար: Այն ատեն, մեր նախօրօք տուած որոշումի համեմատ, Ամենց Վարդան, Հասօ եւ Խեւ Աւոյ յարձակեցան Տ. Սահակի վերայ, ձեռներն ու ոտքերը կապեցին եւ այնպէս անշարժութեան դատապարտեցին զինքը: Այդ յանկարձական յարձակումէն սարսափած՝ Տ. Սահակ մարեցաւ:

Անմիջապէս Ծաղլվարի Հայ Կանանց Անձնուէր խմբի նախագահ ընկերուէի Սարա փութաց տէրտէրի մօտ եւ ոլէտք եղած խնամքները տուաւ:

Թիչ յետոյ Տ. Սահակ սթափեցաւ եւ երբ իր հանդարտութիւնը գտաւ, բացատրեցի իրեն թէ՝ իր կեանքի մասին մի ուեէ վտանգ չէր սպառնար, թէ եղածը լոկ մի յեղափոխական տաքտիկա էր, որոշ նպատակի համար եւ թէ ինք մեր մօտ կալանաւոր պիտի մնար մինչեւ պայքարի վերջնական ելքը:

Մի քանի ժամ յետոյ, գիւղացիք տեսնելով որ իրենց տէրտէրը դուրս չի դար, միւս կողմէ նշմարելով որ իր խալիքախը դուրս ձղուած է, հաւաքուեցան դպրոցի առջեւ եւ սկսան «Տէր հայր, տէր հայր» կանչել: Այն ատեն փայտէ փեղկերէն մին բանալ տուի, եւ տղերքը քահա-

նան պատուհանին քով բերին, գլուխը բաց եւ թեւերը կապուած:

— Ահա ձեր դաւաճանութեան դէմ՝ յեղափոխութեան պատասխանը, գոչեցի վարը ժողվուած ամբոխին:

Քառորդ ժամ չանցած՝ ամբողջ Ծաղլվար հաւաքւած էր մեր չէնքի շուրջը, հո՛ն էր Ռէս Սէրքօ, իր երկու որդիներով, հո՛ն էին եւ Սըհօ Զան, Փրենց Յարօ, Կօլոշենց Սեղօ, պայտար Մկօ, կիներ, հարսեր ու աղջիկներ եւ բոլոր երախայքը, որոնք լացուկոծով կը պոռչտային եւ իրենց քահանան կը պահանջէին: Աղմուկը հետզհետէ կ'աւելնար:

Յանկարծ Քոմբաշ գիւղի Կարլ Մաքս Կլուբի քարտուղար Հասօ երեւցաւ պատուհանի առաջ եւ երեք անգամ իր հրացանը պարզեց օղին: Ամբողջ պուրժուազիան եւ անդիտակից ամբոխը լեղապատառ խոյս տուին ու փողը ամայութեան մէջ ինկաւ:

Այդ օրուայ բոլոր եղելութիւնները շատ ցնցող տըպաւորութիւն առաջ բերին առ հասարակ ամբողջ Ծաղլվարի մէջ:

Հետեւեալ օրը կրկին բանակցութիւնները սկսան, բայց այս անգամ ներկայացող պատգամաւորները չէին համարձակեր մեր զուան սեմէն ներս մանել, այլ դուրսը կեցած կը խօսէին: Ի հարկէ մենք հաստատ մնացինք մեր որոշումին մէջ եւ յայտարարեցինք թէ՝ մի միայն բոնի ոյժի առջեւ տեղի պիտի տանք:

Ամբողջ շաբաթ մը այդ կացութիւնը տեւեց, վերջապէս տեսնելով որ մենք երբեք տեղի չպիտի տանք հաշտարար խարէական զիջողութիւններու՝ Ռէս Սէրքօ, Սըհօ Զան եւ Փրենց Յարօ, երեք օր առաջ, երկար խոր-

Հըրդակցութիւններէ ետքը, կ'որոշեն դիմումը ընել կա-
ռավարութեան :

Մեր անխոնջ ու յամառ պայքարին յաղթական ար-
դիւնքն էր դա :

Այս երեկոյ, ինչպէս լուր առինք, կը հասնին երկու
ժանտարմա եւ մի յիսնապետ : Վազը կը լինի վճռական
օրը :

Ակսո՞ս որ այս կրիտիկական մօմէնտներուն մէջ
տակաւին բաւարարութիւն չտուիք մեր փողի պահան-
ջումներուն : Զգիտեմ ինչպէ՞ս բացատրել ձեր այդ աշ-
խարհահայեացքը :

թ.

ԾԱՊԼՎԱՐ, 4 Յունվ. 1909

Սէրելի Ընկերներ,

Դրութիւնը վատացաւ, խիստ վատացաւ եւ չգիտեմ
թէ ի՞նչ դուրս պիտի գայ վերջ է վերջոյ : Ինչպէս նա-
ևորդ գրութեամբ ծանուցած էի, Ծապլվարի պուրժուա-
զիական դասակարգի կեղտոս ներկայացուցիչները Ռէս
Սէրքօ, Սըհօ Զան եւ Փրենց Յարօ, մեր ազնիւ գաղափա-
րային պայքարին պատասխանեցին իրենց սովորական
զէնքերովը . մատնութեամբ եւ դաւաճանութեամբ :

Տիո՞ւր երեւոյթ :

Երբ երկու ոստիկաններն ու յիսնապետը հասան
Ծապլվար, Ռէս Սէրքօ եւ իր «խաֆիէ »Ընկերները ցոյց
տուին այն շէնքը որուն մէջ մէնք շաբաթներէ ի վեր ամ-
րացած էինք : Դա մի երկորդ մատնութիւն էր այդ ըս-
տոր արարածներու կողմէ :

Մենք ի հարկէ ընդդիմութիւն ցոյց չտուինք մեր
թուրք եղբայրներուն . սիրալիր կերպով ընդունեցինք զի-
րենք եւ անմիջապէս դուրս ելանք դպրոցէն ու վերադար-

ձանք մեր տուները։ Եւ սակայն պատահեցաւ մի շատ անախորժ դէպք որ մենք չէինք նախատեսեր։ Յիսնապետը և ոստիկանները ձերբակալեցին ու միասին տարին Քոմրաշ գիւղի Կարլ Մաքս Կլուբի քարտուղար ընկեր Հասօն իր- րեւ վաղեմի չարագործ։ Ի զո՞ւր բացատրեցի յիսնապե- տին որ նա գաղափարային պայքար կը մղէր մեզի հետ, թէ Քոմրաշ գիւղի կողմէ մի պատգամաւորներկայացու- ցիչ էր եւ թէ ասոր համար իր անձը պէտք էր նուիրա- կան համարուէք։

— Ինք քիւրտ, դուք հայ, ձեր գործերուն ինչու՞ կը խառնուի, դպրոցը ո՞ւր՝ Հասօն ո՞ւր, նա մի պարզ ա- ւազակ է, կ'ըսէք յիսնապետը։

Պատասխանեցի իրեն թէ՝ «Էքսիրօփրիացիա»յի մա- սին չէի գիտեր ընկեր Հասոյի որոշ հայեցակէտը, բայց թէ նա քիւրտ լինելով իրաւունք չունէր միջամտելու Հա- յերու գործին՝ դա մի անընկունելի գաղափար էր։ Բա- ցատրեցի իրեն Վասիլի Գոլուբէվի տեսութիւնը ցեղային զանազանութիւններու արուեստական բաժանմունքներու մասին, եւ ցոյց տուի թէ մարդկային ընկերութիւնը ո՞չ թէ զանազան ազգութիւններու կը բաժնուի՝ այլ որոշ դասակարգերու, եւ թէ այս տեսութեամբ ընկեր Հասօ, իրեւ պրօլէտարիատ, կը նոյնանար իւեւ Աւոյի եւ Սմենց Վարդանի հետ։

Բոլոր այս փաստացի ապացոյցներն անօդուտ եղան եւ Հասօ տարուեցաւ Արաբկիր, ուր բանտարկուած կը մնայ։

Հաղիւ թէ յիսնապետն ու երկու ոստիկաններն իրենց կալանաւորին հետ հեռացան Ծաղլվարէն, մի ցնցող թը- ուուցիկ բաժնել տուի գիւղին մէջ։ Ահաւասիկ նրա բո-

վանդակութիւնը որ ունի պատմական որոշ նշանակու- թիւն։

« Գիտակի՛ց ժողովուրդ։

« Ահա՛ ճանաչեցիր քո բարեկամներն ու քո թշնա- միները, ահա՛ տեսար թէ գաղափարային ազնիւ հողի վրայ գրուած մեր պայքարին ի՞նչ վատութեամբ պա- տասխանեցին քո հակառակորդները։ Երբ քո աննկուն կամքդ չթեքուեցաւ այդ կեղտոտ դասակարգի պիղծ գարշապարին ներքեւ, անոնք չվարանեցան դիմելու ի- րենց սովորական ու սիրելի միջոցներուն՝ մատնութեան եւ դաւաճանութեան։ Այդ, այդ համիտաբարոյ հայակեր մութ հոգիները կառավարութեան դուռն ափ առին, ոս- տիկանական ոյժին դիմեցին վատաբար։ Այդ գարշելի ա- րարքով նոքա իրենց մահուան դատակնիքը ստորագրե- ցին։ Առջի օրուընէ ի վեր այլեւս մեռած է Ծաղլվարի մէջ պուրժուազիական մատնիչ ու դաւաճան դասակար- գը, մեռած է եւ մութ ուժերու ներկայացուցիչ կղերա- կանութիւնը, մեռած է եւ աղբարային քափիթալիսմի կեղեքիչ դասակարգը, մեռած է գիւղային ազնուակա- նութեան ամբարտաւան տարրը, եւ այդ գիակոյտին վը- րայ կը բարձրանայ Ծաղլվարի գիտակից պրօլետարիա- տը։

« Բայց գիտակից ժողովուրդ, միթէ թոյլ պիտի տա՞ս որ այդ մեռեալներն իրենց եղեռնակործ դաւաճա- նութեան մէջ անողատիժ մնան, միթէ չպիտի՞ վերակեն- դանացնես դանոնք որպէս զի քո ձեռքովը իրենց պատիժը տաս։

« Մենք մեր կեղտոտ ու դաւաճան հակառակորդնե- րուն պէս «Ազրօվօքացիա»ներու չենք դիմեր, մենք այդ վատերուն պէս եղբայրասպան կոխներու չենք մղեր Ծա-

պլղվարի տղէտ ու անդիտակից «մասսա»ները, բայց կ'ը-
սենք մեր գիտակից շարքերուն, — Դաւաճանութիւն եւ
մատնութիւն գործուեցաւ Ծաղլվարի մէջ, դաւաճան-
ներն ու մատնիչները օր ցերեկով, յայտնի համարձակ կը
պլտըտին, գիտակից ժողովուրդը կը ճանչնայ զանոնք,
մենք ոեւէ խրատ կամ խորհուրդ չենք տար, բայց նա
իբրեւ գիտակից ու խորհող ոյժ իր պարտականութիւնը
կ'ըմբռնէ եւ դայն կը գործադրէ, նա բռնակալութեան
ահաւոր շրջաններուն իսկ գիտցաւ թէ ի՞նչ է մատնիչ
դաւաճաններու պատիժը եւ ըստ այնմ պատժեց զանոնք.
այժմ որ անոր գիտակցութիւնն աւելի եւս զարթած է՝
միթէ կարելի՞ է որ ընկրկի, դա վատութիւն եւ ստորնու-
թիւն կը լինի:

« Մենք շատ յարգանք ունինք դէպի ժողովուրդի
ինքնագիտակցութիւնը, ուստի մենք չենք ներեր ոեւէ
կերպով անոր թելադրել իր պարտականութիւնը. մենք
կը գոհանանք գոչելով. »

« Անկցի՛ն վատերը, անկցին մատնիչները, անկցին
դաւաճանները, կեցցէ՛ Ծաղլվարի գիտակից երիտասար-
դութիւնը: »

Այս թոռուցիկը բաժնուելէ մէկ քանի օր յետոյ, և եւ
Աւո կալին մէջ հանդիպելով Ռէս Սէրքոյի՛ կը յարձակի
այդ վատի վրայ եւ բահով մը լաւ ծեծ կը քաշէ, նոյն
երեկոյին Սմենց Վարդան փառաւոր կերպով կը ծեծէ
Սըհօ Զանը: Ահա՛ թէ ի՞նչ անակնկալ արդիւնք տուաւ
այդ վատ ու ցած արարածներու մութ գործունէութիւնը:

Այժմ կացութիւնը լարուած է Ծաղլվարի մէջ: Քոմ-
րաշէն եւս ծանը լուրեր կը հասնին: Հասոյի բանտար-
կութիւնը գրդուած է ամբողջ գեղը Ծաղլվարի դէմ:

Շնորհակալութիւն իմ համեստ գործունէութեան
մասին ձեր շոայլած գովեստներուն համար. իցի՛ւ թէ
անոնց տեղ մի քիչ փող ուղարկէիք: Բարոյական քաջա-
լերանքը բաւարարութիւն չէ կարող տալ Փիզիքական
կարիքներու. դա մի տէխնիքական ճշմարտութիւն է:

Ժ.

ԾԱՊԼՎԱՐ, 3 ՓԵՄՐ. 1909

ՍԵՐԵԼԻ ԲՆԿԵՐՆԵՐ,

«Բէաքցիա»ն կրկին գլուխ բարձրացուց Ծապլվարի
մէջ։ Մեր ազնիւ գաղափարային ծեծին որուն ենթար-
կուեցան երկու յայտնի դաւաճաններ, Բէս Սէրքօ եւ Սը-
հօ Զան, ինչպէս սլատմեցի նախորդ նամակով, մութ
ուժերը պատասխանեցին վատարար յարձակելով ընկեր
Աւոյի եւ ընկեր Վարդանի վերայ։ Համիտարարոյ այդ
մարդակերպ հրէշները գաղանային կատաղութեամբ՝ ե-
կեղեցու բակը՝ կը փորձեն ապտակել մեր ընկերները ի
ներկայութեան Տ. Սահակի որ կեղծաւորաբար կը մի-
ջամտէ կռիւին առաջը առնելու համար։

Այդ վայրագ դաւաճանութիւնը ի հարկէ խորին ցա-
սում առաջ բերաւ առ հասարակ մեր բոլոր գիտակից
շարքերուն մէջ։ Նոյն իսկ ժողովրդի չէզոք ու լուսամիտ
տարրը խստիւ բողոքեց այդ ստոր արարքի դէմ, օրի-
նակ՝ Կօլօշենց Սեղօ, մի ազնուական եւ բաւականաշափ
գարդացեալ անձնաւորութիւն, դէպքի երեկոյին եկաւ

ինձ մօտ եւ ցաւ յայտնեց պատահած իրականութեան մա-
սին ու ամբաստանեց Բէս Սէրքօն իրեւ դրդիչ եւ կադ-
մակերպիչ այդ վատ դաւադրութեան։ թէեւ դէպքը պա-
տահած ժամանակ այդ կեղտոտ պուրժուան մի քանի օրէ
ի վեր բացակայ էր Ծապլվարէն։

Ի հարկէ կուահեցի թէ Կօլօշենց Սեղօ ունէր յետին
միտքեր, թէ նա թաքուն հակառակորդն էր Բէս Սէրքո-
յի, թէ կ'ուզէր անոր դիրքը գրաւել գիւղին մէջ եւ թէ
կը յուսար իր նապատակին համնիլ դիմելով մեր աջակցու-
թեան։ Այդ ամէնը ինձ ծանօթ էր, բայց եւ այնպէս չէի
կրնար մերժել իր անկեղծ զգացումները, մանաւանդ որ
Սեղոյի միջոցաւ մենք մեր ափի մէջ կ'առնէինք նաեւ
գործաւորական դասակարգը, որ մինչեւ հիմա ցուրտ
վերաբերում ունեցած է մեզի հանդէպ, քանզի պայտար
Մկօ փեսան էր Կօլօշենց Սեղոյի։

Ուստի ի նկատի առնելով մեր գործունէութեան
նկատմամբ արտայայտուած անկեղծ համակրութիւնը,
ե՛ւ բանուրական դասակարգի շահերը, ե՛ւ մանաւանդ
կուսակցութեան շահերը, ամենաջերմ վերաբերում ունե-
ցայ Սեղոյի հանդէպ։

Առ այժմ միասին կազմեցինք ո՛չ կուսակցական
չէզոք հողի վրայ մի լիկա, որ նպատակ ունի ամէն գը-
նով պայքար մղել Բէս Սէրքոյի եւ իր քլիքի դէմ։

Դա մի աչքի ընկող յաղթանակ է մեզի համար։

Կարելի է ըսել որ ներկայիս Ծապլվար բաժնուած է
երկու հաւասար ոյժով թշնամի որոշ բանակներու։ Մէկ
կողմը կան գիտակից տարրերն իրենց դասակարգային
որոշ բաժանմունքներով, իրենց ինքնայտուկ պահանջ-
մունքներով, աշխարհահայեցքով ու ծրագրով։ միւս

կողմը կան անդիտակից մասսաները, կեղեքիչ տարրերը, սեւ ուժերը, վերջապէս ամբողջ թէաքցիան:

Եւ խորհի՛լ թէ վեց ամիս առաջ Ծապլարի մէջ գոյութիւն չունէին ո'չ պուրժուազիա, ո'չ աղբարային քափիթալիսմ, ո'չ հողային բանուրականութիւն, ո'չ գործաւորական դասակարդ, ո'չ պրօլետարիատ, ո'չ գիտակից մտաւորականութիւն, ո'չ բէաքցիա, ո'չ կղերական մութուժեր, վերջապէս ոչինչ: Ու այդ տգէտ ու տխմար գեղացիները մեղապարտ հանդարտութեամբ միասին կ'ապրէին, առանց նշմարելու զիրենք բաժնող անանցանելի խրամատները, իրենց ընդդիմամարտ շահերը եւ ամէն գնով պայքար մղելու հրամայողական պահանջը:

Զէ՛, կարելի չէ ասել թէ Փանջունի Ծապլարի մէջ պարապ անցուց ժամանակը:

Բայց ափսո՞ս, մինչեռ հոս դրութիւնը հետդհետէ կը լաւանայ, Քոմբաշ գիւղի մեր քուրդ եղբայրներէն վրդովեցուցիչ լուրեր կը հասնին:

Կարլ Մաքս Կլուբի քարտուղարը, որ ինչպէս գիտէք, ձերբակալուելով Արաբկիր տարուած էր, Հոն դատաստանի ենթարկուած է և իրեւ նախկին դատապարտեալ կրած է ծանր պատիժ, ընդունելով երկու տարուան բանտարկութիւն: Դպրոցի մէջէն արձակած հրացանի հարուածները շատ ծանրացուցած են իր յանցանքը:

Երբ դատապարտութեան լուրը կը հասնի Քոմբաշ գիւղը, մեր քուրդ եղբայրները բնականաբար սաստիկ կը յուղուին, որովհետեւ Հասօ կը վայելէ մեծ ժողովրդականութիւն: Քրդերը բացէ ի բաց կ'ամբաստանեն մեղ՝ կանութիւն: Քրդերը բացէ ի բաց կ'ամբաստանեն: Քէլէշ Մրկօ որ մօտիկ ազգականութիւն ունի Կարլ Մաքս Կլուբի քարտուղարին հետ, երէկ եկաւ ինձ մօտ եւ ըստ թէ դրու-

թիւնը շատ վատ հանդամանք ստացած է գիւղին մէջ, թէ քրդերը կ'ուղեն յարձակիլ Ծապլարի վերայ եւ գիւնդը աւարի տալ իրենց բանտարկեալ ընկերոջ վրէժը լուծելու համար, թէ ինք առ այժմ արդիլած է յարձակումը, խոստանալով որ դայ մեր քով ու հաշտարար եղանակով կարգադրէ ինողիրը:

Քէլէշ Մրկօ, իբրեւ հաշտարար միջոց, կ'առաջարկէ որ Ծապլարցիք քառասուն սոկի վճարեն Քոմբացցի քրդերուն, հակառակ պարագային ինք անկարող պիտի ըլլայ զապել գիւղացիներու վրէժինդրութիւնը:

Պատասխանեցի թէ գործին ամբողջ պատասխանատուութիւնը կը ծանրանար Բէս Սէրքոյի վերայ, թէ հարկ էր գիմել անոր եւ ի հարկին ամէն գնով պահանջել իրենց իրաւունքը: Քէլէշ Մրկօ զնաց այդ կեղտոտ արարածի մօտ, որ նախ վատաբար մեզ մատնած է՝ ըսելով որ մենք ենք Հասօն դպրոց հրաւիրողը, եւ յետոյ յայտարարած է որ անկարելի է գիւղին մէջ քառասուն սոկի հաւաքել:

Քէլէշ Մրկօ մի շարաթ պայմանաժամ տալով մեկնեցաւ լարուած դրութեան տակ: Տեսնենք բանից ի՞նչ դուրս կը դայ:

Մինչեւ այսօր ուշադրութիւն չդարձրիք դրամական հարցի մասին, եւ ես վերջապէս ստիպուեցայ դիմել Կօլոշենց Սեղոյի եւ մի քիչ փող վերցնել Կուսակցութեան անունով:

Ներկայ ճգնաժամային բոպէներուն փողի պակասութիւնը կը վնասէ ամբողջ կազմակերպական գործին:

ԺԱ.

ԾԱՊԼՎԱՐ, 19 Փետր. 1909

Սիրելի Ընկերներ,

Գաղափարային պայքարը հասած է իր ծայրագոյն աստիճանին։ Ծաղլվարը կը վերածնի եւ աղատ ու անկաշկանդ միտքերն իրենց տիրապետութիւնը կը տարածեն կործանուած խաւար ուժերու աւերակին վրայ։ Մի պատահական դէպք, որը թէեւ չունի սկզբունքային հանդամանք, վերջնականապէս բնորոշեց Ծաղլվարի յեղափոխական եւ յետաղիմական տարրերու միմեանց հանդէպ ունեցած դիրքը։

Դիմակները պատռուեցան եւ պուրժուազիայի ու կղերականութեան ներկայացուցիչները դուրս տուին իրենց հոգիի ամբողջ սեւութիւնը։

Դա մի մխիթարական երեւոյթ է։

Ահա՛ իրողութիւնն իր բովանդակ մերկութեան մէջ։

Մի շաբաթ առաջ Սմենց Վարդան կը փախցնէ Սըհօքանի հարսերէն մին՝ Նազլուն եւ կը տանի իր մօտ, ի հարկէ հարսի հաւանութեամբը։ Այդ աղատ կամքով,

աղատ պայմաններու տակ, աղատ համոզումով կատարւած արարքը մի անհնարին յուղմունք յառաջ կը բերէ Ծաղլվարի ստրկամիտ դասակարգերուն մէջ։ Նազլուի ամուսինը, մի կեղտոտ պուրժուա, իր կուսակիցներու հետ վատաբար կը յարձակի Վարդանի տան վրայ եւ կ'ուզէ բռնի ետ առնել իր կինը։

Թէեւ Սմենց Վարդան ո՛չ կուսակցական հանգամանքով առեւանգած էր Նազլուն՝ այսու հանդերձ մենք չէինք կարող պարզ հանդիսատես մնալ, մանաւանդ որ ինդիրը ունէր իր ընկերային-բարոյական կողմը, որը հարկ էր երեւան հանել։ Ես, Խեւ Աւո, ընկերուհի Սարա, Կարօ, Կոլոշենց Սեղօ եւ պայտար Մկօ փութացինք մեր ընկերով պաշտպանութեան։ Տեղի ունեցաւ կատաղի կը ոիւ, բայց Նազլուն մնաց մեղ մօտ։

Անմիջապէս կազմեցի ընկերական ատեան եւ հարցը դրի սեղանի վրայ, քննելու համար անոր միայն ընկերային-իմաստասիրական հանդամանքները։ Հրաւիրուեցան ներկայ լինելու նաեւ Տ. Սահակ քահանան, Նազլուի ամուսին՝ Խէջօ եւ ուրիշներ։

Ահա՛ ընկերային Ատեանի որոշումը որ թուոցիկի ձեւով հաղորդուեցաւ Ծաղլվարի Հայութեան։

« Նկատելով որ պուրժուազիական ներկայ ընտանեկան կազմութիւնը հիմնուած է հնադարեան բռնակալ հիմքերու վրայ։

« Նկատելով որ կնոջ միմիայն իր ամուսնոյն պատկանիւը սեփականատիրական սիսալ սկզբունքէն բխած է։

« Նկատելով որ նախնական ընկերութիւններու մէջ կինը առհասարակ բոլոր համայնքին կը պատկանէր, առանց որոշ ամուսնու։

« Նկատելով որ ընտանիքի քրիստոնէական կամքա-

Կերպութիւնը կարող չէ հաշտ գնալ դարուս ոգիին հետ .
« Նկատելով որ կինը իր մարմոյն բացարձակ տէրն
է եւ անոր գործածութեան ազատ տնօրինուհին .

« Նկատելով որ Նազլու ազատ կամքով թողած է
Խէջօն եւ միացած Սմենց Վարդանի հետ .

« Ընկերային ատեանը կ'որոշէ նախ՝ չնորհաւորել
ընկերուհի Նազլուն եւ ընկեր Վարդանը իրենց աննախա-
պաշար ու ազատամիտ համոզմունքներուն համար , երկ-
բորդ՝ կ'որոշէ Նազլուի եւ Վարդանի միութիւնը օրի-
նաւոր ճանչնալ , երբորդ՝ կը դատապարտէ Խէջօն իր
բռնաւորական արարքներուն համար . չորրորդ՝ կը հրա-
ւիրէ Ծաղլվարի դիտակից Հայուհիները հետեւելու ըն-
կերուհի Նազլուի ձերբազատման օրինակին :

« Կեցցէ՛ ազատ սէրը ,
« Կեցցէ՛ ազատ միութիւնը ,
« Անկցի՛ ամուսնական ստրկութիւնը ,
« Անկցի՛ն ընտանեկան շղթաները ,
« Կեցցէ՛ն դիտակից շարքերը : »

Հակառակ ընկերական ատեանի այս արդար ու հաշ-
տարար կարգադրութեան Ծաղլվարի մութ ուժերը չու-
զեցին կատարուած իրոզութեան առջեւ խոնարհիլ եւ նոյն
իսկ վատաբար դիմում ըրին Արաբկիրի Առաջնորդարա-
նին՝ որպէս զի բռնի յափշտակեն Նազլուն իր օրինաւոր
ընկերակցին քովէն ու յանձնեն ազօրէն էրկանը ձեռք :

Սպասելով Առաջնորդարանի կողմէ դրկուելիք քըն-
նիչներուն՝ առ այժմ Ծաղլվարի մութ ուժերուն եւ դի-
տակից տարրերուն միջեւ բաղխումները համարեա՛ ամէ-
նօրեայ դարձած են : Ընկերային այս կենաչան հարցի
շուրջ մղուած բուռն պայքարը , որմէ անշուշտ պիտի ծնի
պուրծուազիական քայլայուած ընկերութեան վերջնական

քանդումը , մի շատ մխիթարական եւ քաջալերիչ երեւոյթ
է եւ ցոյց կուտայ մեր անխոնջ ջանքերու անտեղիտալի
արդիւնքները :

Ակիսո՞ս որ , միւս կողմէ , Քոմրաշ գիւղի մեր քիւրտ
եղբայրները հետզհետէ սպառնական կը դառնան : Իրենց
քառասուն ոսկիի պահանջքին պայմանաժամամը արդէն վա-
ղուց լրացաւ . մի նոր պայմանաժամ տուին զեղչելով
նաեւ իրենց պահանջը երեսուն ոսկիի : Բայց անկարելի
պիտի ըլլայ ունէ գումար հաւաքել , որովհետեւ ամբողջ
Ծաղլվար լարուած դրութեան մէջ է եւ անկարելի է ընդ-
դիմամարտ տարրերու միջեւ համաձայնութիւն կա-
յացնել :

Կոլոշենց Սեղօ կը պնդէ թէ թէ Սէրքոյի տունը
պահուած կայ պատրաստ դրամ եւ թէ հարկ է բռնի վեր-
ցնել այդ գումարը կեղտոտ աբարածի քոյէն , փրկելու
համար գիւղը՝ սպառնացող վտանգէն :

Ի հարկէ Սեղոյի առաջարկը ունի լուրջ հիմք եւ
կ'արժէ նկատողութեան առնել : Խեւ Աւօ բացարձակապէս
համամիտ է թէ Սէրքոյի տունը թալանի տալու եւ հոն
պահուած դրամները գրաւելու մասին : Խնդիրը սկզբուն-
քային տեսակէտով կարելի է խիստ օրինաւոր համարել ,
իբրեւ մի էքսբրօֆիրիացիայի ակտ , ընդհանուրի փրկու-
թեան հրամայողական պահանջքէն բղխած :

Այս երեկոյ մեր ընդհանուր գումարման մէջ կը
ծեծուի այդ հարցը եւ կը տրուի վճռական որոշումները :

Ճգնաժամային բոպէներուն՝ պէտք է ցոյց տալ որոշ
կամք , ազդու գործունէութիւն : Acta, non verba. այս
պէտք է լինի մեր նշանաթանը :

Մի վերջին բառ .
Փող ուղարկեցէ՛ք :

բերուն. բաւարարութիւն տալով միանդամայն Քոմրաշ
գիւղի քրդերու պահանջըին:

Ընկեր Սեղոյէն ետք, ես խօսք առի եւ հարցը մի-
անդամայն սկզբունքային իմաստասիրական տեսակէտէն
քննելով, ցոյց տուի թէ որքան արդար եւ օրինաւոր էր
մեր ընկերին առաջարկը: Ժողովը միաձայնութեամբ վըն-
ուց հետեւեալ օրն իսկ որոշումը դնել գործնական հողի
վրայ:

Այսպէս ուրեմն երկու օր առաջ, Սմենց Վարդան,
Խեւ Աւո, պայտար Մկօ, Կոլոչենց Սեղօ, Կարօ, ընկերու-
հի Սարա եւ ես գացինք գիրք դրաւելու Ռէս Սէրքոյի
քնակարանին շուրջը:

Այս վատ արարածը նախապէս իմանալով մեր գի-
տաւորութիւնը, որ արդէն ծածկելու ջանք չէինք ըրած,
քանի որ կը գործէինք յեղափոխական որոշ եւ լէդալ պայ-
մաններու տակ, իր մօտ հաւաքած էր Ծաղլվարի բոլոր
մութ ոյժերը:

Հազիւ թէ մեր մարտական խումբը երեւցաւ բնա-
կարանի շրջակայքը, ահա տեսանք որ Ռէս Սէրքօ եւ Տէր
Սահակ կուղային մեր մօտ: Իսկոյն գուշակեցի թէ մի
յետին խարեբայութիւն կ'ուզէր փորձել ծեր աղուէսը,
բայց բարեբախտաբար ինքնադիտակցութիւնը արդէն
գագաթնած էր Ծաղլվարի մէջ. Ծնչազուրկ պրօլետարիա-
տարթնած էր՝ Ծաղլվարի մէջ. Ծնչազուրկ պրօլետարիա-
տարթնած էր՝ Ծաղլվարի մէջ. Ծնչազուրկ պրօլետարիա-

տարթնած էր՝ Ծաղլվարի մէջ. Ծնչազուրկ պրօլետարիա-
տարթնած էր՝ Ծաղլվարի մէջ. Ծնչազուրկ պրօլետարիա-
տարթնած էր՝ Ծաղլվարի մէջ. Ծնչազուրկ պրօլետարիա-

ԺԲ.

ՄԱՇԿԵՐՑ, 27 Փետր. 1909

Սիրելի Ընկերներ,

Յաղթութիւն, յաղթութիւն: Վերջապէս մեր կո-
րովի դաղավարային ազնիւ պայքարը անպայման տարաւ
յաղթանակը, անկեղծ յեղափոխական սկզբունքը փրկուե-
ցաւ, թէեւ Ծաղլվար կործանեցաւ: Ափսո՞ս, ի՞նչ անել,
կարելի չէ ճուածեղ եփել առանց հաւկիթ կոտրելու, կ'ա-
սէ ֆրանսական առածը: Ծաղլվարի աւերակներուն վրայ
այժմ կը բարձրանայ մաքուր իտէալական պայքարի հո-
յակապ յաղթակամարը:

Դա մի շօշափելի արդիւնք է մեղի համար:

Ինչպէս նախորդ նամակով ծանուցած էի՝ մեր վեր-
ջին ժողովը կայացաւ մեր բոլոր մարտական գիտակից
ոյժերու ներկայութեան: Ընկեր Սեղօ մի կրակոտ դա-
սախօսութեամբ առաջարկեց անմիջապէս յարձակիլ Ռէս
Սէրքոյի տան վերայ, եւ բոնի ոյժով վերցնել հոն պահ-
ած դրամները, կեղտոտ պուրժուազիայի այդ անարդ
դէնքերը, եւ զանոնք վերադարձնել իրենց օրինաւոր տէ-

անհաշտ թշնամի, հետեւաբար բռնի պիտի մտնայինք իր բնակարանը:

— Բայց ի՞նչ հարկ բռնի մտնելու, քանի որ դուռը բաց պիտի գտնէք, ըստ այս ստրկամիտ սողունը:

— Նոյն իսկ եթէ դուռը բաց գտնենք, նախ պիտի խորտակենք ու յետոյ ներս մտնենք, դռչեցի վճռաբար. այս է ներկայ իրականութեան հրամայողական պահանջը:

Տէր Սահակ ինքն ալ միջամտեց եւ երկուքը միասին աղաչանքներով ու հագար երդումներով պնդեցին թէ տանը մէջ ենթագրուած դրամը դոյութիւն չունէր, թէ այդ՝ Կօլօշենց Սեղոյի մի սուտ խօսքն էր որ անձնական հակառակութեան համար ստեղծած էր, թէ իր մօտ եղած ամբողջ պատրաստի դրամը վեց ոսկի էր եւ թէ ինք պատրաստ էր այդ դումարը անմիջապէս մեղ յանձնելու, եթէ ուղէինք:

Պատասխանեցի թէ հարցը դումարի քանակութեան վրայ չէր, թէ նոյն իսկ եթէ ո՛չ մի փող գտնուէր իր մօտ՝ մենք ամէն գնով պիտի յարձակէինք իր բնակարանի վրայ, քանի որ այդ էր ժողովի որոշումը:

Այս բանակցութեան միջոցին՝ Կօլօշենց Սեղօ յանկարծ վերցուց իր հաստ գաւազանը եւ ուժգին խփեց Սէրքոյի գլխին: Գլուխը պատառուեց եւ արիւնը սկսաւ հոսիլ: Դա եղաւ կոիւի ընդհանուր նշանը.

Կոռւեցէ՛ք, տղերք, կոռւեցէ՛ք քաջ քաջ,

Անվեհեր կանգնած թշնամու առաջ,

սկսաւ երգել իեւ Աւո: Ու ահա մէկէն Սէրքոյի տնէն դուրս խուժեցին իր տղաքն ու փեսաները, բիրերով զինած, նաեւ Սըհօ Զան, Փրենց Յարօ ու իր փեսան, եւ

ուրիշ յետաղիմական տարրեր: Պայքարը ստացաւ սոսկալի երեւոյթ, կոռողներու կատաղութիւնը մէկ կողմէ, զիներու եւ մանուկներու վայնասունը միւս կողմէ, մի աննկարագրելի տեսարան կը պարզէին: Մեր տղերքը աննման քաջութիւն ցոյց կուտային եւ անշուշտ վերջնական յաղթանակը կը մնար մեզ, երբ լսուեց կիներու մի ահաբեկ աղաղակ.

— Քրդերը կուգան...

Եւ ահա՛ նշմարեցի տասնըհինորի չափ զինեալ ձիաւորներ, որոնց մէջ կ'երեւային Քոմբաշ գիւղի Կարլ Մաքս Կլուբի մի քանի անդամները, իրենց նախագահին ղեկավարութեան տակ:

Մի ուժգին հրաժանաձգութիւն լսուեց. Ռէս Սէրքօ վատարար փոռուցաւ գետին. մեր քաջ ընկեր Աւո եւս առիւծի պէս ընկաւ: Երկուքն ալ մեռած էին: Մօմէնթը կրիտիկական էր. ես շտապեցի դէպի եկեղեցի, մտայներս, դիմեցի դէպի խորանը, որու ետեւ գտայ մի ինչ որ նկուղ. վերցրի կափարիչը եւ ծածկուեցայ հոն, կափարիչը վերստին գոցելով: Քսանըչորս ժամ մնացի այդ տեղ, անախորժ դրութեան մէջ:

Երբ ամէն աղմուկ գաղրեցաւ եւ վստահ եղայ թէ Քոմբաշի քրդերը մեկնած էին, դուրս ելայ թաքստոցէն: Եկեղեցին ամբողջ թալանուած էր, թալանուած էր եւ Ծապլար, Ռէս Սէրքոյի, Սըհօ Զանի, Կօլօշենց Սեղոյի, Տէր Սահակի, Սմենց Վարդանի, վերջապէս բոլոր աչքի ընկող առները կ'այրէին տակաւին, այրած էր եւ նորաշէն դպրոցը: Տեսայ Տէր Սահակի, Սեղոյի, Վարդանի եւ ուրիշներու գիակները որոնք իրենց արիւնով գետինը կը ներկէին:

Գլուղին մէջ չկար ո՛չ մի կենդանի չունչ. ողջ մնա-

ցողները խոյս տուեր էին մօտակայ գիւղերը։ Աւերակ եւ
ամայութիւն կը տիրէր ամէն կողմ։

Տեսարանը ցնցող եւ տպաւորիչ էք։

Պաշտօնս աւարտած համարելով որոշեցի անմիջա-
պէս հեռանալ գիւղէն։ ակսո՞ս որ փոխադրութեան մի-
ջոցներ չկային եւ ստիպուեցայ ոտքով գնալ։ Բարեբախ-
տաբար մի քանի ժամ քաղելէ ետքը դաշտի մէջ նշմարեցի
Ծէրքոյի էշը որ կ'արածէր։ Փութացի իր մօտ, հե-
ծայ վրան ու այսպէս հասայ Մաշկերտ գիւղը, ուրկէ կը
գրեմ այս նամակը։

Այսպէս ուրեմն գաղափարային ազնիւ կոիւը տուաւ-
իր անդրանիկ գոհերը, արինը հոսեց եւ ոռողեց դասա-
կարգային պայքարի դաշտերը, որոնք ի հարկէ պիտի
արդասաւորուին ու պիտի տան իրենց արդինքը։ Մենք
կատարեցինք մեր պարտականութիւնը եւ այժմ խղճի
հանդարտութեամբ կ'սպասենք քաղելու մեր ջանքերու
պտուղը։

Առ այժմ մտադիր եմ մնալ Մաշկերտ։ Գիւղը աւելի
բազմամարդ է քան Ծապլվար։ Գործունէութեան մի նոր
դաշտ կայ հոս։ նո՞ր փրօփականտ, նո՞ր կազմակերպու-
թիւն, նո՞ր պայքար, նո՞ր արդիւնք։

Երեւոյթները մխիթարական ու քաջալերիչ են։ Պէտք
չէ վհատիլ եւ պէտք է պատրաստել կոիւի նոր ասպարէդ։
Փող ուղարկեցէ՛ք իմ նոր հասցէին։

ԸՆԿԵՐ ՓԱՆԶՈՒՆԻ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՄԷԶ

ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆ ՀԱՍԱԿԱՆԻ ԸՆԿԵՐ ՓԱՆԶՈՒՆԻ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Ընկեր Փանջունիի անունը այնքա՞ն ժողովրդական
է այսօր մեր մէջ որքան քերեւս Պօղոս Փաշա Նուպարի
անունը։ Ծապլվարի հերոսը՝ տակալին իր առոյգ կենդա-
նութեան մէջ՝ արդէն իսկ անմահութեան լուսապսակովը
զարդարուած է։ Իր համբաւը անսահման է եւ իր հեղի-
նակութիւնը անվիճելի։ Իր նամակները յեղափոխութեան
ընծայացուներու հաւասարմքը կը կազմեն եւ գրեթէ օրէն-
քի ոյժ ունին։ Այդ նամակներուն առաջին մասը, որոնք
Փանջունիի Ծապլվարեան Առաքելութիւնը կը պատմեն,
արդէն մասնաւոր հատորով լոյս տեսած են։

Այս նոր հատորը կը պարունակէ իր միւս նամակնե-
րուն հաւաքածոն, որոնց մէջ մեր հերոսը մանրամասնօ-
րէն կը տեղեկագրէ իր Վասպուրականի մէջ ունեցած գոր-
ծունէութիւնը որ նուազ յուզումնալից ու յատկանշական
չէ քան Ծապլվարինը։

Այս նամակներուն կցուած են նաև իր դասախոսութիւններու շարքը որ միւսներուն հետ երեւցած է Բիւղանդինի մէջ։ Այսպէս ուրեմն երկու հատորներու մէջ ամփոփուած են Ընկեր Փանջունիի ամբողջ հրապարակւած գրութիւնները։

Իր դասախոսութիւններէն ետքը, Ընկեր Փանջունի յանկարծ հեռացաւ հրապարակէն, կարծես կամաւորապէս ուզելով մոռցնել իր անունը։

Արդեօֆ հրաժարեցա՞ւ յեղափոխական գործունելութենէ, արդեօֆ իր գաղափարներն ու համոգումները չարափոխե՞ց կամ ուրացա՞ւ։ Դասալի՞օ մըն է Փանջունի։ Բնա՛ւ երբեք։

Իրեն նման նկարագիրները ո՞չ տարիներէն, ո՞չ դէպէներէն, ո՞չ յուսախարութիւններէն կ'ազդուին։

Ապահովաբար օր մը կրկին պիտի լսենք իր անունը։ Երբ ժամը հնչէ՝ ան իր շարքներուն գլուխը պիտի գտնուի։

Ծաղլվարի հերոսը իր վերջին բառը չէ ըսած տակաւին։

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

1914 Փետր.

ԸՆԿԵՐ ՓԱՆՁՈՒՆԻ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՄԷՋ

Բիւղանդինի բարեկամ ընթերցողներէն շատեր ատեն ատեն տեղեկութիւններ կը հարցնէին ինէ ընկեր Բ. Փանջունիի մասին, որուն Ծաղլվարի մէջ կատարած առաքելութիւնը, իր նամակներէն բաղերով, հրատարակած էի այս քերթին սիւնակներուն մէջ։ Վերջին նամակը, գուցէ չէ մոռցուած, Մաշկերտէն գրուած էր, ուր մտադիր էր հաստատուիլ մեր գործիչը, ին՛ն շարունակելու համար իր շինարար ու փրկագործ պաշտօնը։ Այսպէս ուրեմն, հարկ էր իր հետքը փնտռել այնուեղ, գրհացում տալու համար մեր հետաքրքիր բարեկամներուն։

Պոլսերնակ Մաշկերտցի մը — եւ ինչո՞ւ անունը ծածկեմ, — նոյն ինքն Պ. Դ. Խաչկոնց, իմ խնդրանին վրայ, ազնուորէն յանձն առաւ իր ծննդավայրէն տեղեկութիւններ ուզելու ընկեր Բ. Փանջունիի մասին, եւ իրաւ ալ, քանի մը շաբար ետքը, ինձ հաղորդեց քէ մեր համակրելի հերոսը հազիւ ամիս մը Մաշկերտ մնացած՝ յետոյ շտապով մեկնած է Վան, իր ընդունած մէկ ստիպողական հրահանգին համեմատ։

Թէ ընկեր Փանջունի ի՞նչ գործունելութիւն ունեցած է Վանի մէջ, գուցէ այդ կէտը մասամբ լուսաբանէ հետեւեալ նամակը որ իր գրչէն ելած է եւ զոր յաջողեցայ ձեռք ձգել նիշդ այն աղքիւրէն՝ ուրկէ բաղած էի նախապէս Ծաղլվարեան նամակները։

Ա.

ՎԱՆ, 26 Մայիս 1909

Սիրելի Ընկերներ,

Զեր որոշ եւ հրամայողական հրահանգներուն համեմատ, Մաշկերտէն անմիջապէս մեկնեցայ Վան՝ ուր կը դուռուիմ մէկ քանի շաբաթէ ի վեր:

Ժողովրդի պաշտպանութեան համար հարուստներէն զէնքի դրամ հաւաքելու ծրագիրը որ ինձ կը հաղորդէք, մի շատ գեղեցիկ գիւտ է, երբ ի նկատի առնենք ներկայ ժողովրդային հոգեբանութեան մօմէնտը: Բայց ափսո՞ս որ Մարտ 31ի ըէտաքցիան զսպուած կ'երեւի եւ վստահութիւնը կրկին կը ծնի պուրժուազիական վատ հոգիներու մէջ: Իցի՛ւ թէ Մարտի վերջերը հոս դտնուած ըլլայի, երբ կոտորածի ուրուականը սարսափի մատնած էր վասպուրականի հայութիւնը: Այս կեղտու արարածները մինչեւ որ մահը չհոտոտեն՝ իրենց քսակները չեն բանար:

Յամենայն դէպս, հոս համենելուս պէս դիմեցի քառաքի ջոջ աղաներուն, ըսի թէ կուսակցութիւնս որոշած է զիրենք պաշտպանել հաւանական կոտորածի մը դէմ եւ

ասոր համար զէնքի պահանջք կայ եւ թէ հարկ է փող տալ այդ պահանջքի բաւարարութիւն տալու համար:

Այդ կեղտու արարածները չհամարձակեցան բացէ ի բաց մերժել մեր պահանջմունքը, բայց դիմեցին մի ճիղ-շիթական ստոր միջոցի.

— Մենք յօժարակամ կը վճարենք զէնքի համար պէտք եղած դրամը, պատասխանեցին, բայց նախ՝ հարկ է որ բոլոր կուսակցութիւնները միանան եւ համերաշխ գործեն:

— Ի՞նչ կուսակցութիւններ, հարցուցի դարձացած:

— Արմենական, Հնչակեան, եւն. պատասխանեցին անհամօթաբար. միայն այդ պայմանաւ դրամ կուտանք, եթէ ոչ՝ տասը փարա չպիտի վճարենք:

— Բայց մենք ձեր աղտոտ էութիւններու պաշտպանութեանը համար է որ զէնքի դրամ կը պահանջենք, գոչեցի:

— Նախ իրարու հետ համաձայնեցէ՛ք, պնդեցին:

Հէնց այդ բոպէին խորհեցայ րէվոլվէրը դուրս շպրտել գրպանէս ու տա՛նկ, տա՛նկ, տա՛նկ տալ անոնց ճակատին ու գետին փոել զիրենք, որպէս զի համոզուին իրենց կեանքը զէնքով պաշտպանելու հարկաւորութեան մասին, բայց ինքզինքս զսպեցի:

Տեսնելով որ ուրիշ ճար չկայ, ինձ մօտ հրաւիրեցի միւս կուսակցութիւններու ներկայացուցիչները եւ անկեղծօրէն ու առանց յետին միտքերու, առաջարկեցի ժողովրդին պաշտպանութեան համար հարուստներէն զէնքի դրամ հաւաքելու համար համաձայնուիլ: Նոքա համաժառութիւն յայտնեցին: Ես այն ատեն իրենց ներկայացուցի հետեւեալ անկեղծ ու օրինաւոր պայմանները, իբրեւ հիմք կայացած համաձայնութեան:

Ա. Հանդանակութեան համար դիմում միասին պիտի ընենք.

Բ. Դրամը պիտի պահուի միմիայն մեր կուսակցութեան քով.

Գ. Հարկաւոր զէնքերը պիտի գնուին մեր միջոցաւ.

Դ. Հաւաքուած դրամով պիտի զինուին մեր մարտական խումբերը.

Ե. Դրամներու գործածութեան հաշիներու քօնթրու կը կատարուի եւ կը վաւերացուի մեր կօմիտէի ձեռքով:

Վերջապէս, գործին ամբողջ բեռն ու ծանրութիւնը մեր կուսակցութիւնը իր վրայ կ'առնէ անձնուիրութեամբ: Իսկ իրենց կը տրուի բացարձակ ազատութիւն մարտական անջատ խումբեր կազմելու իրենց նիւթական միջոցներով:

Կը կարծէի որ ներկայացուցիչները խանդավառութեամբ պիտի ընդունէին այս անկեղծ, անվերապահ եւ անշահախնդիր պայմանները, բայց ընդհակառակը, նոքաինձ մօտ եկած էին յետին միտքերով, նոքա կ'ուղէին ժողովրդի փրկութեան գործը վիժեցնել եւ ասոր համար առաջարկեցին անընդունելի, ապսուրք եւ նուաստացուցիչ պայմաններ, որպէս.

Հաւաքուած դրամները հաւասարապէս բաժնուին կուսակցութեանց միջեւ իրենց թիւին համեմատութեամբ:

Մախսուած դրամներու մասին փոխադարձ քօնթրու ըլլայ:

Ինքնապաշտպանութեան համար ձեռք առնուելիք միջոցները որոշուին համաձայն խորհրդակցութեամբ:

Եւ ուրիշ կարգի յիմարական պահանջմունքներ, որոնք անպայման պէտք էր մերժել:

Այսպէս ուրեմն համաձայնութեան համար մեր ան-

կեղծ ջանքերը ջուրն ինկան յիմար յետին միտքերու պատճառաւ եւ մեր ջոջ աղաները մերժեցին փող տալ իրենց կեանքի պահպանութեանը համար:

Այն ատեն խորհեցայ մի այլ միջոց որը կրնար ցնցող տպաւորութիւն յառաջ բերել բովանդակ Վասպուրականի մէջ եւ եփ հանել դաւաճան պուրժուաներու ցամաքած արիւնը:

Մի երեկոյ դիմեցի 96կ ջարդերու կաղմակերպէիչ թուրք խուժանավար Համուտ Աղենց Հասանի եւ առաջարկեցի որ, եթէ կարելի էր մի փոքր, այսպէս ասած, մի աննշան ջարդ կազմակերպէր, սարսափ տալու համար հայ ջոջերուն: Դա պիտի լինէր մի պարզ առողջապահական արիւնառութիւն որ իբրև անհերքելի համոզիչ փաստ պիտի ծառայէր զէնքի համար դրամ տալու հարկաւորութեան մասին:

Համուտ Հասան սկզբուքնով չհակառակեցաւ այդ խորհրդին՝ միայն թէ դիտել տուաւ որ ժամանակը յարմար չէր, թէ դա կարելի էր իրադործել Մարտ 31ի օրերուն եւ թէ այժմ, Ազատարար Բանակի յաղթական մուտքէն ու Ապտիւլ-Համիտի գահընկեցութենէն ետքը, ինք չէր ուզեր մի այդպիսի պատասխանատութիւն բերել իր վրայ:

Այդ հայեցակէտը ունէր իր փաստացի կողմերը, ուստի չկրցայ շատ պնդել:

— Յարմար ատենին ես միշտ պատրաստ եմ գործելու, եղրակացուց Համուտ Հասան, իրմէ բաժնուած միջոցիս:

Այսպէս ուրեմն, զէնքերու անունով փող հաւաքելու ծրագիրը առ այժմ իրականութիւն չդտաւ:

Բայց պէտք չէ յուսահատիլ, այլ սպասել հոգեբանական ըռադէին:

Ի բաց առեալ այս ձախող պարագան, Վանի մէջ ներկայ իրականութիւնը միմիթարական է. պայքարող գիտակից ուժեր կան, որոնք կարելի է ի դէպ ժամու գործածել:

Այս մասին պէտք եղածը արդէն կը խորհիմ: Զայէտք է որ տղերքն անդործութեան մէջ թմրեցնեն իրենց պայքարի եռանդը. դա կը լինի աղետաւոր մահացում, ինքնագիտակցութեան փճացում:

Առ այժմ նիւթական կացութիւնս բաւարարութիւն կուտայ ինձ:

Բ.

ՎԱՆ, 2 Յուլիս 1909

Սիրելի Ընկերնե՛ր,

Զեր հրահանգներն ստացայ: Ինչպէս կ'ըսէք՝ մի որոշ հոսանք ստեղծուած է մեզ դէմ՝ եւ հարկ է կոռուիլ, որպէս զի նա չստանայ լնդհանուր հանգամանք: Նոյն իսկ հոս, Վանի մէջ, բէաքցիան մեզ դէմ կը ցցուի եւ կը փորձէ պղտորել միտքերը: Ի հարկէ ես մեր ձեռքի տակ եղած ամէն միջոցներով պայքար կը մղեմ այդ աղետաւոր հոսանքի դէմ:

Ի՞նչ է, մասնաւորաբար, այդ կեղտու պուրժուաներու գանգատը մեզի դէմ. — թէ մենք ո՛չ մի օդտակարութիւն ցոյց չենք տուեր Սահմանադրութեան վերահստատութենէն ի վեր եւ թէ մեր բոլոր ջանքը եղեր է դրամ պահանջել եւ ազգային եկամուտներու տիրանալ:

Նոքա կարող չեն ըմբռնել այն փրկարար շարժումը որ առաջ բերինք ստեղծելով ներքին պայքարը եւ կազմելով ժողովրդային երկու որոշ եւ լնդդիմամարտ բանակներ, իրենց յատուկ հայեցակէտներովը, ձդտումներովը,

ծրագիրներովը եւ պահանջներովը եւ որոնց բաղխումէն պիտի ծնի հայկական նոր իրականութիւնը:

Այս միջերը լաւ տեղաւորելու համար Վանի Հայ խաւարամիտ գլուխներու մէջ՝ մի հրապարակային ժողով դումարեցի այս օրերս, որ մի կատարեալ յաղթութիւն եղաւ մեզի համար: Ժողովը բանալով՝ նախապէս յայտարարեցի թէ մենք իրեւ ազատ երկրի ազատ քաղաքացիներ եւ ազատ խօսքի ու ազատ կարծիքի ուխտուած պաշտպաններ, բացարձակ ազատութիւն կուտանք ներկաներուն որ իրենց դիտողութիւններն ազատորէն ներկայացնեն եւ եթէ ընդդիմախօսներ կան, հաճին խօսք ուղել եւ բեմ բարձրանալ: Այս յայտարարութիւնը, որուն չէին սպասեր մեր յետաղիմական պարոնները, բուռն ծափերով ողջունեցաւ:

Յետոյ պարզեցի մեր աշխարհայեացքը, ըսի թէ հիմա ա'լ ժամանակը եկած է որ յեղափոխութիւնը իր ոյժն ու զօրութիւնը դարձնէ իր ներքին թշնամիներուն դէմ, հայ բռնաւորներու, հայ Համիտներուն դէմ, որոնք են ժողովրդի արիւնը քամող, ժողովուրդն իրենց ոտքերուն տակ ջախջախող, ժողովուրդը իրեւ ստրուկ ծառայեցնող հայ գողատէրը, հայ գործարանատէրը, հայ կալուածատէրը, հայ դրամատէրը, հայ վաճառականը, հայ արհեստաւորը, հայ պաշտօնեան, հայ եկեղեցականը, հայ ապականուած մտաւորականութիւնը, հայ անդիտակից ուսուցչութիւնը, հայ ստրկամիտ մասսան: Ա-հա' հայ յեղափոխութիւնը պէտք է այժմ անոնց դէմ դարձնէ իր դէնքերը, պէտք է անողոք ու կատաղի պայքար մղէ այդ ներքին թշնամիներուն դէմ, մինչեւ որ վերջնականապէս ժողովուրդի գարշապարներուն տակ ջախջախուին այդ վատերու եւ դաւաճաններու անարդ

գանկերը: Ամբողջ ժողովասրահը բուռն ծափահարութիւններով ընդունեց այս խօսքերը:

Յետոյ խօսքս վերջացուցի ըսելով որ մենք, իրեւ դիտակից գաղափարականներ, կը յարդենք ու կը պաշտենք խօսքի ու կարծիքի ազատութիւնը: Եւ եթէ ժողովասրահին մէջ ընդդիմախօսներ կան կրնան ազատորէն իրենց կարծիքը յայտնել եւ մենք յետոյ կրնանք փաստացի կերպով պատասխանել իրենց:

Մի անծանօթ պարոն խօսք ուզեց եւ մի յիմար սովեստութիւն մէջտեղ նետեց եւ ըսաւ որ մենք փոխանակ զիրար բզկտելու պէտք էր որ մեր ուժերը, եթէ ունէինք, միացնէինք քիւրտ հարստահարիչներու դէմ որոնք կը շարունակեն կողոպտել հայ գիւղացին եւ սկսաւ մի շարք դէպքեր յիշել նոր նոր սպաննուած գիւղացիներու, բըռնաբարուած հայուհիներու եւ թալանուած գիւղերու որոնք վերջերս տեղի ունեցած էին վասպուրականի մէջ:

Դա յայտնի փրօլօֆացիա էր թէ՛ մեր ժողովը խանդարելու եւ թէ՛ մեր հարեւան քիւրտ եղբայրներու միջեւ գոյացած համերաշխական կապերը թուլացնելու համար: Այդ յիմար պարոնը առաջ տանելով իր անտակտ խօսքերը եւ փրօլօֆացիան գոչեց:

— Փոխանակ իրարու մէջ կոուելու՝ զացէ՛ք ձեր ոյժն ու զօրութիւնը անոնց ցոյց տուէք:

Անմիջապէս բեմ բարձրացայ եւ այդ ստոր աժան փրօլօֆատօրին պատասխանեցի՝ ըսելով որ իր խօսքերը պարզ դաւաճանութիւններ եւ կեղտուս մատնութիւններ էին եւ թէ ինք պարզ դաղտնի ստիկանի դեր կը կատարէր մատնանիշ ընելով դէպքեր որոնք մեզ զբաղեցնող հարցերու հետ ոեւէ առնչութիւն չունէին եւ թէ իրեն արարքը պատուաւոր քաղաքացիի գործ չէր:

Մեր ընկերները սկսան գոչել. «Դուքս վատերը, դուքս մատնիչ դաւաճանները», եւ ահա բռունցքի հարւածները սկսան բարձրանալ ու իջնել ժողովրդի հայհոյիչի գլխին:

— Տղե՛ք, խիեցէ՛ք, բայց մի՛ սպաննէք, խրատեցի, զանոնք հանդարտեցնելու համար :

Երբ փրօվօֆատօրը խայտառակաբար դուքս հանուեցաւ ժողովասրահէն եւ ժողովրդին արդար զայրոյթը խաղաղեցաւ, կրկին բեմ բարձրացայ եւ յայտարարեցի որ եթէ ընդդիմախօսներ կային՝ ազատօրէն ու անկաշկանդ իրենց կարծիքը կրնային յայտնել, որովհետեւ մենք չենք ուզեր երբեք արդիլել կարծիքի ու գաղափարներու ադատ փոխանակութիւնը :

Ոչ ոք ձայն բարձրացուց, եւ ներկաները մեկնեցան տպաւորիչ ազդեցութեան տակ :

Ես ներկայ հայ իրականութեան հանդէպ պիտի շարունակեմ այս ուղղութեամբ լուսաբանել ժողովուրդը, ինքնազիտակցութիւնը արթնցնել անոր մէջ եւ մղել զայն դէպի յեղափոխական մաքուր որայքարը թէկուզ հարկ ըլւայ դիմել ծայրայեղ միջոցներու :

Բայց որպէս զի պայքարը տայ արդիւնաւոր բաւարարութիւն, անհրաժեշտ է որ ձեր կողմէն ալ նոյն ուղղութեամբ գործէք թէ՛ մեր օռկաններու միջոցաւ հրապարակային փրօփականտայով եւ թէ՛ մեր ընկերներու ուղղուած մասնաւոր հրահանդներով :

Չպէտք է թոյլ տալ որ հայ չէզոք կամ ո՛չ յեղափոխական տարրը, օդուտ քաղելով ազատութենէն, փորձէ գլուխ բարձրացնել. պէտք է խիել նորա գլխին, երբ դեռ ժամանակը չէ անցած: Վաղը կը լինի դուցէ շատ ուշ :

Վասպուրականի հայութիւնը, այսինքն մեր շարքերուն մէջ գտնուող տղերքը, որոնք կը կազմեն գիտակից երիտասարդութիւնը, ունի պայքարող ոգի եւ հարկ է իր այս տրամադրութենէն օդտուիլ՝ ներկայացնելով անոր գործունէութեան ասպարէղ, կամ, լաւ եւս է ըսել, կոուանոց :

Հոս ունինք արդէն Ազատ Սիրոյ հետեւորդներ եւ Նոր Սերնդական երիտասարդութիւն, որոնք իրենց աշխարհահայեցքով կարող են առաջնորդ ըլլալ նոյն իսկ Պոլսահայ ինկած մտաւորականութեան: Իրենց մասին կը խօսիմ մանրամասնօրէն յետագայ նամակներով :

Ճը...:

Գ.

ՎԱՆ, 2 Օգոստոս, 1909.

Սիրելի ընկերներ,

Ձեր վերջին գրութեամբ կը պատուիրէք որ աշխատինք ամէն գնով բարձրացնելու մեր պրէսքիժը որ մի կրիտիկական մօմէնթ անցնելու վրայ է :

Դա շա՞տ հեշտ է ասել եւ պատուիրել, բայց ի՞նչ միջոցով կարելի է բարձրացնել այդ պրէսքիժը, ահա՛ բուն հարցը :

Ես այդ մասին ունիմ իմ որոշ հայեցակէտը, որը անշուշտ համաձայն կուգայ ձեր հայեցակէտին :

Ներկայ հայ իրականութեան մէջ մեր պրէսքիժը կը պահպանուի ու կը բարձրանայ պայքարով ու միմիան պայքարով: Մեր կազմակերպութիւնը ծնուեր է պայքարի համայողական պահանջէն եւ ապրել ու զօրացեր է պայքարով: Դա պատմական փաստ եւ իրողութիւն է եւ կարելի չէ ժխտել: Մեր պրէսքիժը թեքուեցաւ այն օրէն՝ ուր խաղաղ գործունէութեան աղետալի փորձը ընել ուղեցինք: Կատուն որ չի ճանկեր ու կը փորձէ ե-

ռեւի ոտքերուն վրայ կենալ ու ձեռք լիոել, այլ եւս կը դադրի կատու ըլլալէ: Նա ա՛լ կորցրած է իր պրէսքիժը մուկերու քով: Պէտք է միշտ ճանկել, այդ է մեր պատմական, եւ կամ այսպէս ասած՝ մեր ֆիզիոլոգիկական դերը հայ իրականութեան մէջ:

Ձեր հահանդի համեմատ, ներփակ կը դրկեմ վանէն թուագրուած մի հեռագիր որ բուռն բառերով համակրութիւն կը յայտնէ մեզի ու միեւնոյն ատեն կը դատապարտէ վատերը, դաւաճանները, յետագիմականները, չէրիաթձինները, վերջապէս բոլոր անոնք որ մեզի հետ չեն: Հեռագիրը ստորագրուած է չորս անուններով ի դիմաց 600ի մօտ գիտակից երիտասարդներու: Եթէ յարմար դատէք՝ կրնաք հեռագրին բառերը մի քիչ փոփոխելով հրատարակել, նաև իբրեւ կտուցէն, Լիմէն, Ալիւրէն կամ Արճէչէն ուղղուած, ի հարկէ «ի գիմաց»ներու թիւը զեղչելով: Գալով հեռագրի տակ դրուելիք անուններուն, դիւրութեան համար ձեզ ըսեմ որ այստեղացի Հայերու սովորական անուններն են Վարդան, Վահան, Գարեգին, Մկրտիչ, Մակար, Մարկոս, Դաւիթ, Արգար, Եւն.:

Բայց նորէն կը կրկնեմ, դա մի անբաւական բալլատիֆ է մեր պրէսքիժի բարձրացման համար. պէտք է բունի համակրանք ստեղծել, սարսափ ձղելով միտքերու մէջ:

Ժողովուրդը չպէտք է որ բոպէ մը դադրի մեզմով զբաղելէ: պէտք է միշտ լարուած դրութեան մէջ ըլլայ, թէկուզ այդ դրութիւնը առժամապէս մեզ գէմ լինի, հարկ է զայն տրորել, խոնջեցնել, ոգեսպառ ընել մինչեւ որ տեղի տայ եւ ստիպուի գառնալ մեզ համակիր: Օրը սատօրէական կոիւ, միշտ նո՛ր յուզում, միշտ նո՛ր պայ-

քար. ահա' միակ դարմանը մի բաւ բան յաջողցնելու համար այս դժբախտ ազգի մէջ:

Ես այսպէս կ'ըմբռնեմ մեր միսիան. այդ եղեր է ու պիտի ըլլայ իմ ուղղութիւնը ե՛ւ Ծավլմարի ե՛ւ Վանի մէջ:

Վանէն ուղղած իմ առաջին նամակիս մէջ պատմեցի այն համերաշխ գործունէութեան փրօվօքացիան որ այստեղի մենծ-աղայական դասակարգը ուղեց մէջտեղ հանել մութ նպատակներով: Հսի թէ ի՞նչպէս մեր բոնած անկեղծ ու խոհական ընթացքով այդ փրօվօքացիան չկրցաւ յաջողիւ:

Այժմ նորանոր փորձեր կ'ըլլան, մութ ուժերու կողմէ, այդ համերաշխութեան հնքրիկը դարձեալ խաղալու համար, բայց մեր տղերքը արդէն լուսաբանուած են եւ երկիւղ չկայ թէ թակարդը իյնան:

Կոիւի դաշտ ստեղծելու համար արդէն իսկ միջոցներ ձեռք առած եմ եւ կը յուսամ որ մօտ ժամանակէն մեր վրայ խօսեցնելու առիթ պիտի տանք:

Վանի մտաւորական գիտակից երիտասարդութիւնը, որ կը ներկայացնեն Նոր-Սերնդական եւ Աղատ-Սէրեան խմբակցութիւնները, արդէն իսկ տաք վերաբերում ցոյց կուտան դէպի մեղ:

Մի քանի անգամ առիթ ունեցայ իմ մօտ հրաւիրելու այդ պայքարող ուժերը, զանոնք զնելու համար գործնական հողի վրայ: Իրենց բացատրեցի թէ անհրաժեշտ էր մի ցնցող իրականութեամբ իրենց գործութիւնը հաստատել, թէ առանց պայքարի կարելի չէր գաղափարի յաղթութիւն, թէ ժամը հասած էր ասպարէզ իջնելու: Ամէնքն ալ համոգուեցան իմ պարզած տեսութիւններուս եւ պատրաստակամութիւն յայտնեցին մի բան ընելու:

— Բայց ի՞նչ կարելի է ընել, հարցուց իրենց վարիչ ուժերէն մէկը:

— Ընել մի ուեէ բան, խրատեցի, որ տայ ցնցող տարաւորութիւն, օրինակ՝ մի գայթակղական արարք, մի scandal, վերջապէս մի գործ, որ յուղում առաջ բերէ ժողովրդի զանազան տարրերու մէջ:

Տղերքը ըմբռնեցին թէ ի՞նչ ըսել կ'ուզէի եւ խոստացան այդ ոգիով շարժիլ:

Ի հարկէ, անոնք պիտի գործեն մեր հրամանով ու մեր ուղղութեամբ. բայց իրենց անհատական պատասխանատուութեան տակ: Մենք կը մնանք միշտ հեռու այդ տեսակ գործերէ, մանաւանդ երբ ատոնք անհաճոյ արդիւնք առաջ բերեն, նոյն իսկ ի հարկին կրնանք դատապարտել գործուած արարքը, գործողներու սոսկական հանգամանքը ցոյց տալ եւ ապացուցանել թէ մեր հակառակորդներու թելադրանքով կատարուած է ամէն բան: Փաստացի իրողութիւններ միշտ մեր ձեռքին տակ պատրաստ կան, այդ մասին միամիտ եղէք:

Այս առաւօտ լուր բերին թէ տղերքը արդէն պատրաստեր են մի շատ խելացի ծրագիր. այն է՝ կիրակի օր խըմբովին երթալ եկեղեցի եւ հոն կատարել մի քաղաքական ամուսնութիւն: Ագատ Սիրոյ ակումբի նախադահը կը կատարէ քաղաքակետի դեր, ես անհատական հանգամանքով պիտի գնամ իրեկ վկայ հարսին, վիեսան եւս կ'ունենայ իր վկան: Ամուսնութիւնը բոնի արձանագրել պիտի տանք եկեղեցու ամուսնութեանց արձանագրութեան տոմարին մէջ: Յետոյ մի քանի ժամ ետքը, հարսի պահանջմունքին վրայ, այդ քաղաքական ամուսնութիւնը պիտի լուծենք եւ հարսը պիտի ամուսնացնենք մի ուրիշ տղամարդու հետ, նոյն ձեւակերպութիւններով:

Կ'երեւակայէ՞ք ցնցող տպաւորութիւնը որ առաջ
պիտի դայ ամբողջ քաղաքին մէջ։ Նախ՝ քաղաքական ա-
մուսնութիւն եկեղեցու մէջ, յետոյ բոնի արձանադրու-
թիւն, յետոյ ամուսնալուծութիւն կամ divorce եւ վեր-
ջապէս կրկնամուսնութիւն։

Տեսնենք ի՞նչ պիտի ընեն մեր կեդտոտ պուրժուա-
ները եւ չէրիաթճիները՝ Վանի երիտասարդութեան այս
էմանսիրացիայի ցոյցերուն հանդէպ։

Ապահով՝ պիտի դիմեն իրենց աղտոտ գէնքերուն,
բայց զգո՞յշ, մենք ալ թեւերնիս ծալլած չենք նստիր...

Դ.

ՎԱՆ, 4 Սեպտ. 1909

Երեւի ընկերնե՛ր,

Երեւի մի ձախող շրջան կը բոլորենք։
Նոր սերնդական ցոյցը որու մասին նախորդ նամա-
կովս խօսեցայ, չտուաւ բաւարար արդիւնք։

Մի քանի օր առաջ, երեքշաբթի, կէս օրէն ետքը,
խմբովին գնացինք եկեղեցի, կատարելու համար անդրա-
նիկ քաղաքական հայ ամուսնութիւնը, որուն պիտի յա-
ջորդէր, մի քանի ժամ յետոյ, ամուսնաթողութիւն եւ
կրկնամուսնութիւն։ Հարս ու փեսայ, իրենց քաղաքացիի
տարագով, կը գնային առջեւէն, յետոյ կուգային վկանե-
րը եւ ընկեր բարեկամները։

Եղելութիւնը պահուած էր խիստ ծածուկ, որպէս զի
մեր հակառակորդները չկարողանային իրենց մութ դա-
ւերը սարքել մեզի դէմ, այնպէս որ փողոցը դրեթէ ո'չ ոք
ուշաղը ութիւն դարձուց մեզ։ Բայց երբ հասանք եկեղե-
ցիի առաջ, տեսանք որ դուռը ամուր գոցուած է։ Դիմե-
ցինք ժամկոչին, մի տղէտ, յետաղիմական արարած։

— Ինչո՞ւ եկեղեցին դուռը փակած էք, հարցուցի:
= Որովհետեւ ժամերգութեան ատեն չէ:
— Բայց մենք կը պահանջենք մտնել եկեղեցի:
= Ի՞նչ պիտի ընէք:
— Ամուսնութիւն պիտի կատարենք:
= Այսօր, երեքշաբթի, կարելի չէ ամուսնութիւն
կատարել:

— Մենք կը կատարենք քաղաքական ամուսնութիւն,
պարոն, պատասխանեցի:
Ժամկոչը ապուշ ապուշ երեսս նայեցաւ եւ ըստաւ.
— Զեմ հասկնար թէ ի՞նչ ասել կ'ուզէք:
= Պէտք չկայ որ հասկնաս, միայն թէ եկեղեցիի
դռները բա՛ց չուտովլ:
— Զեմ կարող:

Դա խաւարամիս կղերականութեան ոոն possimus ն
էք որ կը ցցուէր յեղափոխական հոսանքի դիմաց:

Այսպէս այդ դաւաճան ու բռնաւոր ժամկոչը, իրեւ
ազգային իշխանութեան ներկայացուցիչ իր յափշտակած
դերքին օգտուելով, կ'ուզէր ապօրէն կերպով փակել եկե-
ղեցիին դռները ժողովրդի առջեւ, այն ժողովրդին որ
օրինաւոր տէրն է եկեղեցիին: Ի հարկէ մեզ համար հեշտ
էր այդ կեղեքիչ բռնաւորի գանկը փշորել ժողովրդի գար-
շապարներուն տակ, բայց մենք ուզեցինք օրէնքի ոյժով
կոռւէլ ապօրինութեան դէմ:

— Ուրեմն քու վերջին խօսքէ ա՞յս է, դուռը չպի՞-
տի բանաս, պնդեցինք:

= Ես չեմ խառնուիր, տէրտէրը դտէք, ան դիտէ,
պատասխանեց ապօրինութեան ինդրան եւ հեռացաւ մեր
քովէն, այսպէս՝ վատաքար՝ մեզ մատնելով անել կացու-
թեան:

— Տղե՛րք, գոչեցի, ժողովրդի դէմ սարքուած այս
անարդ դաւաճանութեան դէմ՝ մենք պայքարեցինք Օրէն-
քի ոյժով: Եւ քանի որ եկեղեցիի դռները ապօրէն կեր-
պով կը փակեն ժողովրդի առջեւ, թո՛ղ ժողովուրդը պա-
տուհաններէն ներս մտնէ օրինաւորապէս:

Ընկերներէն մին անմիջապէս սանդուխ մը ճարեց եւ
ահա՛ մեր կտրիձները մագլցեցան վեր, սակայն պատու-
հանը չէր բացուեր եւ հարկ եղաւ ապակիները կոտրել,
նախապէս յայտարարելէ վերջ թէ՝ այդ ջախջախման պա-
տասխանատուներն էին իշխանութեան դլուխ գտնուող
մենծաղայականութիւնն ու կղերականութիւնը:

Բայց այս միջոցին հասած էին արդէն տէրտէրն ու
լուսարարը, ժամկոչին մատնութեամբ:

— Բա՛ց սա ժամուն դռները, հրամայեց քահանան
լուսարարին, տեսնելով դիտակից ոյժերու կորովի ըն-
թացքը:

Եւ ահա՛ քիչ յետոյ ժողովուրդը տէր դարձաւ իր
իրաւունքին ու հարսնեւորները գացին շարուեցան խորա-
նին դիմաց: Նոր սերնդական այս ցոյցը սակայն արդէն
զարթուցեր էր ընդհանուր հետաքրքրութիւն եւ հետզհե-
տէ կը հասնէին նորանոր մարդկիկ: Յանկարծ մի աղաղակ
բարձրացաւ: Հարսի հայրն էր որ իր երկու զաւակներով
ու բարեկամներով ներս կը խուժէր եւ կուդար բռնի մեր
ձեռքէն իւկելու իր աղջիկը: Մեր տղաքը պատրաստուեցան
կուիւի: Տեսայ որ խնդիրը պիտի առնէր տարբեր հանգա-
մանք եւ գուցէ մութ ոյժերը յաղթող դուրս պիտի գա-
յին, ինչ որ շատ վատ տպաւորութիւն պիտի գործէր:

— Պարոննե՛ր, գոչեցի, մենք լունք եւ թո՛ղ Օրէնքը
խօսի:

Յետոյ, քաղաքավարի կերպով մօտեցայ հարսին հօրը.

— Պարոն, ասացի, խնդրեմ ինձ յայտնեցէք թէ՝ դուք եւ ձեղ ընկերակցողները ունի՞ք մասնաւոր հրաւիրագիր:

— Ի՞նչ հրաւիրագիր, հարցուց այդ տիմար պուրժուան:

— Այս ամուսնութեան ներկայ գտնուելու համար: Իր տուած ժխտական պատասխանին վրայ՝ աւելցուցի.

— Ուրեմն հաճեցէք դուքս ելլել, որովհետեւ, ըստ օրինի, յատուկ հրաւէր ստացողները կրնանք միայն ներս ընդունիլ:

Բայց, ափսո՞ս, դոքա ո՞ւր, օրէնքի յարգանքը ո՞ւր: Այդ կեղտոտ արարածը իմ այդ անհերքելի առարկութեանս պատասխանեց մի շարք փողոցային խօսքերով ու գնաց բռնի աղջկան թեւէն բռնեց եւ իր ընկերներու աջակցութեամբ դուքս հանեց եկեղեցին, առանց բաւարարութիւն տալու մեր օրինաւոր պահանջմունքին:

Դա արդէն բռնաւոր մենծ-աղայականութեան սովորական հոգեբանութիւնն է:

Կ'ըմբռնէք անշուշտ որ առանց հարսի մի քիչ դժուար պիտի ըլլար քաղաքական ամուսնութիւն կատարել:

Մի նոր սերնդական առաջարկեց անձնուիրաբար որ հարսի դերը ինք կատարէ, դաղավարի յաղթանակին համար:

— Ո՛չ, պատասխանեցի, մենք չպէտք է շեղինք Օրէնքէն եւ օրինաւորութենէն, թո՛ղ նոքա ապօրինութիւն

ապօրինութեան վրայ դիզեն մինչեւ որ անոնց տակը ի վերջոյ չնչասպառ ըլլան:

Եւ այսպէս, ժողովը ցրուեցաւ անորոշ արդիւնքով: Ինչպէս կը տեսնէք ես հիմա որոշած եմ սրայքարը մղել Օրէնքի անունով: Դա մի նոր տաքտիկա է որ կուտայ իր արդիւնաւորութիւնը մօտիկ ապագայի մէջ:

Մենք Օրէնք ենք եւ մենք դուրս ամէն ինչ ապօրէն է. ահա՝ այն ֆօրմիւլը որ կը ներարկեմ մեր դիտակից շարքերու միտքերուն մէջ:

Լաւ է որ դուք ալ ձեր աշխարհահայեցքը այս շաւղի մէջ ուղղէք: Յանուն Օրէնքի երբ գործենք, մենք կը մնանք անխոցելի: Օրէնք, Օրինաւորութիւն, Օրինական. այդ բառերը պէտք է լաւ գոյ ընել տանք մեր շարքերուն:

Ե.

ՎԱՆ, 4 ՀՈԿՏ. 1909

ՍԻՐԵԼԻ ԸՆԿԵՐՆԵՐ,

Երկու շաբաթէ ի վեր Վան հասած է ընկեր Սարսա-
փունի, որի հետ այժմ համախորհուրդ կ'աշխատինք ազ-
գային վերածնութեան գործին:

Արդէն իսկ երեք օր առաջ, եկեղեցին մէջ կատա-
րեցինք մեր առաջին դասախոսութիւնները: Ընկեր Սար-
սափունի դասախոսութեան նիւթն էր «Պոլիսը Գաւառին
դէմ»: Նա փաստացի կերպով ցոյց տուաւ թէ Պոլիսի Հա-
յերը մի մութ դաւաճանութիւն կը սարքեն դաւառացի
Հայերը իրենց երկրէն գուրս հանելու եւ Արարիոյ անա-
պատճերուն մէջ տեղափոխել տալու համար, թէ նոքա
այս նպատակով բանակցութիւններ կը կատարեն արդէն
Ապտիւլ-Համիտի և Արաք Իզրէթի և Սէիտ Իտրիսի հետ,
թէ նախկին Պատրիարք Օրմանեան եւ Գաբրիէլ Նորա-
տունկեան այս նպատակով դիմում ըրած են Յարին եւ թէ
Պոլսոյ կաշուակեր Հայ Մամուլը այդ աղտոտ պայքա-
րի համար փող է ստացել Գերմանիոյ Վիլհէլմ կայսրէն

եւ Մարոքի Ապտիւլ-Աղիզ Սուլթանէն: Նա անհերքելի
փաստերով բոլոր այդ դաւաճանութիւնը լոյս արեւու պէս
ցոյց տուաւ իր դասախոսութեան մէջ եւ առաջարկեց ներ-
կաներուն որ անմիջապէս զինուին եւ ինքզինքնին պաշտ-
պանեն Պոլսահայերուն դէմ:

— Քնելու ժամանակ չէ, գաւառացինե՛ր, դոչեց
ընկեր Սարսափունի, պէտք է ոտքի կանդնել եւ այդ վա-
տերուն անարդ գլուխները ջախջախել, չպէտք է թոյլ տալ
որ այդ դաւաճան Պոլսահայերը ձեր օմախները քանդեն,
ձեր վզերն ու ոտքերը շղթայ անցնեն եւ՝ իբրեւ ստրուկ՝
ձեզ տանին ծախեն արաբ պէտէվիներու... Անկցի՛ Պոլի-
սը, կեցցէ՛ Գաւառը:

Այս դասախոսութիւնը շատ ցնցող տպաւորութիւն
գործեց եւ մի փրկարար հակածուանք ստեղծեց Պոլսա-
հայերու դէմ:

Ցետոյ, ես բարձրացայ բեմ եւ սկսայ իմ դասախո-
սութեան, որի նիւթն էր «Մարտ 31ի Շէրիաթձիական
շարժումը եւ Հայ մէնծ-աղայականութեան դերը»: Այս
դասախոսութեամբ ես պարզեցի սա ճշմարտութիւնը թէ՝
Պոլսոյ յետաղիմական շարժումը կատարուած է Հայ
պուռմուտաներու ձեռքով, թէ մեր թուրք կամ քիւրտ եղ-
բայրները ոչ մի մասնակցութիւն չեն ունեցած նորա մէջ,
թէ Հայ դաւաճան հարուստներն են որ դրամական օգնու-
թիւն ըրած են Շէյխ Վահտէթիի, որպէս զի նա կարող ըլ-
լայ Վօլֆան թերթը հրատարակելու, թէ Մարտ 31ին Այա
Սօֆիայի հրատարակը հաւաքուած փաթթոցաւորներէն
շատերը ծպտուած Հայեր էին եւ թէ վերջապէս թուր-
քիոյ աղդաբնակութեանց մէջ միակ յետաղիմական եւ
համիտական տարրը Հայերէ կը բաղկանայ, որոնց գլու-
խը հարկ է Հախջախել:

— Գաւառացինե՛ր, վերջացուցի խօսքս, քանի որ մի Պոլսեցի Հայ գոյութիւն ունենայ աշխարհի երեսը, գաւառացի Հայը չի կրնար հանդիստ ապրիլ. պէտք է կոռւել, պէտք է պայքարիլ, պէտք է ջախջախել...

Բուռն ծափահարութիւններ ցոյց տուին թէ Վասպուրականի Հայութիւնը կ'արթննար իր խոր քունէն եւ գիտակցարար կը ճանչնար իր վատ թշնամիները:

Դասախոսութիւնները աւարտելէ ետքը՝ ընկեր Սարսափունի առաջարկեց որ պայքարը գործնական հողի վը բայ դնելու համար գիտակից երիտասարդներէ մի խումբ կազմուի «Գաւառացի մարտախումբ» անունի տակ՝ կըռւելու համար Պոլսահայերու դէմ:

Ներկաներուն մեծ մասը իսկոյն արձանագրուեցաւ եւ միթինկը ցրուեցաւ կատարեալ կարգապահութեամբ:

Հարկ է ըսել որ Վանի մէջ առաջին յաջողութիւնն էր որ ձեռք բերինք այս դասախոսութիւններով։ Բայց ընկեր Սարսափունի եւ ես խորհեցանք որ կիսկատար գործ մը պիտի ըլլար միմիայն գաւառացին Պոլսեցիին դէմ հանել, հարկ էր նաեւ մի ուրիշ փրկարար բաժանում, այն է՝ գիտակից կոռուող ոյժերը կանգնեցնել տեղացի մութ ոյժերուն դէմ։

Ասոր համար դասախոսութիւններու մի նոր շարք հարկ էր սարքել եւ հիմա այդ բանին կ'աշխատինք։ Յուսալի է որ վերջապէս կոիւը կը պայթի մօտ ատենէն Վանեցի Հայ յետադիմականներու եւ աղատականներու միջև։

Մեր պայքարը պիտի մղենք հաւասարապէս ընկերական, հասարակական, քաղաքական, տնտեսական, մտաւորական, ընտանեկան, կուլտուրական, կրթական եւ աշխատաւորական հողի վրայ։

Վանի մէջ Հայ յետադիմական տարրը որ մի քանի

ամիս առաջ, երբ նոր հասած էի, գրեթէ գոյութիւն չունէր, այժմ սկսած է կազմակերպութիւն Դա մի միտթարական երեւոյթ է եւ կարելի է ըսել որ մենք ալ մեր բաժինը ունեցանք այս գործի մէջ։ Յետադիմական տարրը, այսպէս ասած՝ իր գոյութիւնը չէր գիտեր, նա ինքոյնքը կը համարէր Հայ եւ միանդամայն աղատասէր Սահմանադրական մենք, առաջին անդամ, ցոյց տուինք իր սիմբունքը եւ գինքը գրինք ուղիղ ճամբու մէջ։

Ինչպէս ընկեր Սարսափունի շատ ճիշդ կերպով գիտել տուաւ ինձ, Մարտ 31ի դէպքերը սա անդնահատելի օգուտը ունեցան որ ծնունդ տուին Հայ յետադիմական եւ շէրիաթճիական որոշ տիպին։ Մինչեւ այդ թուականը, յայտնի է որ այդ որոշ տիպը գոյութիւն չունէր։ Առաջին անդամ մեր Պոլսոյ ընկերները ստեղծեցին յետադիմական, հակասահմանադրական Հայը, այդ անհրաժեշտ թշնամին որու դէմ պիտի կոռուէինք։

Դժբախտաբար, որչափ որ իր գոյութիւնը բռնի ընդունել տուինք իրեն, դարձեալ յետադիմական տարրը կը ջանայ ինքինք ուրանալու. նա չունի քաղաքացիական առաքինութիւն իր յետադիմականի դիրքը պահպանելու։ Ասոր համար, հարկ է պայքարիլ անլողաւու, մինչեւ որ այդ տարրը ստիպուի ինքինք յայտնել որոշապէս։

Առջի օր, ընկեր Սարսափունիի հետ, գնացինք այցելել մի յայտնի ջոջ աղայի, Վարդան Սօղիկեանի։ Դա մեզ յայտնեց աղատական դաշտակարներ և նոյն իսկ ըսաւթէ ինք թունդ սահմանադրական է եւ պատրաստ է նոյն իսկ իր կեանքն ու հարստութիւնը գոհել նոր բէժիմի պահպանութեան համար։

— Ապտիւլ-Համիտը չէ՞ք ուզեր կրկին դահին վը րայ տեսնել, հարցուց ընկեր Սարսափունի։

— Աստուած չընէ, գոչեց Վարդան Աղա ձեռքերը
երկինք բարձրացնելով:

Եւ այդ մարդը՝ երեւի՝ անկեղծ էր իր արտայայ-
տութեան մէջ:

Պէտք է գիտնալ որ Վարդան Սօղիկեան մի բացա-
ռութիւն չէ. այդ տեսակ anomalicներ շատ կան վանի
մէջ: Մարդիկ որոնք մեր գիտակից շարքերէն չեն, բայց
եւ այնպէս ազատական ու սահմանադրասէր կը դաւանին
ինքնինքնին: Այդ տարօրինակ anomalicն շատ կը դժուա-
րացնէ մեր պայքարի գործը:

— Հարկ է վերջ տալ այս կացութեան, վճռեց ըն-
կեր Սարսափունի մեր այցելութենէ վերադարձին, պէտք
է միանդամ ընդմիշտ յետադիմականը ըլլայ յետադիմա-
կան եւ մենք ազատական, ուրիշ կերպ կարելի չէ մի լաւ
բան ընել:

— Բայց ի՞նչպէս կարելի է այդ, հարցուցի իրեն:

— Դա շատ պարզ է եւ այդ պիտի ըլլայ իմ յառա-
ջեկայ դասախոսութեանս նիւթը:

Եւ սա խորունկ մտածումն յայտնեց.

« Գիտակից ազատական ոյժերու կազմակերպութե-
նէն աւելի ու անկէ առաջ՝ հարկ անհրաժեշտ է կազմել եւ
դօրացնել յետադիմական տարրը: »

Ընկեր Սարսափունի մի դիալէկդիքական ցնցող ոյժ
է: Ակսո՞ս որ երկար չի մնար մեղ մօտ:

Զ.

ՎԱՆ, 18 Հոկտ. 1910

Սիրելի ընկերներ,

Ինքնին մի անկարեւոր դէպք, որը չունի հասարա-
կական-դասակարգային հանդամանք, բաւական յուզումի
տեղի տուալ եւ դարձաւ սկզբունքային հարց, չնորհիւ
մեր ընկեր Սարսափունիկ, որ լաւ գիտէ օդուուկի ներկա-
յացած ամէն առիթներէն՝ մեր կուսակցութեան որոշ աշ-
խարհահայեացքները պարզելու եւ ժողովուրդը մղելու
համար դէպի ինքնագիտակցութիւն:

Դէպքը պատմեմ մի երկու բառով:

Վանի մէջ կայ մի մանկապարտէղ ուր կը յաճախեն
մեր ընկերներու մի քանիսին զաւակները: Ասոնցմէ մին,
մի եօթը տարեկան մանչ՝ կայծակ անուն՝ կը մերժէ նըս-
տիւ իրեն տարեկից մի ուրիշ մանչու քով, առարկելով
թէ գժտուեր է անոր հետ մի ո'նէտ հարցի հետեւանքով,
եւ թէ ինք կը փափաքի իրեն գաղափարակից մի այլ տը-
ղու քով նստիւ:

— Զեր ամէնուն տեղը որոշուած է եւ ձեր քմահա-

ճոյքին համեմատ կարելի չէ տեղերնիդ փոխել, կը վճռէ մանկապարտիդանուհին, առանց ականջ կախելու կայծակի արդարացի պատճառաբանութիւններուն :

Եւ կը ստիպէ տղան որ երթայ իր նախկին տեղը նշատի : Կայծակ կ'ընդդիմանայ : Այն ատեն մանկապարտիդանուհին կը փորձէ մանչուն թեւէն քաշելով՝ տանիլ իր նստարանը : Կայծակ իր վրայ ի գործ դրուած այդ բոնի ոյժէն ա'լ աւելի ըմբոստացած՝ կը յաջողի գրասեղանին վրայ դրուած մելանի ամանը առնել եւ դայն նետել դահիճ վարժուհիի քթին բերնին :

Եւ ահա՝ ինքնապաշտպանութեան այս պարզ արարքին համար՝ կայծակ տնտեսին միջոցաւ իր տունը կը դրկուի եւ միեւնոյն ատեն լուր կը տրուի ծնողքին որ այլ եւս իրենց գաւակը դպրոց չտանին :

Նոյն իրիկունն իսկ իրողութիւնը մեղ պատմեց տըզուն հայրը որ մեր գործօն շարքերէն մի լաւ ընկեր է :

Ընկեր Սարսափունի որ ուշադրութեամբ կը հետեւէր պատմութեան՝ ըսաւ .

— Զպէտք է որ այդ պայքարի մէջէն կայծակ պարտուած դուրս դայ... դա կը լինի մի նախատինք անկախ մտածումի եւ ինքնավար կամքի դէմ : Պէտք է ուժ տալ ըմբոստացումի ողիին, որուն վրայ հիմնուած է բո՛ւն յեղափոխութիւնը :

Եւ նա պարզեց իր տեսութիւնը թէ՝ մանուկներու մէջ ըմբոստ ողիի զօրացումը միակ միջոցն է ապագայի համար կոռուզ ոյժեր պատրաստելու :

— Իցի՛ւ թէ նորա ընթացքը ունենար իր հետեւրդները մանկապարտէզի մէջ, եղրակացուց ընկեր Սարսափունի :

Եւ որոշեցինք հետեւեալ օր միասին երթալ մանկապարտէզ, մեր հետ առնելով նաեւ տղուն հայրը :

Մանկապարտիդանուհին քաղաքավարի կերպով ընդունեց մեղ եւ առաջնորդեց մանուկներուն քով, որոնք թղթի կտորներով խաղալիքներ շինելու զբաղած էին :

Ընկեր Սարսափունի անմիջապէս բարձրացաւ վարժուհիի սահմանուած բեմը եւ մի տպաւորիչ դասախոսութիւն ըրաւ երեխաներուն : Նա ըսաւ թէ ըմբոստացումի ողիին մի զօրաւոր ֆակտոր է մարդկային յեղափոխութեան մէջ և երբ այլ ողիին կը յայտնուի բո՛ւն իսկ մանկութեան հասակին, ցոյց կը տայ թէ նա արտաքին աղղեցութեան արդիւնք չէ՝ ոյլ մի բնազդական դրդում : Նա վեր առաւ ըմբոստացումի եւ ընդվզումի երեւոյթները, որոնք, դարերու ընթացքին, եղեր են միակ ուժը դէպի արագագում, դէպի պայքար, դէպի կոփւ եւ յիշեց փոքրիկն կայծակի անունը, իրրեւ մի սփոփեցուցիչ երեւոյթ հայ իրականութեան մէջ :

Երախայքը խորին ուշադրութեամբ մտիկ ըրին այս դասախոսութիւնը եւ ի նշան համակարութեան երգեցին՝

Ծափիկ ծափիկ ծիրանի
Կարմիր խնձոր կը նմանի :

Երդը : Յետոյ, ես եւ ընկեր Սարսափունի հրամայողական պահանջք դրինք վարժուհիին վրայ, ներում ինդրելու կայծակին եւ զայն կրկին հրաւիրելով մանկապարտէզ, բաւարարութիւն տալու իր արդար սողոքներուն :

Վարժուհին բացարձակ մերժեց :

— Գնանք ուրեմն, բայց գիտցէք որ տարբեր հողի վրայ կրկին կը տեսնուինք միասին, պատասխանեց իրեն ընկեր Սարսափունի :

Վերադառնալով մեր բնակարանը, անմիջապէս պատրաստեցինք մի manifeste, ուղղուած առհասարակութունը գլուխ կարող է հայտնաբերուն, որպէս կը հրաւիրէինք զիրենք գալ կիրակի օր եկեղեցի, ուր պիտի կայանար հսկայան միթինկ բողոքելու համար անձնիշխանութեան, արձակ կամքի եւ ինքնագիտակից ըմբոստացումի զոհ փոքրիկն կայծակի դպրոցէն արտաքսուելուն դէմ։ Մի երկուրդ կոչ ուղղեցինք նաեւ մեր դիտակից շարքերուն՝ անպայման ներկայ գտնուելու համար այդ միթինկին որը կը կայանար մի միայն գաղափարային անկախ հողի վըրայ:

Այստեղ պատահեց մի շատ անհաճոյ պարագայ։ Կոչ բաժնելու համար յանձնեցինք մեր ընկերներէն Պ. Սեղրակի եւ ահա իմացանք որ նա տարեր է հրաւիրը մեր բոլոր ընկերներուն, ի բաց առեալ Պ. Վարդանի որ Այդեստանի կողմը կը բնակի։ Նա եկաւ մեզ մօտ բողոքելու համար այդ գանցառութեան դէմ։ Անմիջապէս ձեռնարկեցինք քննութեան եւ ստուգեցինք թէ իրողութիւնը ճիշդէր եւ թէ ընկեր Սեղրակ չէր ուզած կոչը տանիլ ընկեր Վարդանի, որպէս հետեւ մի քանի օր առաջ անոր հետ ունեցած էր մի անհատական վէճ։

Դա ակնյայտնի եւ աններելի թերացում էր տիսիպլինայի։ Ընկեր Սարսափունի սաստիկ զայրացած՝ իսկոյն գումարեց ընկերային ատեան, որպէս զի տան յանցաւորին արժանաւոր պատիժը։

Նա երկար բացատրեց թէ՝ որքան հրամայողական պահանջք է, մեր կուսակցութեան համար, անպայման յարդանք դէպի տիսիպլինան որ կը կազմէ յեղափոխական կազմակերպութիւններու հիմնական ոյժը եւ թէ ի՞նչ ծանր ոճիր է մի ընկերի համար, անհատական հանգա-

մանք ունեցող մի խնդրի առթիւ, ոտնակոխ ընել տիսիպլինան։

— Անհատականութիւնը պէտք է սրբուի ու ջնջուի հաւաքական որոշումի դիմաց, եղբակացուց ընկեր Սարսափունի, առանց անոր կարելի չէ ո՛չ յեղափոխութիւն, ո՛չ կոխւ, ո՛չ պայքար, ո՛չ ազատագրում։

Հետեւաբար նա առաջարկեց ամենախիստ պատիժը բոստ ընկերի դէմ։

Ընկերական ատեանը կը գումարէ նոր նիստ եւ կը տայ իր արդար պատիժը մօտ օրէն։

Ես կրկին կը դառնամ այս խնդրին շուրջ որ ունի լուրջ կարեւորութիւն մեզի համար։ Տիսիպլինան մահու եւ կենաց հարց է մի կուսակցութեան համար եւ չպէտք է տկար գտնուիլ անսաստողներու հանդէպ։

Կը տեղեկացնեմ ձեզ նաեւ մեծ միթինկի մասին։

Մենք համոզուած ենք որ չպէտք է խեղդել ըմբոստացումի ողին մատաղ սերունդի մէջ։ Դա կը լինի բացարձակ ոճբագործութիւն։

Է.

ՎԱՆ, 6 Նոյեմբ. 1910

ՍԻՐԵԼԻ ԸՆԿԵՐՆԵՐ,

Մեր գործունէութիւնը Վանի մէջ սկսած է տալ վճռական որոշ արդիւնք:

Մեր ընկերոջ զաւկին՝ փոքրիկ Կայծակի՝ մանկապարտէզէն արտաքսումը եւ այս առթիւ մեր բողոքի բուռն պայքարը, որուն մանրամասնութիւնները աւելորդ է գրել, վերջապէս առաջ բերին վարժուհիի հրաժարականը եւ մանկապարտէզի վակումը: Դա Վասպուրականի մէջ մեր առաջին չօշափելի յաղթանակն էր մտաւորական-կուլտուրական հողի վրայ եւ շատ նպաստեց մեր վտանգուած պրէսթիժի բարձրացումին: Միւս դպրոցներու ուսուցիչները որոնք մինչեւ այսօր ցուրտ վերաբերում ունէին դէպի մեղ, այժմ սկսած են մեզ մօտենալ, զգալով մեր գորութիւնը:

Մենք, կրթական հողի վրայ, պայքարն առաջ կը տանինք նոյն բուռն եռանդով եւ, եթէ հարկ ըլլայ, կը ջանանք վակել բոլոր դպրոցները, մեր հայեցակէտի հա-

մեմատ առաջ վարելու համար կուլտուրական գործը, ուրկէ կախուած է մեր ամբողջ ապագայ սերունդի պատրաստութիւնը:

Մեր միւս յաղթանակը կատարուեցաւ տնտեսական հողի վրայ, իբրեւ անդրանիկ քայլ դէպի գործաւորական ազատագրում: Ահա՝ իրողութիւնը:

Մի քանի շաբաթ առաջ ես եւ ընկեր Սարսափունի գնացինք այցելել Մակար Մրկօեանի ջուլհակի գործարանը, որու մէջ կ'աշխատին 18ի չափ հայ բանուրուհիներ: Ընկեր Սարսափունի հետաքրքրուեցաւ այդ բանուրուհիներու կացութեամբ եւ զանազան հարցումներ ըրաւ ընկերվարական հողի վայ:

Նոքա օրական 12 ժամ աշխատութեան փոխարէն կը ստանային միմիայն 2 դրչ: Այս յայտնութիւնը պարզապէս ընդվկեցուցիչ էր:

— Զպէտք է թողուլ այս բանուրուհիները անխիղճ գործարանատիրոջ ձեռքին տակ, որպէս զի այսպէս շահագործէ զանոնք, վճոեց ընկեր Սարսափունի, գործունէութեան պատրաստ հող կայ այստեղ, պէտք է օգուտ քաղել:

Եւ անմիջապէս այդ բանուրներու դլխաւորները հըրաւիրեցինք մեր մօտ:

Հոն ընկեր Սարսափունի մի ընդհանուր տեսութիւն ըրաւ սալարիայի (օրավարձ) մասին, յիշեց քարիթալիս-մի ճնշող լուծը պրոլետարիայի վրայ եւ բանուրական մասաներու իրաւունքները: Նա ըստ թէ նմանօրինակ աշխատութիւններու համար, օրական ութ ժամի փոխարէն, բանուրուհիներ Ամերիկայի մէջ կը ստանան մէկ տոլար, Անդղիայի մէջ 4 հիլի, իսկ Թրանսայի մէջ 5

Փր., այսինքն՝ իրենց օրավարձքի տասնապատիկէն աւելի:

Վերջապէս եղրակացուց թէ աշխատանքի նուազում եւ օրականի յաւելում պահանջելու համար անհրաժեշտ էր ընդհանուր գործադուլ:

Յետոյ ես խօսեցայ նոյն իմաստով եւ չեշտեցի անմիջական գործադուլի պէտքը:

Բանւորուհիները համոզուեցան երբ մանաւանդ վըստահեցուցինք զիրենք թէ մենք ամէն կերպով պիտի օժանդակէինք իրենց եւ թոյլ չպիտի տայինք որ նոքա ջախջախուէին ամբարտաւան եւ անխիղճ քարիթալիամի լուծին տակ: Եւ մեկնեցան մեր քովին՝ խոստանալով երթալ իրենց ընկերուհիներն ալ համոզել:

— Եթէ գտնուին որոնք մերժեն ձեզի միանալ, ըսպանացէք նրանց մեր անունով, արտօնեց ընկեր Սարսափունի:

Հետեւեալ օր ջուլհակի գործարանը ոչ մի բանւորուհի ներկայացաւ աշխատութեան ժամուն:

Գործարանատէր Մակար Մրկօեան որ իմացած էր մեր այցելութիւնը եւ բանւորուհիներու հետ մեր խորհրդակցութիւնը, աճապարեց մեր մօտ: Նա մատնուած էր անտանելի նեղ դրութեան այդ գործադուլի պատճառաւ: Ամբողջ մի քանի ամիսներէ ի վեր նա՝ երեւի՝ մի մեծ ապսպանքի պատրաստութեամբ կը զբաղէր: Քաղաքի թուրք երեւելիներէն միոյն դաւակի ամուսնութեան առթիւ հարսանեկան իրեղէններ պատրաստելու վրայ էր:

— Յիսուն-լաթսուն ոսկիի գործ է, բացատրեց մեզ եւ ես պայմանաւորուած եմ ո՛չ մի կանխալճար չառնել ամբողջ գործը չյանձնած: Արդ, ապսպանքը պէտք է յանձնուի հարսնիքէն գոնէ մի քանի օր առաջ, այսինքն

առ առաւել տասը օրէն, եթէ ո՛չ ես կը զրկուիմ իմ առնելիքս, քանի որ այդպէս պայման դրած ենք եւ ես ամիսներէ ի վեր այդ ապսպանքը պատրաստելու համար ստիպուեր եմ վաշխով դրամ վերցնել, — որովհետեւ դրամ չունիմ: Կ'աղաքն համան տուէք բանւորուհիներուն որ իրենց աշխատութիւնը շարունակեն:

— Մենք ձեր նիւթական նեղութիւններով կարիք չունինք զրաղելու, պատասխանեցի, մենք կ'ուզենք պաշտպանել ընկճուած բանւոր դասակարգի իրաւունքները եւ քափիթալիամի բոնակալութեան դէմ բարձրացնել միջադպային գործաւորական դասակարգի դաշնակցութիւնը:

Կեղտուա գործարանատէրը տեսաւ որ հեշտ չէր մեղ խարել, ուստի ուզեց համաձայնութեան մը գալ:

— Ի՞նչ է ձեր պահանջումը, հարցուց:

— Նախ՝ պէտք է ընդունիլ Երեք Ութերը, մէջ մտաւ ընկեր Սարսափունի:

— Երեք Ութեռը, ըստաւ Մակար աշքերը բացած:

Հարկ եղաւ այդ կեղեքիչ բորենիին բացատրութիւն տալ:

— Ութ ժամ աշխատանք, ութ ժամ հանգիստ, ութ ժամ քուն, ահա գործաւորի առաջին իրաւունքը:

— Լա՛ւ, թող գան եւ ութ ժամ միայն աշխատին. սա գործը հասցնենք:

— Յետոյ, շարունակեց ընկեր Սարսափունի, օրականի յաւելում...

— Ո՞րչափ:

— Առ նուազն հինգ դրուց:

— Բայց անկարելի է այդքան օրական վճարել վայի մէջ:

— Ուրեմն գործադուլը կը շարունակուի անպայման :

— Կ'աղաչեմ, զիս սլիտի կործանէք, պլիտի փճացնէք, կը բղաւէր բանւորուհիներու արիւնը ծծող այդ անյագ տղրուկը :

— Հարցը քո վերայ չէ՝ այլ բանւոր դասակարգի շահերուն վերայ, շեշտեց ընկեր Սարսափունի :

Բաւական վարանումներէ ետք Մակար Մրկօեան հաւանեցաւ հինգ դրուշ օրական տալ : Նորա միտքը շատ պարզ էր, կ'ուզէր ապրանքները անպատճառ օրին աւարտել ու ասոր համար կը հաւանէր մեր պայմաններուն, բայց յայտնի է որ գործը լմնալէ վերջը իր խոստումը չպիտի յարգէր :

Մենք իսկոյն գուշակեցինք իր յետին մտքերը :

— Հինգ դրուշ օրական կը հաշուուի ներկայ գործի սկսելին, եւ ըստ այնմ կը վճարուի բանւորուհիներուն, պինդեց ընկեր Սարսափունի :

— Բայց այն ատեն ես այդ գործէն ո'չ թէ բնաւդրամ չեմ շահիր, այլ բոլորովին կը կործանիմ :

— Դա տարբեր հարց է, վճռեց մեր ընկերը :

Վերջապէս կարելի չեղաւ այդ կեղծ աղուէսը համոզել :

— Հինգ դրուշ օրական կուտամ վաղուընէ սկսեալ, պինդեց :

— Ուրեմն գործադուլը կը շարունակուի :

Եւ նա հեռացաւ յուսահատ տրամադրութեան տակ :

Այսօր գործադուլի եօթներորդ օրն է : Տեսնենք ի՞նչպէս կը վերջանայ ընկերվարական այս մեծ ցոյցը, որը ամբողջ քաղաքին մէջ օրուան խնդիր դարձած է :

Ը.

ՎԱՆ, 30 Նոյ. 1910

Մերելի ընկերներ,

Զուլհակի աշխատանոցին բանւորուհիներու գործադուլը, որու մասին խօսեցայ նախորդ նամակիս մէջ, մի շատ տարօրինակ արդիւնք տուաւ, որը սակայն մխիթարական է մեզի համար եւ նպաստաւոր մեր պրէսթիժի բարձրացումին :

Գործարանատէր Մակար Մրկօեան երբ տեսաւ որ մենք հաստատ կեցած ենք մեր հայեցակէտի վրայ եւ շահագործուող բանւորուհիներու պաշտպանութիւնը ձեռք առած, առանց իր խարեբայական զիջումներու եւ աղաչնքներու ականջ կախելու, փորձեց ուրիշ բանւորուհիներ գունել գործը շարունակելու համար : Այն ատեն հարկ եղաւ պայքարը առաջ տանիլ տարբեր միջոցներով :

Մեր գործօն շարքերը հրահանդ ստացան ամէն դնով արդիւն ջուլհակարանի աշխատութիւններու վերսկսումը եւ երթաւով գործատան մօտերը, թոյլ չտուին ո'չ մի բանւորուհի որ ներս մտնէ : Մեր այս ուղղակի եւ դրե-

թէ բռնի ոյժով միջամտութիւնը պրոլետարիայի պաշտամանութեան համար, առաջ բերաւ խանդավառ ողեւորութիւն մեր ընկերներու մէջ, մինչդեռ հարստահարիչ պուրժուազիան սարսափահար կը նկատէր իր դարաւոր բռնակալութեան դէմ ցցուող այս նոր ոյժը:

Իսկ գործադուլ ընող բանուրուհիներու դրութիւնը շատ ողորմելի էր: Նոքա չունէին ո՛չ նիւթական կարողութիւն եւ ո՛չ ալ բարոյական կորով՝ դիմադրելու համար առժամեայ զրկանքներու եւ պատրաստակամութիւն կը յայտնէին երթաւ գործի սկսելու, նախկին օրականով: Ինչ որ պիտի ըլլար մեր պրէսթիժի համար աղետաւոր հարուած:

Գործադուլի տասներորդ օրը երբ նոքա եկան մեզ մօտ եւ յայտարարեցին թէ՝ իրենք որոշած են հետեւեալ օր գործի սկսելու, ընկեր Սարսափունի՝ բուռն բարկութեամբ՝ իրենց վասութիւնը երեսնուն զարկաւ:

— Բայց անօթի կը մեռնինք այսպէս, կ'ըսէին բանուրուհիները:

— Թէկուզ անօթի մեռնիք, պէտք է դիմադրել, վըճռեց ընկեր Սարսափունի. մինչեւ որ այսօր անօթի չմեռնիք՝ չէք կրնար վաղը լաւ կշտանալ: Մենք կ'ուղենք ձեզ ստրուկ բանուրի շղթաներէն փրկել եւ գործարանատէրի վիճակին բարձրացնել եւ գուք կը համարձակիք դժոնութիւնի յայտնելու. դա գիտակից բանուրուհիի անարժանարարք է:

— Բայց գոնէ մեզի դրամական նպաստ մը ըրէք գործադուլի միջոցին, առարկեց բանուրուհիներու գըլւխառը:

— Մենք գաղափարային հողի վրայ կը գործենք, դիտել տուի ես, եւ մեր օգնութիւնն ու պաշտպանութիւ-

նը բարոյական, մտաւորական, կուլտուրական, Փիզիքական է, բայց երբեք դրամական:

Նոքա մեկնեցան լարուած դրութեան մէջ: Յետոյ իմացանք որ երկու օր ետքը կը դիմեն աշխատանոց գործի սկսելու տրամադրութեամբ եւ ահա՛ փակ կը գտնեն ջուլհակի գործատան դուռը: Միթէ իր կողմէ Մակար Մրկօեան լու հոչակած էր բանուրուհիներու դէմ: Ո՛չ բնաւ: Այլ պատահեր էր մի ուրիշ խիստ յատկանշական դէպք:

Այն թուրք բէկը որ իր զաւակի ամուսնութեան առթիւ ապապրանքներ էր ըրեր գործարանատիրոջ, տեսնելով թէ որոշուած պայմանաժամին սա գործերը կարող չէ եղած յանձնել, բողոքեր եւ յայտարարեր է որ այլեւս բնաւ ընդունիր ուեւէ ապապրանք եւ թէ կը մերժէ ուեւէ փող վճարել:

Բէկի այս արդարացի որոշումը հասեր է այն վաշշառուկ ականջին որ փոխ տուած էր Մակարի, յոյս դնելով անոր պատրաստած գործին վրայ եւ նա անմիջապէս կառավարութեան միջոցով արդելքի տակ առեր է, իր պահանջքին փոխարէն, ջուլհակի աշխատանոցը եւ հոն գտնուող գործիքները:

Այսպէս ուրեմն՝ անխիղճ քափիթալիսթը ինքն իր կարգին զոհ է դարձեր մի ուրիշ աւելի անխիղճ քափիթալիսթի ձեռք:

Մակարի կացութիւնը այնչա՛փ վատթարացաւ որ նա այժմ ստիպուած է երեք դրուչ օրականով աշխատիլ գործաւոր:

Ընկերական ու դասակարգային ապագայ մեծ կա-

տակլիսմայի մի մանրանկարը կարելի է համարել այս
երեսոյթը:

Դալով գործադուլ ընող բանւորուհիներուն՝ ափսոս
որ նոքա չկրցան բաւարարութիւն ստանալ: Իրենցմէ մի
քանիսը հաղիւ կարողացան ուրիշ գործարաններու մէջ
գործ գտնել օրական մէկ զրուցով՝ ինչ որ տեղական ապ-
րուստի պայմաններու հետ բաղդատմամբ բաւականաչափ
միջոց է ապրելու: Մի քանիսը հեռացան քաղաքէն, մօ-
տակայ գիւղերու մէջ աշխատանք գտնելու յոյսով: Իսկ
մէկ քանին դեռ պարապ կը պտտին:

Այս վերջինները մեղ շատ նեղութիւն կը պատճա-
ռեն: Գրեթէ ամէն օր կուդան մեղ մօտ եւ իրենց անգոր-
ծութեան ու թշուառութեան պատճառը մեղ կը համարեն:

Ի զո՞ւր ես եւ ընկեր Սարսափունի կը ջանանք կարլ
Մարքսէն, Պակունինէն, Կրաբոթկինէն, Հէկէլէն, Լասա-
լէն, Պէտէլէն փաստացի օրինակներ բերել ասլացուցանե-
լու համար թէ՝ իրենց թշուառութեան եւ անգործութեան
պատճառը պէտք է փնտուել ընկերային արդի կազմին մէջ,
քափիթալիզմի բռնակալութեան եւ տիրող փոքրամասն
տարրերու դարաւոր կեղեքումին մէջ եւ թէ ներկայ դրու-
թիւնը ջնջելու միակ միջոցն է բոլոր աշխարհի գործա-
ւորներու ընդհանուր միութիւնը բոլոր աշխարհի գործա-
րանատէրերուն դէմ:

— Հիմակուան մեր վիճակին ճար մը մտածեցէ՛ք.
կը կըկնեն այդ կիները ամէն անդամ որ իրենց կը բացատ-
րենք ընկերվարական սկզբունքները, որոնցմէ կախուած
է իրենց փրկութիւնը:

Տեսնելով որ միջոց չկայ իրենց ձեռքէն ազատելու,
ընկեր Սարսափունի, մի քանի օր առաջ, երբ կրկին եկան
մօտ, հետեւեալ վճռական պատասխանը տուաւ.

— Մենք բացարձակապէս ոչինչ կրնանք ընել ձեղ
համար, միայն կ'աշխատինք ձեզ մտցնել Միջազգային
Գործաւորական Ընկերակցութեան Գալիֆոռնիայի մաս-
նաճիւղին մէջ, ուր մեր ընկերները կը գտնուին, իբրեւ
պատոյ անդամակցուհի:

— Բայց ի՞նչ օգուտ պիտի քաղենք այդ անդամակ-
ցութենէն, հարցուցին բանւորուհիները մի քիչ սիրա ա-
ռած :

— Հաւանօրէն, երբ ձեր գործադուլը եւ ներկայ
վիճակը սլարդենք իրենց, առաջ ատարաւ ընկեր Սարսա-
փունի, Գալիֆոռնիոյ Միջազգային Գործաւորական Ըն-
կերակցութեան մասնաճիւղի բիւրօն իր ելլայրական հա-
մակրանքը յայտնող մի գրութիւն կ'ուղղէ ձեղ, որ միան-
դամայն մի մտրակող դատապարտութիւն կ'ըլլայ բոլոր
աշխարհի քափիթակիներու համար:

Նոքա չպատասխանեցին եւ մեկնեցան դժգոհ տպա-
ւորութեան տակ:

Այսպէս ուրեմն ջուլհակարանի գործադուլը մեզի հա-
մար եղաւ մի ահազին յաղթութիւն դաղափարային հողի
վրայ:

Դա նախաքայլն է տակաւին:

թ.

ՎԱՆ, 20 ԴԵԿ. 1910

Սիրելի ընկերներ,

Ախտո՞ս որ հակառակ մեր անձնազոհութեան, մեր պրոպականդայի, մեր յեղափոխական անկեղծ գործունէութեան, տակաւին այս ապերախտ ժողովուրդը չուզեր ճանչալ իր ճշմարիտ բարեկամները, եւ մի տեսակ թըշնամական վերաբերմունք ցոյց կուտայ մեզի հանդէպ:

Պոլսոյ մէջ սկսած հակայեղափոխական հոսանքը հոս ալ սկսած է իր ազդեցութիւնը ունենալ: Մարդիկ՝ որ իբրեւ փրկիչներ, իբրեւ գերմարդկային էակներ մեզ կը պաշտէին, որ մեր ամէն խօսքերն եւ գործքերը անվերապահ հիացումով կ'ընդունէին, այժմ սկսած են ինք զինքնուն ներել քննադատութիւններ անելու, մեզի հետ վիճելու, մեզ դէմ ելլելու:

— Մի լաւ ջարդ նրանց կը զգաստացնէ, կ'ըսէր անցած օր ընկեր Սարսափունի գառնութեամբ:

Դա, բնական է, մի քիչ չափազանցութիւն է եւ վայրենական տպաւորութեան արդիւնք, բայց հարկ է ընդունիլ որ նա իրաւունք ալ ունէր այդպէս ասելու:

Քաղաքային ամուսնութեան, ազատ կենակցութեան համար մեր բոլոր ջանքերն ու դասախոսութիւնները, դպրոցական հարցի ու գործադուլի համար մեր բոլոր գործունէութիւնը փոխանակ բաւարար արդիւնք տալու, մեզ դէմ գրգռեցին ամբողջ Վանի Հայութիւնը, եւ այժմ մեղ կ'ամբաստանն իբրեւ խառնակիչ, խոռվարար, իբրեւ տնտեսական եւ բարոյական քայլայում յառաջ բերող մի աղետաբեր տարր, մինչդեռ մեր նպատակն է վերականգնել կործանուած հայրենիքը, տալով անոր արդի պահանջներու համաձայն կազմակերպութիւն:

Մակար Մրկօեանի պարագան՝ որ գործարանատէրի վիճակին վերածուեցաւ պարզ բանւորի՝ ցնցող տպաւութիւն գործեց ամբողջ միւս ջուլհակի հայ գործարանատէրերու վրայ, որոնք այժմ կ'ուղեն իրենց բանւորուհիներու օրականը նուազեցնել՝ որպէս զի անոնց աչքը վախցնեն եւ գործադուլի սպառնալիքներէն ազատին:

Մի բանւորուհի որ դիպուածով մեզի հետ խօսակցած էր, հետեւեալ օրն իսկ իր գործարանէն վլնտուեցաւ այդ ոնիի համար:

Թուականէս մի շաբաթ առաջ ընկեր Սարսափունի դպրոցի սրահին մէջ մի դասախոսութիւն ըրաւ «Պրոլետարիատ մասսաներու կոլէկտիվիստական էվոլյուցիա»ի մասին: Սրահը լիքն էր միմիայն մեր ընկերներով. բացի անոնցմէ, ո'չ մի վանեցի համարձակած էր ներկայ զըտնուիլ այս շինարար դասախոսութեան, իր վրայ չհրաւիրելու համար յետադիմական տարրերու թշնամութիւնը:

Ի հարկէ նոր սերունդին մէջ մենք ունինք մեզ համակիր զանգուածներ, մասնաւորաբար մանկապարտէզի եւ նախակրթարանի աշակերտներու մէջ, բայց անոնք ալ

այս միջոցին աւելի ձիւնագնտակ խաղալու գրադուած են
քան թէ մեր ընկերվարական թէօրիաներով:

Եւ ցաւալի է որ նոյն իսկ դպրոցականներու մէջ,
մի հակահուանք սկսած է մեզի դէմ, ուղղակի ծնողնե-
րու ազդեցութեան տակ: Անոնք փոխանակ իրենց զաւակ-
ները ըմբոստացումի մղելու, կը ջանան հնաղանդութեան
մէջ պահել, մեռցնելով անոնց քով յեղափոխական ոգին:
Արդէն տարբեր բան կարելի չէ սպասել այդ ստրկամիտ
արարածներէն: Շատ ճիշդ կը խօսի ընկեր Սարսափունի
երբ յաճախ կը կրկնէ.

— Տաճկահայի քով յեղափոխական տեմպերամենտը
(խառնուածք) կը պակսի:

Ահա այդ տեմպերամենտը ստեղծելու համար պէտք
է շարունակական պայքար մղել: Եւ ասոր համար հարկ
անհրաժեշտ է ձեռք առնել հայ իդական սեռը, որ իրուն
ճնշուած եւ ստրուկ դասակարդ, աւելի տրամադիր է ըմ-
բոստացումի:

Ներկայ իրականութեան հանդէպ, իմ եւ ընկեր
Սարսափունիի դործունէութեան ուղղութիւնը պիտի ըլ-
լայ դէպի այն ճանապարհով: Այսինքն՝ զարթեցնել Վաս-
պուրականի հայ կինը իր դարաւոր քունէն, մի ցնցող ո-
ղեւորութիւն յառաջ բերել իր մէջը, զինքը իջեցնել կոի-
ւի ասպարէզը, անողոք պայքար մղելու տղամարդ (ա-
րական) դասակարդին դէմ եւ իր բունաբարուած իրա-
ւունքները ձեռք բերելու համար, թէկուզ արիւնի դնով:

Կնոջական էմանսիփացիա. ահա' մեր նշանաբանը
վաղուայ պայքարին համար:

Արդէն իսկ ընկեր Սարսափունի հետեւեալ կոչը
խմբադրեց զոր՝ խմորատիպ՝ բաժնեցինք մեր ընկերների
ձեռքով ամբողջ քաղաքի եւ շրջակայ դիւզերուն մէջ.

« Վասպուրականի Հայուհինելը,

« Արքնցէ'ք ձեր դարաւոր քունէն, վեր կացէ'ք եւ
փշուցէ'ք ստրկութեան շղթաները, որոնց ծանրութեան
տակ կորաքամակ ու չնչասպառ կը լինէք:

« Վերցուցէ'ք ձեր աչքերը, եւ դիտեցէ'ք Ամերիկա-
յի Միացեալ Նահանգներու, Անդլիայի ու Ֆրանսիայի
ձեր քոյրերը: Տեսէ'ք թէ նոքա ինչպէս ոտքի են կանգնած
եւ հրամայական պահանջը կը դնեն իրենց իրաւունքնե-
րը ստանալու համար: Նոքա միայն խօսքով չեն բաւա-
կանանար, այլ կը դիմեն նաեւ դործքի, կը դիմեն եւ
բուռն միջոցներու: Ինչո՞վ դուք պէտք է ետ մնաք իրենց-
մէ. միթէ դուք այլ Գերմանացի, Սպանիացի կամ Աւս-
տրիացի կիներուն նման՝ կ'ուզէք ստրկութեան շղթաները
իրեւ զա՞րդ դործածել ձեր վիզերուն ու բազուկներուն:
Հայ յեղափոխականը որ դզրդեց ամբողջ Թուրքիան, Ռու-
սիան ու Պարսկաստանը, Հայ յեղափոխուհին, որ անոր
կողքին կանգնած հրացանը ուսին՝ կուռեցաւ իր պարսկի
եւ ոռւս քոյրերու ազատագրութեանը համար, միթէ
այժմ, թեւերը ծալլած, թո՞յլ պիտի տայ որ իր ամու-
սիններէն ու եղբայրներէն, հայրերէն ու պապերէն կե-
ղեքուի ու ճնշուի: Դա կը լինի անջնջելի ամօթ եւ նախա-
տինք Հայ կնոջ համար: »

Ու այսպէս շարունակելով, ի վերջոյ, ընկեր Սար-
սափունի կը ներկայացնէր հետեւեալ պրօգրամը իրեւ
Վասպուրականի Հայ կնոջ նուազագոյն պահանջները.

Ա. Այրերու եւ կիներու իրաւունքի ու պարտքի
բացարձակ հաւասարութիւն:

Բ. Հայ կինը ընտրող ու ընտրելի բոլոր ազգային
պաշտօններու համար:

Գ. Զաւակներու վրայ հաւասար իրաւունք:

Դ. Կնոջ բացարձակ իրաւունք ամուսնական յարկէն գուրս յարաբերութիւններ մշակելու, իր սրտի հակումներու համեմատ, պատշաճութեան սահմանին մէջ:

Ե. Ամուսնական ւաշուկ պարմանադրութեանց ջընջում:

Զ. Վասպուրականի հայ կինը հասարակական գործերու մասնակից՝ իրերւ կին-դաստիարակ, կին-վաստարան, կին-բժիշկ, կին-դատաւոր, կին-թաղական, կին-հոգաբարձու, կին - խնամակալ, կին - հրապարակագիր, կին-պաշտօնեայ եւ կին-ոստիկան:

Է. Եկեղեցական ասպարէզը նմանապէս բաց կիներու համար, որով կարելի ըլլայ ունենալ կին-վարդապետ, կին-վանահայր, կին-եպիսկոպոս եւ կին-առաջնորդ:

Ընկեր Սարսափունի կ'ուզէր ծրագրի մէջ անպայման մտցնել նաեւ կին-զինուորի պահանջը. բայց ես խոհեմութիւն համարեցի առ այժմ լուռ անցնել այդ մասին: Չպէտք է խրտչեցնել մեր յետադիմականները:

Այս կոչին կը յաջորդէ մի հսկայ միթինկ, Եկեղեցու մէջ, ծրագիրը ընելու համար գործնական հողի վրայ:

Ժ.

ՎԱՆ, 10 Յունի. 1910

Արելի ընկերնե՛ր,

Միթինկը Վասպուրականի հայ կիներու էմանսիրացիյի (ազատագրութեան) մասին, որ իմ նախորդ նամակով ծանուցած էի, կայացաւ, բայց անորոշ արդիւնաբերութեամբ:

Ծնունդի Խթման գիշերը, երբ Եկեղեցին լիքն էր կիներու եւ տղամարդոց բազմութեամբ, որոնք ջերմեռանդ ուշագրութեամբ կը հետեւէին երգեցողութեան՝ յանկարծ՝ Խորանի կողքին՝ վեր կանգնեցաւ ընկեր Սարսափունի եւ հիանալի թափով մը գոչեց.

— Վասպուրականի Հայուհինե՛ր, Ազատութեան ժամը հնչեց ձեզի համար. Թօթափեցէ՛ք ձեր շղթաները եւ թող...

Հազիւ թէ այս ցնցող խօսքերը արտասանած էր մեր ընկերը՝ մի աննկարագրելի իրարանցում տեղի ունեցաւ եկեղեցիին մէջ:

Եկտաղիմական, շերիաբնի տարրը յանկարծ գլուխ

բարձրացուց, «դուրս, դուրս» պոռչութքներ արձակելով, մինչ Դասին ու Խորանին վրայ գտնուող կղերականութիւնը, հաւատարիմ իր անարդ դերին, կը փորձէր յարձակիլ կնոջական Էմանսիբացիայի առաքեալին վրայ եւ լուցնել նորա ճշմարտախօսութեան շեփորը:

Ներկայ կիները անդամ, առանց որոշ գիտակցութիւնը ունենալու իրենց իրական շահերու մասին, նախատինքներ ու յանդիմանութիւններ կ'ուղղէին մեր արիասիրս ընկերոջ:

— Տղե՛րք, հասէ՛ք, գոչեցի, տեսնելով որ բոնի ուժը կ'ուղէր խեղդել ճշմարտութեան եւ ազատութեան ձայնը:

Բայց մեր անձնուէր շարքերէն ո՛չ ոք երեւան կուգար: Յետոյ իմացայ որ մեր գործօն ընկերներէն շատեր մի հակալղերական ցոյց ընելու համար որոշեր են նոյն գիշեր չի գալ եկեղեցի:

Մի ընկերուհի միայն որ կիներու մէջ կեցած էր, ձայն բարձրացուց եւ գոչեց.

— Թողէ՛ք որ խօսի, ան մեր գատը պիտի պաշտամէ:

Բայց կիներու մոլեռանդ ամբոխը նորա ձայնը խեղդեց.

— Մենք հոս դատ տեսնելու չեկանք, աղօթք ընելու եկանք, կ'ունային այդ ջատուկները, յարձակելով մեր անպաշտուան ընկերուհու վրայ:

— Կիներու Էմանսիբացիան մի հարց է որ ծագում առած է նախապատմական շրջաններէն ի վեր, երբ կինը կլանների հասարակական ստացուածքը կը համարուէր, եւ երբ զաւակը չէր ճանաչէր իր հայրը, եւ սերնդական յաջորդութիւններու ճիւղագրութիւնը հիմնուած էր մօ-

րենական արենակցութեան վրայ... կը շարունակէր դիտել տալ ընկեր Սարսափունի, պնդօրէն կառչած Խորանին վրայ դրուած գրակալին, որմէ զինքը զատել կ'ուղէին աւագերէցն ու լուսարարը:

— Մենք հոս աղօթք ընելու եկանք, ճառ մտիկ ընելու չեկանք, թո՛ղ երթայ ուրիշ տեղ իր ճառը խօսի, հոս եկեղեցի է՝ լսարան չէ, վա՛ր առէք Խորանին վրայէն, գո՞ւրս նետեցէք, կը պոռար մոլեռանդ ու կոյր ամբոխը, հետզհետէ գրգռուած:

Մեր արիասիրս Ընկերը, առանց պաղարիւնութիւնը կորսնցնելու, թողլով գրակալը, որ բաւական հաստատուն չէր, պլուած էր Խորանին մարմարեայ ոտքին ու իր դասախօսութիւնը կը շարունակէր, հակառակ եկեղեցու մէջ տիրող խառնակութեան.

— Միակնութիւնը տղամարդուն (էրկան) կողմէ հնարուած մի պայմանագրական օրէնք է որը գոյութիւն չունի Բնութեան մէջ... կը շարունակէր՝ ուշ չղնելով աւագերէցի ու լուսարարի ճնշումներուն որոնց միացած էին նաեւ տիրացուներ եւ վարդապետը:

— Օրինակ՝ Պիրմանիան, դիտել կուտար ընկեր Սարսափունի փաստացի ապացոյցներու դիմելով, Պիրմանիան, ուր ամուսնութիւնը ո՛չ թէ բազմակին՝ այլ բազմայր է, այսինքն՝ կինը իրաւունք ունի բազմաթիւ ամուսիններ ունենալու:

Եւ այսպէս նա կը ջանար, հակառակ մոլեռանդ ամբոխին, Վասողուրականի հայ կնոջ Էմանսիբացիան պատրաստել, բայց ահա՛ զինքը ամէն կողմէ պաշարեցին ու բիրս ուժի միջոցաւ, վար առին Խորանէն:

Ես մտածեցի միջամտել, մի լաւ դաս տալ այդ յետագիմական կոյր պարոններուն, բայց ափսո՞ս որ մեր

ընկերները, ինչպէս լսի, պօյքօք ըրած էին եկեղեցու դէմ եւ իմ միջամտութիւնը ո՛չ մի օղուտ չէր կընար ունենալ եւ գուցէ աւելի գրգռէր խաւարամիտ ամբոխին կատաղութիւնը:

Այժմ բազմութիւնը մեր Ընկեր Սարսափունին աարած էր քովի պահարանը, եւ կը լսէի հարուածներու եւ հայհուչներու ձայնը, եւ մի ողո՞րմ աղաղակ որ դուրս կուղար դասախոսին կոկորդէն:

Եւ ես, մի անկիւնի խորը կեցած, կը խորհէի Տօքթոր Շթօքմանի վրայ, իպսէնի այդ հերոսին, որ ինքն ալ ուղելով զոհուիլ ժողովրդի օդտին՝ փոխանակ վարձատրութեան՝ նախատինք ու հալածանք կ'ընդունի անորմէ: Կը խորհէի Արիսդիլէսի վրայ, որ իր ճշմարտախօսութեան համար, ոստրէվճռով աքսորի կը դատապարտուէր տղէտ ամբոխին կողմէ: Կը խորհէի ես իմ մասիս, որ այնքա՞ն հալածանքներու ենթարկուեցայ Ծապլվարի մէջ, ուղելով վերակենդանացնել այդտեղի մեռած բնակչութիւնը: Երբ այս մտածումներէս սթափեցայ, աղմուկը հանդարտած էր եւ երգեցողութիւնը վերսկսած եկեղեցու մէջ: Այն ատեն խորհեցայ որ պէտք էր օգնութեան համնիլ մեր տարարախտ ընկերոջ եւ թոյլ չուալ որ նա վատերու ձեռք այդպէս ծեծի ու նախատինքի ենթարկուի:

Խսկոյն դուրս ելայ եկեղեցիէն եւ փողոցի անկիւնը տեսայ ընկեր Սարսափունին, որ գետին փոռուած, չնչասպառ կը հեւար, հեծկտանքներ արձակելով:

— Այսօր մի գաղափարային փառաւոր յաղթանակ տարիր, որու համար ապագան երախտապարտ պիտի մնայ քեզ, ըսի մեր սիրելի ընկերոջ ճակատը համբուրելով:

Նա համեստութեամբ պատասխանեց.

— Դա ոչինչ, խնդրեմ մի քիչ ջուր:

Ցետոյ, զինքը մեծ դժուարութեամբ եւ մի անձնուէր ընկերոջ օժանդակութեամբ փոխադրեցի տուն, եւ անմիջապէս հանդստացուցի անկողնի մէջ:

Պէտք է ասել որ թշուառականները չէին խնայած իրենց հարուածները, եւ մեր ընկերոջ ոսկորները սարսափելի կերպով կը ցաւէին:

Ամբողջ գիշերը նա անքուն անցուց, մատնուած սաստիկ տենդի եւ ատեն ատեն զառանցեց: Նա, նոյն իսկ իր զառանցանքի մէջ, կը շարունակէր ընդհատուած դասախոսութիւնը, կը պարզէր Ֆիճիի, Սումագրայի, նոր Զեւանտայի, նումէայի եւ լիաղաղական Ովկիանոսի ուրիշ այլ եւ այլ կղզիներու կիներուն ընկերական վիճակը, բարքերը, սովորութիւնները, նիստուկացը, իր հայեցակէտները հիմնելով միմիայն փաստացի իրողութիւններու վրայ:

Այսօր հինգերորդ օրն է որ նա անկողինը գամուած կը մնայ, բայց, բարեբախտաբար, ցաւերը անցած են բուրովին, եւ չուտով վեր կը կանգնի անկողնուց:

Ինչպէս կը տեսնէք, մեր գործունէութիւնը մտած է պայքարի բեղմնաւոր ըրջանէն մէջ:

ԺԱ.

ՎԱՆ, 25 Յունի. 1911

Սիրելի ընկերնե՛ր,

Ապաստ' որ ձմեռն ու ձիւնը գոյած են բոլոր ճամ-
բաները, եթէ ոչ, ձեր հրահանդի համեմատ, շուտով կը
մեկնէի կարին ու անկէ կ Պոլիս, ուր իմ ներկայութիւ-
նը անհրաժեշտ կը դատէք: Յուսամ որ մի քանի շարաթէն
կարող կը լինիմ ճանապարհ իյնալու:

Ընկեր Սարսափունի եւս տրամադիր է գնալ դէպի
Պարսկաստան. նա հոգեկան շատ ընկճուած դիրքի մէջ
է վերջին անախորժ դէպէն ի վեր: Թէեւ ծեծի հետե-
ւանքներէն բոլորովին ապաքինած՝ բայց կորուսեր է իր
նախկին անձնավստահութիւնն ու եռանդը: Եղր Վասպու-
րականի հայ կնոջ կմանսիբացիայի խօսք ըլլայ, նա՝
բնազդաբար եւ ակամայ՝ ձեռքը կը տանի քամակին:
Պէտք է ասել որ Եկեղեցու միջադէպը ունեցաւ խիստ վատ
հետեւանքներ: Կղերա - յետադիմական - մութ - չէրիսթ-
ճի ուժերը շահագործեցին այդ ցոյցը իբրեւ մի հակա-
կոօնական քայլ, մինչդեռ մենք բացարձակապէս կը յար-

գենք ամէն համոզում, եւ եթէ ուզեցինք մեր դասախո-
սութիւնը Խթումի գիշեր՝ ժամերգութեան պահուն եկե-
ղեցու մէջ ընել, երբեք նպատակ չունէինք հաւատացեալ-
ներու աղօթքը խանգարելու: Այդ իսանգարումը առաջ ե-
կաւ հակառակ մեր կամքին ու անկէ անկախ պատճառ-
ներով, որովհետեւ դասախոսութիւն եւ ժամերգութիւն
միեւնոյն ատեն պատահեցան գիշեր ժամանակ մը, Խթու-
մի օրով: Այս ճշմարտութիւնը սակայն շատ դժուար էր,
ըստ Ավրամեան գեղեցիկ բացատրութեան առանց «պուր-
դուով ծակելու» մտցնել մեր խաւարամիտներու գլխուն
մէջ: Եւ ահա՛ ամբողջ քաղաքը սկսաւ մեզ դէմ դառնալ,
մոռնալով մեր բոլոր անձնուիրութիւններն ու զոհողու-
թիւնները:

Միւս կողմէ մեր տղերքն ալ մեզ մատնեցին նեղ ու
վատ դրութեան: Անոնք իմանալով ինչ որ անցած էր եկե-
ղեցու մէջ իրենց բացակայութեանը, սաստիկ գայրացած
եկան մեզ մօտ եւ պահանջեցին որ, մեր պրետիդի պահ-
պանումի համար, ընկեր Սարսափունի իր դասախոսու-
թիւնը անպատճառ կրկին կատարէ նոյն պայմաններուն
մէջ: Այսինքն՝ մեր տղերքը պարզապէս կը պահանջէին որ
գիշեր ժամանակ կրկին Ծննդի Խթման արարողութիւնը
կատարուէր, կրկին նոյն հասարակութիւնը գար եկեղեցի
եւ կրկին ընկեր Սարսափունի իր դասախոսութիւնը շա-
րունակէր ընդհատուած կէտէն:

Այս արդարացի եւ լէզալ պահանջմունքը ցոյց կու-
տայ մեր ընկերներու յեղափոխական զարդացման եւ
ինքնագիտակցութեան որոշ աստիճանը: Ընկեր Սարսա-
փունի հակառակ որ անկողնի մէջ չէր կարող շարժիլ, երբ
լսեց մեր շարքերու այդ օրինական հողի վրայ ըրած պա-
հանջմունքը, հիացումով վեր ցատկեց պառկած տեղէն:

Բայց այս հրամայողական պահանջը որքան լեզալ
ու անտեղիտալի՝ նոյնքան ալ բացարձակօրէն անդործադ-
րելի էր:

Մեր տղերքը ի հարկէ գիտէին ու կը գդային իրենց
առաջարկութեան անկարելիութիւնը, բայց անոնք այդ
ըսելով կ'ուղէին ցոյց տալ թէ երբ խնդիրը մի ընկերոջ
վիրաւորեալ արժանապատռութեան վրայ է, մինչեւ ո՞ւր
կրնայ համնիւ իրենց գաղափարային երեւակայական յան-
դընութիւնը:

Յամենայն դէպս հարկ էր մի բան սարքել բոնի ոյ-
ժի այդ վայրագ ու գաղանային արարքի դէմ, վերահաս-
տատելու համար մեր արդէն վտանգուած պրեստիթը: Մի
ցնցող գործունէութեամբ պէտք էր ժողովրդի լարուած
դընութիւնը մի տարբեր հողի վրայ դարձնել եւ ջնջել
տիրող վատ տպաւորութիւնը:

Այս մասին երկար խորհրդակցութեանք ընկեր Սար-
սափունիի հետ: Եթէ լոիկ մնջիկ մեկնէինք վանէն, ես
դէպի Պոլիս եւ նա դէպի Պարսկաստան, այդ կը լինէր
դասալըութիւն, փախուստ, սպազանձում եւ մահացու
հարուածը կուտար մեր ազգեցութեան եւ միաժամանակ
բարոյապէս կը մահացնէր մեր գործօն շարքերու եռանդը:

— Նրանց գլխին պէտք է բանալ մի փորձանք որու
մէջէն սատանան ալ չկարենայ դուրս չպրտիլ, կ'ըսէր ըն-
կեր Սարսափունի յաճախ, մեր խորհրդակցութեան մի-
ջոցին:

Արդարեւ մեզի համար միակ դարմանն էր այդ փոր-
ձանքը ստեղծել պատուով դուրս գալու համար մեր կրի-
տիքական կացութենէն:

Մեր ընկերներէն Գիտ Մակար, որ մի հնարամիտ
ու յանդուգն տղայ է, մի երեկոյ, երբ ինքն ալ ներկայ

էր խորհրդակցութեան, յանկարծ մի առաջարկ բերաւ
սեղանի վրայ:

— Վանէն վեց ժամ հռուսորութեամբ, ըսաւ,
Բձիմ գիւղի մօտերը, մի վանք կայ, Սուրբ Վարդանայ
վանք անունով, ուր ամէն տարի, Վարդանանց տօնին,
եկեղեցական հանդէս կը կատարուի ու վանէն ու ըը-
ջակայ գիւղերէն բազմաթիւ ուստաւորներ կ'երթան:
Վանքին մէջ միայն վանահայր մը, երկու վարդապետ եւ
մէկ քանի մշակներ կան: Միթէ կարելի չէ՞ Վարդանանց
հանդէսի օրը երթալ այդ վանքը գրաւել իրեւ մի հա-
կացոյց Խթման գիշերի դաւաղըութեան:

— Դա արդարեւ մի լուրջ հարց է, վճռեց ընկեր
Սարսափունի, եւ յամենայն դէպս ցնցող տպաւորութիւն
կրնայ գործել մեր ընկերներու վրայ եւ ժողովրդի մէջ
յառաջ բերել մի ուեէ շարժում:

— Գրաւել վանքը, վարդապետները դուրս վանել,
մատակարարութիւնը յանձնել մեր ընկերներէն կաղ-
մուած Խնամակալութեան մը, ուղղակի մեր Կուսակցու-
թեան կոնտրօլի տակ, եկեղեցին վերածել լսարանի, վա-
նական խուցերը փոխել աշխատանքի տան, անպէտ անօթ-
ները վաճառել եւ գրչագիր մատեանները, եւ
անոնց տեղ հաստատել ժողովրդական գրադարան, բա-
նալ մի ընթերցարան, վարժարան, ժողովրադական
ակումբ, մի միջկուսակցական խմբատեղի, հողերու մշ-
կութիւնը յանձնել մի գիւղատնտեսագէտ ընկերոջ, եւ
վերջապէս փոխանակ Վարդանանցի՝ տօնել այնտեղ Խա-
նասորի Արշաւանքի տարեղարձը, այդ ամէնքը մէկ քանի
օրուան խնդիր է:

Այսպէս խօսեցաւ մեր ընկեր Գիտ Մակար:

Միայն թէ կար մի կարեւոր հարց: Եթէ մեր արշա-

ւանքը կատարէինք Վարդանանց տօնի օրը, երբ շրջակայ ժողովուրդը լեցուած կ'ըլլար վանքի մէջ, մէր յարձակու մը կընար պատահիլ լուրջ ընդդիմութեան, եւ այն ատեն վերջինն չար քան զառաջինն կարող էր ըլլալ: Ուստի հարկ էր վանքի գրաւման ձեռնարկել՝ երբ տակաւին ժողովուրդը չէր եկած հոն:

— Բայց մենք պէտք է վանքին տիրենք յանուն ժողովրդին, գիտել տուաւ ընկեր Սարսափունի:

— Ի հարկէ այդպէս պէտք է անենք, ըստ Գիտ Սակար, մենք պիտի դործենք Վասպուրականի Հայութեան անունով:

— Ուրեմն ահա՛ թէ ի՞նչպէս պիտի ըլլայ իրողութիւնը, եղբակացուց ընկեր Սարսափունի: Գիտակից ժողովուրդը յուզուած՝ կղերա-րէաքցիական-չէրիաթճիական մութ ոյժերու սարքած Համիտաբարոյ հրաւէրէն, որոնք երեւան եկան Խթման գիշերը վանի եկեղեցիին մէջ, եւ ուզելով տիրանալ իր անքոնաբարելի իրաւունքին, կը գրաւէ Ս. Վարդանայ վանքը, դայն ազատելու համար հոն որջացած գիշատիչ Հայ կղերներու ձեռքէն, եւ իր յօժար կամքով զայն կը յանձնէ ժողովրդի զաւակներուն, ժողովրդի կօնտրօլին տակ, որպէս զի ժողովրդի շահերուն ծառայէ:

Այս Փօրմիւլը ընդունուեցաւ ամէնուս կողմէ եւ Սուրբ Վարդանայ վանքին գրաւումը վճռուեցաւ Ընկերային ժողովով:

Մանրամասնութիւնները կ'իմանաք յաջորդ նամակով: Մէր շարքերուն մէջ ողեւորութիւնը շատ մեծ է, թէեւ ամէն ինչ դադունի պահուած է:

ԺԲ

ՎԱՆ, 19 Փետր. 1911

Սիրելի ընկերներ,

Ս. Վարդանայ վանքին գրաւումը շատ աւելի հեշտ պայմաններու տակ կատարուեցաւ, քան ինչ որ մենք կ'ենթադրէինք: Պէտք է խոստովանիլ որ Գիտ Սակարի ուսպական տակտիկան այս մասին ունեցաւ որոշ ու վճռական դեր:

Երկուշաբթի, վետրուար 14, վաղ առաւօտուց մէր տղերքը Այգեստանէն մի քառորդ ժամու հեռաւորութեամբ պատրաստել էին ձիանքը: Ես, ընկեր Սարսափունի, Գիտ Սակար, Կայծակ խումբէն՝ ընկեր Շանթ, Փայլակ խումբէն՝ ընկեր Որոտունի, Պայլթուցիկ խումբը համարեա թէ ամբողջովին, վերջապէս 14 հեծեալ կտրիճ երիտասարդներ ընկանք ճանապարհ, հրացաններով, ըէ-վոլվէրներով ու դաշոյններով զինուած, դէպի Բճիճ դիւդը: Խումբը ունէր մարտական ահաբեկիչ երեւոյթ եւ ճանապարհին գեղացիները մեզ կը նայէին հետաքրքիր ու զարմացած աչքերով: Երբ հասանք ամայի դաշտերը,

տղերքը ոգեւորուած, սկսան հրացան պարպել օդին՝ լեզապատառ փախցնելով ձնձղուկները, մինչդեռ ընկեր Սարսափունի եւ Գիծ Մակար կ'երդէին մարտական երդեր իրենց թաւ ու ցնցող ձայնովը: Տեսարանը սրտապնդող եւ տպաւորիչ էր:

Կէսօրուայ մօտ հասանք Բճիճ դիւղը, ուրկէ կէս ժամ հեռու կը գտնուի Ս. Վարդանայ վանքը: Տղերքը սոված էին եւ ընկեր Սարսափունի յայտարարեց թէ «քաղցած փորով կարելի չէր լւա կոռւել»: Յետոյ, յարձակումը սկսելէ առաջ, հարկ էր իմանալ վանքի դրութիւնը. ուրիտաւորներ եկա՞ծ էին թէ ո՛չ, քանի՞ մարդ կար վանքին մէջ, զինուա՞ծ էին թէ ո՛չ, ի՞նչ էր վանահօր տրամադրութիւնները, ո՞ր կողմէն կարելի էր յարձակիլ աւելի յաջող պայմաններով, վերջապէս մի շարք կոխի տեխնիքական մասին պատկանող հարցեր, դորս հարկ էր լուսաբանել: Գիծ Մակար յանձն առաւ մի ընկերոջ հետ երթալ եւ պէտք եղած քննութիւնները կատարել: Մենք մնացինք Բճիճ գեղը, ուր մեղ հիւրընկալեցին գիւղացիք, անմիջապէս մի ոչխար խորովելով մեզի ի պատիւ: Մեր փոքրիկ բանակը տեղաւորուեցաւ բացօթեայ, թէեւ ցուրտը բաւական սաստիկ էր: Բայց մեր տղերքը, իբրեւ ճշմարիտ կոռուղներ, վարժուած էին պատերազմական դրութեան խստութիւններուն. յետոյ, միասին ունէինք առաւ գինի որ կը չէզոքացնէր ցուրտի ազդեցութիւնը: Գիւղացիք, մեր ցուրջը հաւաքուած, հետաքրքիր էին իմանալ մեր արշաւախմբի նպատակը, բայց մենք այդ մասին ո՛չ մի բան չէինք յայտներ:

— Յետոյ կ'իմանաք, կը պատասխանէր ընկեր Սարսափունի, երբ նոքա իրենց հարցումները կը կրկնէին: Ճաշը անցաւ շատ գուարթ. մեր ընկերները հիանալի

պաղարիւնութիւն ցոյց կուտային եւ ո՛չ մի յուզում չէր մատներ իրենց ներքին հոգեկան վիճակը: Տակաւին կերակուրի վրայ էինք, երբ երկու ժամէն վերադարձան Գիծ Մակար եւ ընկերը: Տեղեկութիւնները շատ նպաստաւոր էին: Վանքին մէջ, բայց վանահայրէն, կային միայն երկու ծեր վարդապետներ, որոնց մին արդէն հիւնդ՝ անկողինը պառկած էր. վարդապետներէն գատ, վանքը ունէր երկու մշակ, մի փոքր տղայ եւ մի պառաւ կին, որ կը ծառայէր վարդապետներուն: Իսկ զէնք՝ բացի մի հին անդործածելի հրացանէ, բան մը չկար:

Այս տեղեկութիւնները ա՛լ աւելի ոգեւորեցին ու սրտապնդեցին մեր տղերքը որոնք սկսան երգել ու խմել: Բացի ոչխարի խորովածէն՝ գեղացիները բերած էին պուլկուր փիլաւ, մածուն, պանիր, մեղր եւ չոր պառուղներ: Ճաշը շարունակուեցաւ դեռ երկար, տղերքը սկսան մի ինչ որ մարտական պար, իրենց մերկ գաշոյններն օդին մէջ ճօճելով: Մենք հրացաններու վրայ յենած կը դիտէինք ու ֆէյփ կ'անէինք: Յանկարծ վեր կանգնեցաւ ընկեր Սարսափունի:

— Բատուայի հեշտութիւնները չպէտք է որ Աննիքանը յետ կեցնեն իր պարտականութենէն, գոչեց, տղե՛րք, գնանք պատերազմի ասպարէղը:

Այդ մարտագոռ կոչը յառաջ բերաւ ցնցող տպաւորութիւն: Տղերքը վեր թռան, պատրաստեցին ձիանքը եւ արշաւախումբը ընկալ ճանապարհ:

Երբ հեռուէն երեւցան վանքի պատերը, ընկեր Սարսափունի հարցուց:

— Տղե՛րք, հրացանները լի՞քն են:

— Այո՛, ձայն բարձրացաւ կտրիմներու խումբէն: Յետոյ տիրեց մի խոր լուսութիւն. բոպէն վերին աս-

տիման տպաւորիչ էր : Գիտ Մակար եւ ընկեր Շանթ իրենց ձիերը քշեցին առաջ, հրացանները բարձրացուցին եւ դոչեցին .

— Ո՞վ որ Հայու արիւն կը կրէ թո՞ղ հետեւի մեղի :

— Կեցցէ՛ յեղափոխութիւն, պատասխանեցին տըղերը իրենց ձիերը մտրակելով :

Մի ըսուէ ետքը հասած էինք Ս. Վարդանայ վանքի դրան առջեւ, ուր կեցած էին մի ծերունի վարդապետ, պատաւ աղախինը եւ մի տասնամեայ մանուկ որ յետոյ իմացանք թէ պառաւի թոռն էր : Երկու մշակներն եւ վանահայրը չկային մէջտեղ . այդ բացակայութիւնը իսկոյն գրաւեց ընկեր Սարսափունիի ուշադրութիւնը, որ դոչեց .

— Տղե՛րք, գու՞յշ, չըլլայ որ մի թակարդ սարքած լինին մեր դէմ, այդ վատ կղերականները կարող են ոտքի տակ առնել պատերազմական ամէն պայման եւ դաւանել մարդերու իրաւունքի բնական օրէնքներու դէմ :

Բայց արդէն իսկ Գիտ Մակար, Շանթ, Որոտունի եւ մի քանի տղերք վար ցատկած էին իրենց ձիերէն եւ չղթայի տակ առած էին ծերունի վարդապետը, պառաւ աղախինը եւ մանուկը :

— Ո՞ւր է վանահայրը, հարց բարձրացուց ընկեր Սարսափունի, խօսքը ուղղելով վարդապետին որ սարսափած կը դիտէր իր շուրջ տեղի ունեցած անցքերը :

— Վերը, Կիրակոս հայր սուրբի քովն է :

Կիրակոս անդամալոյժ հիւանդ վարդապետն էր, որու մասին լուր բերած էր Գիտ Մակար :

— Իսկ մշակնե՞րը, ո՞ւր են . . .

— Ախոռին մէջ անասուններուն խոտ կուտան :

— Վանքին մէջ ուրիշ մարդ չի՞ գտնուիր :

— Ոչ ոք :

— Եթէ մեզ խաբես, գիտցած եղիր որ մեր ձեռքէն երբեք չես կարող պրծիւ :

— Աստուած վկայ է որ ճշմարիտ կը խօսիմ, պատասխանեց դողահար վարդապետը :

— Տղե՛րք, ներս արշաւեցէ՛ք, հրաման տուաւ ընկեր Սարսափունի :

Կէս ժամ ետքը ամբողջ վանքը ինկած էր մեր տիրապետութեան ներքեւ : Յաղթութիւնը կատարեալ էր եւ ողերքներու խանդավառութիւնը չափ չունէր :

Անմիջապէս հրատարակեցինք պատերազմական վիճակ եւ ամենախիստ հարցաքննութեան ենթարկեցինք գերիները, հասկնալու համար թէ ի՞նչ կը գտնուի վանքին մէջ, թէ ո՞ւր պահուած են թանկագին իրեղէնները, թէ վանքը քանի՞ արտ եւ անասուն ունի, թէ ո՞րքան պատրաստ դրամ կը գտնուի, եւն . . .

Դիշերը շուտով վրայ հասաւ եւ մենք ամէն դգութիւն ձեռք առնելէ ետքը զնացինք հանգչելու, մեք օրուայ տաֆանքէն յոզնած :

Հետեւեալ առոտու կանուխ ընկեր Սարսափունի հաւաքեց բոլոր տղերքը եւ սապէս խօսեցաւ անոնց :

— Գրաւելով, յանուն Վասպուրականի Հայ աշխատաւոր ժողովրդին, Բձիճի Ս. Վարդանայ վանքը, մենք կատարեցինք մի ակտ որը ունի երկու որոշ նշանակութիւն, նաև՝ թէ վանքերը պէտք է լինին ուղղակի ժողովրդի ստացուածք եւ ո՞չ թէ կղերի էֆսկուզիական սեփականութիւն եւ երկրորդ՝ թէ նոքա պէտք է մատակարարուին ուղղակի այդ ժողովրդի կօնտրօլի տակ : Արդ, մեր ակտը կը մնայ անպառուղ, եթէ մենք իսկոյն չեռ-

նարկենք վանքի ժողովրդապետական կազմակերպութեանը . ուստի , սիրելի ընկերներ , չպէտք է որ դուք դէնքեւը վար դնէք , մինչեւ որ այդ ամէնը ի գլուխ չելլէ մեր կուսակցութեան հակողութեան տակ :

Բուռն ծախահարութիւններ ընդունեցին այս կարճ յայտարարութիւնը :

Նոյն օրն իսկ վանքի վերակազմութեան կենսական գործը սկսուելունը :

Թէ ի՞նչ է այդ գործը եւ թէ ի՞նչ հրաշալի մէտամօրֆօս կրեց Ս. Վարդանայ վանքը մեր իշխանութեան տակ , ուս ձեզ կը բացատրէ իմ յաջորդ թղթակցութիւնը : Զեր նամակները ուղղեցէք իմ նոր հասցէին , որ է՝ «Վան նահանդի Բնիճ գիւղի Ս. Վարդան վանքի աշխարհական վանահայր ընկեր Բ. Փանջունի» :

Արշաւախումբի բարոյական ու Ֆիզիքական վիճակը հիանալի դրութեան մէջ է եւ այս դրաւումը մի փըրկար էֆէկտ առաջ բերաւ առ հասարակ բոլոր շարքերու վրայ :

ՃԳ.

ՎԱՆ , 26 Փետր . 1911

(Բնիճ գեղ՝ Քրավոտքինի վանք)

Սիրելի ընկերներ ,

Սրտապնդիչ լուրեր ունիմ աս անգամ ձեզ հաղորդելիք : Հազիւ մի չարաթ եղաւ որ Վասպուրականի Հայ ժողովրդի անունով գրաւեցինք Ս. Վարդանայ վանքը եւ արդէն իսկ կերպարանափոխութիւնը կատարեալ է : Համարեա՛ թէ ոչինչ չէ մնացած հին ապականուած դրութենէն : Նախ՝ իրեւ բարեկարգութեան մի էական պահանջք , ջնջեցի վանքին նախնական անիմաստ անունը՝ Սուրբ Վարդան՝ որ մեր ներկայ իրականութեան հետ ո՛չ մէկ կապ ունի , եւ անուանեցի զայն Քրավոտքինի վանք , իբր մի յարդանքի տուրք դէպի յեղափոխական գաղափարի մէծ ներկայացուցիչը : Յետոյ ձեռք զարկի տնտեսական մատակարարութեան հիմնական փոփոխութեան , հաստատելով ամենախիստ կօնտրօլ : Բայ նոր կանոնադրութեան՝ վանքը կ'ունենայ մի պատասխանատու ներ-

կայացուցիչ Վասպուրականի Հայ ժողովրդի կողմէ, յետոյ մի այլ ընդհանուր ներկայացուցիչ կուսակցութեանս կողմէ՝ որ կը կատարէ կօնտրոլի պաշտօն առաջնոր վըրայ, յետոյ կ'ունենայ մի պատասխանատու գանձապետ, մի համարակալ, մի գիւղատնտես եւ մի լիազօր քննիչ Վանայ մեր ենթակոմիտէի կողմէ։ Գանձապետի վրայ կօնտրոլ կը լինի ամէն շաբաթ, յետոյ ամէն ամէս համարակալը կը ներկայացնէ իր հաշիւները Վասպուրականի Հայ ժողովրդի պատասխանատու ներկայացուցչին, որ այդ հաշիւները կ'ենթարկէ կուսակցութեանս ներկայացուցչին՝ որ գիւղատնտեսի հետ կը կատարէ իսկսո կօնտրոլ եւ յետոյ կը հաղորդէ ենթակոմիտէի լիազօր քննիչին որ հաշիւներու ճշգութիւնը յարակից վաւերաթուլթերով ստուգելէ ետքը կը փաւերացնէ զանոնք։ Կը տեսնէք որ այս դրութեամբ եւ ո՛չ իսկ մի ճանձ կրնայ փախչիլ աչքէ։

Նոր կանոնագրութիւնը պատրաստելէ ետքը, մեր տղերքը հրաւիրեցինք Ընկերական ժողովի, որպէս զիքուէարկութեամբ կատարուի վերոյիշեալ պաշտօններու համար պատշաճ անձերու ընտրութիւնը։ Քուէարկութեան համար վճառեցաւ կատարեալ ազատութիւն, առանց ոեւէ ճնշումի։

Քուէարկութեան արդիւնքն դուրս եկաւ որ ինձ կը յանձնուէր Վասպուրականի Հայ ժողովրդի պատասխանատու ներկայացուցչի պաշտօնը, զիս ընտրեցին նաեւ գիւղատնտես եւ Վանայ մեր ենթակոմիտէի լիազօր քննիչ։ Իսկ կուսակցութեան ընդհանուր ներկայացուցչի, գանձամարետի եւ համարակալի պաշտօնները յանձնուեցան ընկեր Սարսափունիի։ Բայց որովհետեւ նա երկու օր առաջ

մեկնեցաւ դէպի Պարսկաստան, ինչպէս որոշուած էր, այդ պաշտօններն ալ ես կը կատարեմ։

Պաշտօնաբաշխութենէ ետքը՝ առաջին հարցը որ ստիպողական լուծում կը պահանջէր, ընկեր Սարսափունիի ճանապարհածախսի խնդիրն էր։ Պէտք էր դրամը հայթայթել վանքի զանձարանէն, քանի որ ուրիշ միջոց չկար։ Բայց մենք, ըստ նոր կօնտրօլային կանոնագրութեան չէինք կարող բացառիկ եւ չնախատեսուած ծախքեր ընել, առանց Ընկերական ժողովի որոշման դա կը լինէր դատապարտելի անտակտ գործ։ Ուստի հրաւիրուեցաւ Ընկերական ժողով, հարցը դրուեցաւ սեղանի վրայ, եւ միաձայնութեամբ վճռուեցաւ ճանապարհածախսի դըրամը վեր առնել վանքի կասային։

Բայց ահա՛ մի նոր դժուարութիւն երեւան ելաւ։ Գանձապետը յայտարարեց որ Վանքի կասային մէջ փող չկար։

Մի կարճ վիճաբանութենէ ետքը, ժողովը միաձայնութեամբ որոշեց լիազօր իշխանութիւն տալ վանքի մատակարարութեան՝ որպէս զի իր տրամադրութեան տակ եղած ոեւէ միջոցներով ճարէ ճանապարհածախսի համար անհրաժեշտ եղող գումարը։

Ժողովին յետոյ ես եւ ընկեր Սարսափունի ունեցանք առանձին խորհրդակցութիւն այդ մասին։ Վանքն ունէր երկու գոմէշ, երկու կով, մէկ ձի, մէկ աւանակ եւ քսան ոչխար։ Համաձայնուեցանք վաճառելու այդ անսառնները եւ գոյացած գումարով բաւարարութիւն տալու Ընկերական ժողովի որոշումին։

Ընկեր Շանթ, Գիւժ Մակար եւ երկու տղերք յանձն առին անսառնները փոխադրել Վան, եւ փոխադրձ կօնտրօլի եւ հսկողութեան տակ վաճառել զանոնք։

Վանահայրը, որ թէեւ պաշտօնէ հրաժարեցուցուած եւ մեկուսացուած է, եւ տակաւին վանքը կը դտնուի, ուզեց ընդդիմանալ այս վաճառումին, բայց մենք ցոյց տուինք իրեն ժողովի օրինաւոր որոշումը եւ արձանադրութիւնը:

Մեր տղերքը մեկնեցան անասուններով միասին եւ երկու օր ետքը վերադարձան՝ բերելով ընկեր Սարսափունիի համար պէտք եղած ճանապարհախսի դրամը: Նոքա վաճառումը կատարած էին շատ նպաստաւոր պայմաններով:

Բայց ահա! այդ գործողութիւնը մի վլլոց յառաջ բերաւ Վանի յետադիմական շարքերու մէջ: Երեւի մեր բարեպտուղ նախկին վանահայրն ալ՝ յարդի տակէ՝ նըպաստած է այդ վլլոցի տարածման: Այդ չէրիաթճիական հոսանքներու պարագլուխները կը դիմեն առաջնորդին եւ մի շարք ստոր ամբաստանութիւններ կ'ընեն մեր մասին, ըսելով թէ մենք կամայական եւ ապօքէն կերպով կը վաճառենք վանքի ինչքերը, թէ մենք վանքը դրաւած ենք մեր շահուն համար, թէ ժողովուրդը հակառակ է այդ գրաւման, թէ մենք իրաւունք չունինք վանքի անունը փոփոխելու, եւն., եւն.: Երբ այդ չնկոցներու լուրն հասաւ մեր ականջին, բարեբախտաբար ընկեր Սարսափունի ընկած էր ճանապարհ, եթէ ոչ՝ կարող էր նադառնալ վան եւ տեղն ի տեղը մի լաւ դաս տալ այդ ստոր արարածներուն:

Բայց եթէ նա մեկնած էր, ես կը մնայի հոն եւ չէի կրնար անտարբեր եւ լուռ մնալ այդ յետին մտքերով եղած զրպարտութիւններուն հանդէս:

Անմիջապէս մի ընդարձակ ոլաշտօնական գրութիւն ուղեցի Առաջնորդին, որու մէջ փաստացի կերպով ցոյց

տուի թէ անասուններու վաճառումի հարցը ուղղակի հետեւանքն էր Ընկերական ժողովի տուած օրինաւոր որոշման որ արձանագրուած է ատենագրութեան մէջ եւ վաւերացուած Ատենապետի եւ Ատենադպրի ստորագրութիւններով, թէ վանքային մատակարարութիւնը չէր կը նար չյարգել ժողովի տուած որոշումը, թէ անասուններու վաճառումը կատարուած էր կօնտրօլի դրութեամբ եւ արդիւնքը մանրամասն արձանագրուած մեր արխիվներու մէջ, ենթարկուած կօնտրօլի եւ վաւերացուած, թէ այդ վաճառման գործողութեան ամբողջ մանրամասնութիւններն եւ հաշիւները, կօնտրօլային խիստ քննութիւններէ անցնելէ եւ վասպուրականի հայ ժողովրդի ներկայացուցչին, Կուսակցութեան ընդհանուր ներկայացուցչին, պատասխանատու Գանձապետին, Համարակալին, Գիւղատնտեսին եւ Վանայ Ենթակոմիտէի լիազօր Քննիչին կողմէ վաւերացուելէ եւ ստորագրուելէ ետքը՝ զրկուած է Հարաւային Բիւրոյին, որպէս զի պահուի այդ տեղի արխիվներուն մէջ: Հետեւաբար, Առաջնորդը եթէ կը կամենայ ճշմարտութիւնը իմանալ, փոխանակ ստոր զըրպարտութիւններու կարեւորութիւն տալու, կարող է ուղղակի դիմել Հարաւային Բիւրոյին եւ խնդրել պէտք եղած բացատրութիւնները:

Իմ այս փաստացի գրութիւնը յառաջ բերաւ ապահովիչ տպաւորութիւն մեր ընկերներու մէջ:

Այժմ ձեռք առինք Վանքի իրեղէններու հարցը: Սկզբունքով մենք արդէն որոշեր ենք թանկագին առարկաները, հին գրչագիր ազօթամատեանները, արծաթեզէն անօթ, սկիհ, խաչ, աշտանակ, կանթեղ, եւն., ինչպէս նաեւ չուրջառ, եմիփորոն, խոյր, վարագոյր, գորդ եւն. որոնք մի ինչ որ նիւթական արժէք կը ներկայա-

ցնեն, փոխադրել մի ապահով տեղ, օրինակ մեր Վանայ
կեդրոնատեղին եւ զանոնք դնել ուղղակի մեր կօնտրօլի
տակ:

Կօնտրօլի դրութիւնը ապահով եմ որ կը տայ հրա-
շալի արդիւնք կարձ ժամանակի մէջ: Արդէն սկսած ենք
քաղել անոր պտուղները:

ԺԴ.

ՎԱՆ, 3 Մարտ 1911

(Բնին գեղ՝ Քրափոտֆինի վանի)

Սիրելի ընկերնե՛ր,

Եւ եթէ տակաւին կամաւոր կոյրեր, անդիջող թե-
րահաւատներ կան, թո՞ղ գան տեսնեն, տոքիւմներու
փաստացի ապացոյցներով, թէ ի՞նչ կարող է անել մի
կազմակերպութիւն, եթէ ձեռք զարնէ Վանքերու բարե-
կարգութեան՝ փոխադարձ կօնտրօլի խիստ հիմունքի
դրութեամբ:

Հազիւ մի ամիս է որ տիրել ենք Վանայ Քրափոտ-
քինի Վանքին, եւ արդէն նա կերպարանափոխ եղեր է:

Ի հարկէ այդ ամէնը առանց դժուարութեան չեղաւ
ու մենք ստիպուեցանք կատաղի պայքար մղել անընդհատ
մութ ուժերու զրպարտութիւններուն դէմ, բայց, ի վեր-
ջոյ, ճշմարտութիւնը երեւցաւ եւ մէնք տարինք յաղ-
թանակը:

Բայց, մեր սկզբունքին համեմատ, խօսինք չօշագիւ-

լի իրողութիւններու վրայ եւ ո'չ թէ երեւակայական պոռոստաբանութիւններ ընենք:

Վանքի գուարներուն վաճառումէն ետքը, որու մասին արդէն մանրամասն դրեցի, հարկ եղաւ Վանքը մաքրագործել հոն որջացած ցեցերէն: Դա հեշտ գործ չէր, բայց մեր տղերքը յաջողեցան:

Վանքի Օրէնսդիր ժողովը, որուն Նախադահ-Առենապետ-Քարտուղար-Անդամն եմ ես, մի կարճ խորհրդակցութենէ վերջ, վճռեց զուրս արտաքսել երեք վարդապետները, երկու մշակները, պատաւ կինը եւ իր թոռուը, որք երկար տարիներէ ի վեր հոն հաստատուած, անհաջու ու անկօնտրոլ, Վանքը կը շահագործէին: Վճիռը, ըստ Ներքին Կանոնագրի, հաղորդուեցաւ Գործադիր Մարմինին, որուն պետն է Գիտ Մակար, որ իսկոյն տղերքը գլուխը հաւաքած գործադրեց Օրէնսդիր ժողովի որոշումը, եւ այդ պորտաբոյծ անձերը տարաւ վեց ժամ հեռու գտնուող Փոքրին գիւղի Ս. Սահակ Վանքը, եւ ընդունել տուաւ զանոնք տեղոյն Վանահօրը:

Այժմ այդ կեղտոտ արարածները Վանայ Առաջնորդին եւ Պոլսոյ թերթերուն դրեր են որ իրը թէ մենք զիւրենք բոնի եւ ապօրէն կերպով զուրս հաներ ենք Վանքէն, ինչ որ մի ստոր զբարառութիւն է եւ պէտք է ձեր կողմէն բացարձակ կերպով հերքուի: Արտաքսումի որոշումը կայացաւ օրինաւոր ժողովի վճռով եւ դործադրուեցաւ օրինաւոր պայմաններու տակ: Ժողովի ատենագրութիւնն եւ վճիռը արձանագրուած են տոմարներու մէջ եւ վաւերացուած Նախագահի, Առենապետի եւ Քարտուղարի կողմէ: նոյն իսկ պատճէնը հաղորդած ենք Հիւսիս-Արևմտեան Բիւրոյին, որպէս զի խնամով պահուի արիւմներուն մէջ: Ինչպէս կը տեսնէք, ո'չ մի կամայա-

կան արարք, ո'չ մի կօնտրօլային թերութիւն կայ կատարուած գործողութեան մէջ: Նոքա որ բոնի ուժի եւ ապօրէնութեան խօսք կ'ընեն, թո'ղ փաստացի ապացոյց մէջտեղ բերեն: Մենք պատրաստ ենք տրամադրելու մեր արձանագրութիւնները:

Մաքրագործումի այդ առաջին քայլէն ետքը, սկսանք լուրջ գործունէութեան:

Վանքի մէջ կայացաւ ընդհանուր ժողով եւ սա երկու հարցերը գրինք սեղանի վրայ:

Ա. Ի՞նչ պէտք էր անել վանքի մէջ գտնուած արժէքաւոր նիւթեղէնները, զանոնք լաւագոյն կերպով պահպանելու կամ գործածելու համար:

Բ. Ի՞նչ պէտք էր անել մշակական գործիքները, խոփի, արօր, մանդաղ, բահ, բրիչ, եւն. որոնք մշակներու արտաքսումովը կը դառնային անպէտքացած առարկաներ:

Առաջին հարցի մասին ժողովը վճռեց վաճառել բոլոր աղօթամատեանները, եկեղեցական անօթները, վարդապետական զգեստները, խաչ, գաւաղան, սկիհ, եւն., եւ զոյացած զումարը յատկացնել Վասպուրականի կուլտուրական գործին, Փօնտ կարօտ ընկերներու համար, Փօնտ փրօփականտի համար, Փօնտ աժանագին տետրակներու հրատարակման համար, Փօնտ ընթերցարան-թէցարաններու հիմնարկութեան համար, Փօնտ հրատարակախօսական ակումբներու հաստատութեան համար, եւն. եւն.:

Երկրորդ հարցի մասին՝ երկար վիճաբանութիւններէ ետքը՝ ժողովը հասաւ նոյն եղբակացութեան, այսինքն թէ մշակական գործիքները հարկ էր վաճառել, քանի որ նոքա ո'չ մի օդտակարութիւն ունէին այլեւս:

Ես առաջարկեցի որ այդ վաճառումները կատար-
էին կօնտրօլային խիստ հսկողութեան տակ եւ մեր ըն-
կերները միաձայն հաւանութիւն տուին :

Անմիջապէս ձեռնարկեցինք գործի : Պատրաստեցինք
մանրամասն ցուցակ բոլոր Վանքի իրեղններուն, մի առ
մի նշանակելով առարկաներու տեսակը, լայնութիւնն ու
երկայնութիւնը, իր արդի վիճակը, քանակութիւնը,
կշիռը, եւն .: Ցուցակը ենթարկուեցաւ խիստ կօնտրօլի
եւ վաւերացուեցաւ ժողովի կողմէ, եւ մի մի օրինակ
դրկուեցաւ Հարաւային եւ Հիւսիսային Բիւրօններուն, իսկ
նիւթեղնները զրկուեցան Կարին, մեր հսկողութեան եւ
կօնտրօլի տակ վաճառուելու համար : Ցուցակի օրինակը,
եթէ հարկ ըլլայ, կը զրկուի նաեւ ձեզ : Կարելի է ասել՝
վանքապատկան իրեղններու մասին՝ երբեք այսպիսի
կօնտրօլային խիստ դրութեամբ վաճառում չէր կատար-
ւած : Դա մեր ներմուծած սիսթեմն է, որ արդէն աչքի
փուշ եղած է միւս վանքերու անկօնտրօլ վանահայրե-
րուն :

Այսպէս ուրեմն, ներկայիս մէջ, Վանայ Քրափոտ-
քինի Վանքը, բոլոր թրքահայ վանքերուն մէջ, կը ներ-
կայացնէ մի եղական տիպար երեւոյթ : Նա չունի այլեւու
հնադարեան վանքերու փառած ապականութիւնը, հոն գո-
յութիւն չունին պորտարոյծ, ծոյլ վանականներ եւ մը-
շակներ, ժողովրդի ու գիւղացու կռնակէն կշտացող ան-
օդուտ բերաններ : Զկան եւ եկեղեցական գարդարուն
դգեստներ, ազօթամատեան, ջահ ու կանթեղ, քչոց ու
վարագոյր, դուռար ու զբաստ, խոփ եւ արօր, բայց ի փո-
խարէն կան՝ զինուորական կարգապահութիւն ամենա-
խիստ կօնտրօլ, վարչական, մատակարարական գործա-

դիր մարմիններ, իշխանութեան եւ աշխատութեան բա-
ժանում ու անպայման հսկողութիւն :

Չմոռնամ ասելու որ այդ վաճառումներէն մէնք օդ-
տուեցանք միմիայն օրինաւորութեան սահմանի մէջ, վեր
առնելով գոյացած դումարէն՝ ինչ որ անհրաժեշտ հար-
կաւոր էր իմ եւ ընկերներուս օրըստորէական պէտքերուն
եւ մի պահեստի Փօնտ, անակնկալ պատահմունքներու
համար . մնացած դումարը կը գործածուի իր նպատակին :

Առաջ տանելով վանքի բարեկարգութեան գործը,
հարց բարձրացաւ մեր ընկերներու մէջ թէ ի՞նչ պէտք էր
անել վանքի կից պարտէզին մէջ գանուած մի հարիւրի
չափ ծառերը, անպառը եւ պաղատու, կաղնի, տօսախ,
կաղամախ, ընկուգենի, թթենի, ինձորենի, սալորենի մն .

Մեր ընկերներէն մի մասը կ'առաջարկէր այդ ծա-
ռերը պահել ինչպէս որ են, իսկ մեծամասնութիւնը կ'ու-
ղէր զանոնք կարել ու փայտը վաճառել եւ պարտէզը վե-
րածել մի մարզարանի ուր տղերքը կարենային մարմնա-
մարզական վարժութիւններ ընել :

Հարցը բաւական կարեւոր ու միանգամայն կնճոռո-
էր եւ կարելի չէր թեթեւորէն որոշում տալ, մանաւանդ
դա կը լինէր կամայական մի բան եւ բոլորովին հակա-
ռակ մեր նոր հաստատած կանոններուն եւ կարգապահու-
թեան . ուստի որոշեցի հրաւիրել ընդհ . ժողով, ինդիբը
ենթարկել լուրջ վիճաբանութեան եւ հասուն խորհրդակ-
ցութենէ ետքը զիմել ձայներու մեծամասնութեան :

Մինչեւ որ այդ առկախ հարցերը վերջնական կեր-
պով չկարգադրուին, կարելի չէ հիմնական գործերու
ձեռնարկել, եւ ես պէտք է աճապարեմ, քանի որ Ապրիլի
վերջերը կուգամ Պոլիս՝ ձեր հրահանգներուն համեմատ :

Առ այժմ ցը :

ԻՄ ԱՇԽԱՐՀԱՀԱՅԵԱՅՔՆԵՐԸ

ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆՆԵՐ ՕՐՈՒԱՅ ՀԱՐՑԵՐՈՒ ՇՈՒՐՋ

Ա.

ՊԱՐՈՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԸՆԹԱՑՔԸ

Թէեւ ձեր թերթի խոտոր ուղղութիւնը բոլորովին հակառակ է մեր տեսութիւններուն, մտածողութեան, մերձաւոր եւ հեռաւոր նպատակներուն, ձգտումներուն, պահանջներուն, իտէալական ճանապարհին, ի մի բան մեր պլատֆորմային, բայց, յամենայն դէպս, ես կը փափաքիմ Բիւզանդիոնի էջերուն մէջ պարզել իմ աշխարհայեացքը օրւայ խնդիրներու մասին, բուրժուազիական միտքը բերելու համար, եթէ հնար է, ուղղամտութեան եւ սկզբունքային ու գաղափարական որոշ ճամբու մէջ: Ես վստահ եմ որ իս այս դասախոսութիւններէս հաւասարապէս կ'օդտուին ե՛ւ ամիրայական մենծ էֆէնտիութիւնը, ե՛ւ բուրժուազիական ապականած դասակարգը,

ե՛ւ յետաղիմական կղերականութիւնը, ե՛ւ ժողովրդի ագէտ մասսանները:

Ընտրելով Բիւզանդիոնը իբրեւ իմ դասախոսութիւններու ամբիոն, իմ նպատակն է թշնամիին հետ ճակատիլ, բո՛ւն իսկ, այսպէս ասած, իր միջնաբերդի մէջ:

Ի հարկէ ես լինելու եմ քաղաքավարի, իմ դասախոսութիւնները պահելով միշտ գաղափարային մաքուր հողի բարձրութեան վրայ: Ես երբեք չեմ հետաքրքրուիր անձերով: ինձ համար գոյութիւն ունի սկզբունքը, իսկ անձը ո՛չ:

Կրնայ սղատահիլ որ դասախոսութեանս ընթացքին՝ ես պարտաւոր ըլլամ անուաննելու մի մարդ՝ դաւաճան, մի ուրիշը կափիէ, մի երրորդը մատնիչ, մի չորրորդը կեղտու արարած կամ աւազակ. այդ սղարագային այս խօսքերը կ'ուղղուին ո՛չ թէ ակնարկուած անձին, որուն հետ երբեք գործ չունիմ, այյ անոռ սկզբունքային հանդամանքներուն, եթէ ունի:

Բիւզանդիոնի ընթերցողները արդէն կը ճանչան զիս, կարգացած ըլլալով իմ ընկերական ու անձնական նամակները, որոնք յայտնի դաւաճան Պ. Երօտ ձեռք անցընելով հրատարակեց, առանց իմ գիտակցութեան եւ հրամանին: Նոքա դիտեն թէ ընկեր Փանջունի չողոքորթել չգիտեր, կեղծէլ չգիտեր, ստել չգիտեր: Նա սկզբանքային մաքուր յեղափոխական է, որոշ աշխարհահայեացքով: Այդ բաւական է որպէս զի ներկայ դասախոսութիւնները տան բաւարար արդիւնք:

Ընդունելով այս մի քանի խօսքերը իբրեւ յառաջաբան, այժմ կը խնդրեմ որ լուրջ վերաբերումով հետեւիք իմ դասերուն:

Եթէ իմ դասախոսութիւններու ընթացքին գիտողու-

թիւններ ներկայանան ձեր մտքին՝ կարող էք յայտնել հրապարակով եւ ես պատրաստ եմ ոլատասխանելու անոնց։ Ես կուի, պայքարի մարդ եմ, վիճաբանութենէ չեմ վախնար, ի հարկին կը ստեղծեմ դայն։ Դա իմ խական կոչումն է։

Այժմէական օրսայ հարցը, ինչպէս յայտնի է, պարոն Արշարունի Պատրիարքի դիմումն է իթթիհատի կուսակցութեան մօտ Օսմ. Խորհրդարանական ընտրութիւններու մասին։

Յետադէմ մամուլը կը կարծէ հակասութիւն տեսնել նախ պարոն պատրիարքի վրայ որ Ազգային ժողովի մէջ, ընտրութեան մասին բոլորովին չէզոք մնալու որոշումը յայտարարելէ ետքը, այժմ ազդու միջամտութիւն ի դործ կը դնէ եւ յետոյ Դաշնակցութեան վրայ՝ որ Ազգային ժողովի մէջ պարոն Պատրիարքը բացարձակ չէզոքութեան հրաւիրած ետքը, հիմա դայն միջամտութեան հրաւիրած է։

Բոլոր այդ քննադատութիւնները գիտական հիմ չունին։

Թողնենք անձերը մէկ կողմ, դնենք հարցը սկզբունքային գետնի վրայ ու այնպէս քննենք։

Ի՞նչ կ'ըսէր Դաշնակցութիւնը Ազգային ժողովի մէջ. թէ Վարչութիւն եւ Պատրիարք երբեք չպէտք է միջամտեն Օսմ. Պարլամէնտի ընտրութեան։ Իսկ Պարոն Պատրիարքն ի՞նչ ըստու. թէ ինք երբեք չի կրնար միջամտել Օսմանեան Պարլամէնտի ընտրութեան։ Այսպէս ուրեմն Դաշնակցութեան եւ Պատրիարքի հայեցակէտները նոյնացան միացան, իրարու մէջ ձուլուեցան եւ եղան լոկ մի հայեցակէտ։ Այդ հայեցակէտի ուժով Դաշնակցութիւնը հարկ տեսաւ որ Պարոն Պարիարշ ու միջամտէ

ընտրութեան եւ դիմում ընէ իթթիհատին։ Վերցնենք Պատրիարքին անձը որ մեզի համար կարեւորութիւն չունի, որովհետեւ մենք անձերով չենք զբաղիր, ի՞նչ կը մնայ անդին. — Պատրիարքի հայեցակէտը։ Բայց արդէն տեսանք որ այդ հայեցակէտը ձուլուած էր Դաշնակցութեան հայեցակէտի մէջ։ Որովհեր Դաշնակցութեան հայեցակէտը նոր դիմումի մը պէտք տեսաւ, արդէն իր մէջ ունէր Պատրիարքի հայեցակէտը, կամ ուրիշ բառով, Դաշնակցութեան հայեցակէտն էր որ պէտք կը զգար Ահմէտ Նէսիմի բէկի հետ բանակցելու։

Ուրեմն Դաշնակցութիւնը հակասութեան մէջ չէ այս բանակցութիւնը ընելուն համար, քանի որ իր հայեցակէտը այն էր արդէն որ Ազգն ու Վարչութիւն պէտք է հեռու մնան ընտրական պայքարէն, ինք կատարէ ամէն բան։

Պատրիարքի անձը դուրս է այս խնդրէն, ինչպէս դուրս են նաեւ Դաշնակցականներու անձերը։ Ակզբունքներն են միայն որ կը գործեն։

Զեմ գիտեր թէ Բիւզանդիյնի ընթերցողներուն մատչելի պիտի ըլլա՞յ այս դասախոսութիւնը եւ պիտի կըբնա՞ն աննախապաշար մտքով խոնարհիլ այս փաստերուն առջեւ։

Ինչ որ ես ասացի ունի գիտական հիմ եւ հարկ է զայն ընդունիլ անտրտունջ։

Ահա՛ ճշմարտութիւնը։

Բ.

ՍՏՈՐ ԻՆՍԻՆԻԱՅԻԱՆԵՐ

— Կուսակցականները շահամոլ եւ, նոքա կ'ուզեն ձեռք անցնել ազգային իշխանութիւնը, տիրանալու համար՝ անոր եկամուտներուն, նոքա խորհրդաբանական աթոռներու հետամուտ են դիրք չինելու, դրամ շահելու համար, նոքա Ազգին շահը չեն խորհրդ, այլ իրենց անձնականը եւ իրենց կուսակցութեան շահը:

Ահա! այն կեղսոտ ինսինիւացիանները որոնք կ'երեւան, համարեա! ամէն օր, չերիաթմիայետադիմակերամենծքիական մամուլի մէջ:

Որքան ամբաստանութիւն՝ այնքան ստութիւն:

Փաստերով իսուինք, ինչպէս միշտ:

Վեր առնենք, օրինակի համար, վերջին Օսմանեան Պարլամէնտի ընտրութեան շրջանին մեր գործունէութիւնը եւ տեսնենք թէ ի՞նչ չափով շահամոլութիւն կայ այդ գործունէութեան մէջ:

Ամբողջ ամիսներ մեր կուսակցութիւնը ընտրական պայքար մղեց, իթթիհատի կողքին, եւ մայրաքաղաքի բաւառներու մէջ: Մեր տղերքը, իրենց հանդիսար

թողլով, գիշեր ցերեկ աշխատեցան, ընտրողներ փնտուեցին, գտան եւ ի հարկին ստեղծեցին: Բոլոր մեր կազմակերպական ուժերը, բոլոր մեր գործօն շարքերը, բոլոր մեր ակումբները, բոլոր մեր լսարանական Միութիւնները, բոլոր մեր լեզուներն ու կոկորդները, իրենց օժանդակ ճիւղերով գործեցին: Մօտաւորապէս կարելի է ասել թէ՝ 2,000 ընկերներ մասնակցեցան պայքարին, յաջողցնելու համար մեր քանտիտադներու ընտրութիւնը: Միթէ նոքա փո՞ղ ստացան, կամ մի սեւէ շա՞հ կ'ակնկալէին այդ ընտրութիւններէն. նոցա շատերը ո՛չ առաջին կարգի, ո՛չ երկրորդ կարգի ընտրողներ էին եւ ո՛չ ալ պարլամէնտի քանտիտադ, նոքա կ'աշխատէին անձնութիւնաբար, սկզբունքի անունով, կուսակցական դիսիպլինայով, որպէս հլու, առանց կամքի մեքենաներ՝ լարուած վարիչ մարմնի կողմէ: Ահա! թէ ի՞նչ հրացներ կը գործէ ինքնազդիտակից ու անկախ նկարագիրը:

Եւ արդիւնքն այն եղաւ որ ընտրուած ութը Հայ մէպուսներուն հինգը զուտ կուսակցականներ եղան ու երկուքը պլաթֆորման ընդունողներ: Ի հարկէ, այդ հինգը նիւթապէս պիտի օգտուին, բայց միւս երկու հազարը՝ ոչինչ:

— Ուրեմն չէֆերու յաջողութեան համար տղերքը կ'աշխատցնէք... պիտի առարկեն այժմ մեր չէրիաթմի Պարոնները:

Ի՞նչ կեղսոտ մտածում: Միթէ մեր մէջ չէֆ կա՞յ, միթէ ամէնքն ալ ընկերներ չէ՞ն, միթէ առիթը ներկայացած ատեն վաստացի կերպով չէ՞նք հաստատեր այդ հշմարտութիւնը, ընկեր Վոամեան, ընկեր Փաստրմածեան, ընկեր Վարդգէս կոչելով հաւասարապէս ամէնքին:

Այսպէս ուրեմն երկու հազար հոգի աշխատեցան եւ

հինգ միայն շահեցան։ Վերածնք հարցը մի թուա-
բանական պրոբլէմայի եւ կը տեսնենք թէ 400էն մէկն է
միայն որ օգտուած է այդ պայքարէն, կամ այլ առած,
շահողը կը վերածուի մէկ առ 400ի ամենամինիմ համե-
մատութեան։ Միթէ մի կուսակցութիւն որ իր մէջ
ունի 400 անձնուէր գործիչի դէմ մի շահամոլ կամ փա-
ռասէր դործիչ, կարելի՞ է ամբաստանել իբրեւ շահամո-
լական կամ յետին միտքեր սնուցանող կուսակցութիւն։

Բուրժուազիական մամուլը գուցէ պիտի առարկէ
թէ՝ քանի որ կուսակցութիւնը իր պլաթֆորման ընդու-
նող քանտիտադներէն, ընտրութեան յաջողման դէպում,
մի տուրք կը հաւաքէ, առա եւ շահու համար կ'աշխատի
անոնց ընտրութեան։

Դա եւս մի ստոր ինսինիւացիա է որ չի կրնար կան-
գուն մնալ առողջ տրամաբանութեան հանդէպ։

Կրկին թո՛ղ խօսին փաստերն ու թուանշանները եւ
դուք երկիրածութեամբ մտիկ ըրէ՞ք։

Ըստ մեր պլաթֆորմայի սկզբունքային էական
պայմանին՝ նոքա որ մեր հովանաւորութեամբ պարլա-
մէնտ կը մտնեն՝ պէտք է վճարեն միանուագ 50 սոկի եւ
ապա ամսական 5 սոկի։ Արդ պլաթֆորման ընդունող եւ
ընտրուած երեսփոխաններու թիւն է 7. որով կուսակ-
ցութեան դանձարանը կը մտնէ՝ ամբողջ նստաշրջանի
անողութեան՝ մօտաւորապէս 2,030 սոկի, միայն եւ
միայն։

Արժէ՞ միթէ որ մի հզօր կուսակցութիւն, որպիսին
է մերը, իր բոլոր բանակը շարժման մէջ զնէ ամբողջ ե-
րեք ամիս, մի այդպիսի չնչին գումարի համար, երբ
ունէ ժամհարեանցի կամ Պալեօգեանի վրայ կատարուած
մի տէրօրական գործողութիւն՝ մի քանի անձնուէրներու

հերոսութեամբ, այդ գումարէն շատ աւելին կարող էր
բերել կուսակցութեան գանձարանը։

Պէտք է որ մարդ յիմար՝ եւ բոլորովին անծանօթ
ըլլայ մեր յեղափոխական անցեալին, մեր տակտիքային,
մեր բիւղջէրի հաւասարակշուութեան պայմաններուն, որ-
պէս զի այդպիսի անձունի հայեացքներ պարզէ։

Մի նախատինք է ենթաղրել թէ մենք պէտք ունինք
Օսմանեան Պարլամէնտի հայ անդամներու ամսականի
մէկ հինգերորդին, Հայ աղդի ճակատագիրը վարելու հա-
մար։

Մեր մօտաւոր անցեալը պայծառ ու անհերքելի
փաստ է թէ՝ երբ խնդիրը հասոյթի աղբերներ ստեղծե-
լու վրայ է, կուսակցութիւնն ունի իր որոշ սկզբունքա-
յին միջոցները քիւփ կապած ոսկիները շրջաբերութեան
հանելու համար։

Երբ փաստացի իրողութիւնները կը խօսին, ստոր
ինսինիւացիանները պէտք է լուն եւ անարգութեան սիւ-
նին դամուին ինքնարերաբար։

Գալով աղդային իշխանութիւնը մեր ձեռքը անցնե-
լու մասին մեզի վերագրուած մտալբութեան՝ դա մի
ամենազդուելի ու անպատկառ ստութիւն է։

Մենք աչք չունինք ատոր։ Թո՛ղ ձեր գլուխը փա-
րատի Պատրիարքարանը, Աղդային Հիւանդանոցը, Գալ-
ֆայէան որբանոցը, Աղքատախնամները, եւն., եւն.։
Մենք միայն կ'ուզենք ու կ'աշխատինք մեր անմիջական
կօնտրօլի տակ առնել Սանասարեան կտակը, Եօանէսքուի
կտակը, Բերայի կալուածոյ հոգաբարձութիւնը, Գարա-
կէօպէն կտակը, եւն. վերջապէս բոլոր այն հաստատու-
թիւնները որոնք ուղղակի կազ ունին կուլտուրական
հարցի հետ, կը հասկնա՞ք, չէրիաթճի Պարոններ, կուլ-

առուրսական հարցի հետ։ Եւ այդ մեր անրոնաբարելի
իրաւունքն է քանի որ մեր ծրագրի մէջ կայ աշխատիւ
Հայ ժողովրդի կուլտուրական գարդացման։

Այս սկզբունքային ճշմարտութիւնները ե՞րբ պիտի
կընանք տեղաւորել ձեր դօսացած գանկերուն մէջ……

Հիմա որ արտայայտուած ստոր ինսինիւացիանները
ջրեցինք փաստացի ապացոյցներով՝ մեր դասախոսու-
թեան առարկայ դարձնենք մի այլ կարեւոր հարց։

Պ.

ՍԱՆԱՍԱՐԵԱՆ ԱՆՕՄԱԼԻԱՆ

Այսօրերս Ռէաքցիական մամուլը կրկին աղմուկ կը¹
բարձրացնէ, Սանասարեան վարժարանի առիթով, մեր
կուսակցութեան դէմ։ Կրկին կը լսուին պառաւի յաւի-
տենական տրտունջները, կրկին երեւան կը դան ժանդո-
տած գէնքեր, փուած ամբաստանութիւններ, մգլուած
ցուցմունքներ, որոնցմով կ'ուզուի ապացուցանել թէ
Սանասարեան վարժարանի անկարգութիւնները արդիւնք
են կուսակցականներու միջամտուեան եւ թէ նոքա կը
դրգուեն ուսանողութիւնն ու ուսուցչութիւնը, որպէս զի
տիրանան վարժարանին։

Ես չեմ ուզեր հարեւանցի հերքումներով ջրել այդ
ստոր զրպարտութիւնները, այլ փաստեր եւ իրողութիւն-
ներ կը դնեմ ընթերցողի առաջ։

Հարցը զուտ սկզբունքային է։ Մեզ համար գոյու-
թիւն չունին ո'չ Սանասարեան վարժարան, ո'չ Խաչա-
տուրեան, ո'չ Աբուլեան, ո'չ Կարին, ո'չ Պոլիս, ո'չ Խը-
նամակալութիւն, ո'չ ուսանող, ո'չ ազգային վարչու-
թիւն։ մեզ համար կայ միայն մի աչքի ընկող անօմալիա։

Եթէ Պարոն Նորատունկեան եւ իր մենծ էֆէնդիական քլիքը մինչեւ հիմա փճացուցած լինէին Սանասարեան կտակը, եթէ վարժարանը վաղուց փակած ու չէնքնալ քարուքանդ ըրած լինէին, եթէ դրամական զեղծումներ գործէին, մենք ոչինչ ունէինք ասելու, ընդհակառակը մենք դուցէ նրանց արդարացնէինք, որովհետեւ նոքա այդպէս վարուելով, մեր սկզբունքի համեմատ, նօրմալ գործունէութիւն ցոյց տուած պիտի լինէին եւ հաստատած մեր այն փաստը թէ ամիրայական մենծ էֆէնդիութիւնը կարող չէ մի ուեէ օգտակար հասարակական գործունէութիւն ունենալ, թէ նա ապականուած, փճացած է բոլորովին եւ թէ հարկ է այդ քլիքը դուրս չպրտել ազգային հասարակական կեանքէն եւ անոր տեղ դնել երիտասարդական, պատանեկան, երախայական ոյժեր:

Բայց ահա՛ Պարոն Նորատունկեան եւ իր քլիքը տարիներէ ի վեր ո՛չ թէ միայն շարունակած է գործադրել Սանասարեան կտակը, վարժարանը բաց պահել, այլ նոյն իսկ եռապատկած է կտակարարին թողած դրամագլուխը:

Ա՛յս է մեզի համար սկզբունքային հարցը, դատապարտելի, անարդարանալի անօմալիան:

Պարոն Նորատունկեան եւ իր քլիքը վարուելով այնպէս ինչպէս վարուած են մինչեւ այսօր, դաւաճանած կ'ըլլան իրենք իրենց հանդէպ, մենծ էֆէնդիութեան եւ ամիրայականութեան հանդէպ: Նոքա իրենց այս արարքով դաւաճանած կ'ըլլան եւ մեր յեղափոխական թէօրիաներու դէմ:

Ահա՛ թէ ի՞նչու մենք մեզ պարտաւոր կը դդանք ամէն գնով կոռուիլ այդ քլիքի դէմ, առանց յետին մըտ-

քերու, թաքուն նպատակներու, այլ միմիայն սկզբունքային հողի վրայ:

Դուք չէ՞ք ըմբռներ ու տեսներ այն վատ ներգործութիւնը որ Պարոն Նորատունկեանի պէս անձեր ի գործ կը դնեն ժողովրդական մասաներու վրայ իրենց այս կերպ գործքերովը:

Տգէտ ու անգիտակից ժողովուրդը որ միշտ sim-
pliste է եւ յաճախ արդիւնքէն կը դատէ ամէն գործ, ինքնիրեն պիտի խորհրդածէ.

— Սանասարեան ինամակալութիւնը, երեսուն տարուան մէջ իրեն վստահուած դրամագլուխը եռապատկած է, միեւնոյն ատեն վարժարանը կանոնաւորապէս վարած է, ուրեմն այդ մարդիկը կարող են օգտակար ըլլալ, գործ տեսնել, ազգին ծառայել, հետեւաբար անիրաւ է պնդելը թէ հարկ է գանոնք հալածել ու դուրս նետել ազգային գործունէութենէն:

Կը տեսնէ՞ք թէ ի՞նչ աղետալի հետեւութիւններու կրնայ մզուիլ միամիտ ու անգիտակից ժողովուրդը Պարոն Նորատունկեանի նման անձերու գործունէութեան շնորհիւ:

Այս ընթացքով բոլոր մեր հիմնական սկզբունքներն են որ ոտնայատակ կը լինին, մեր երկարամեայ դասախոսութիւնները, փրօփականտանները, գործունէութիւնն է որ յօդս կը ցնդի եւ դուցէ հասնի մի օր ուր ժողովուրդը, իր աչքի առջեւ պարզուած չար օրինակներէն դատելով՝ սկսի մտածել.

— Այդ կուտակցականներու ամէն ըսածին պէտք չէ հաւատալ...

Ու տարակոյսը պիտի պատէ իր միտքը:
Այդ օրը կը լինի մեր դատապարտութիւնը, մեր

յառաջիւաղացական ընթացքի կասումը, մեր պրէստիժի խորտակումը:

Այս կերպով Պարոն Նորատունկեան եւ իր նմաները դաւաճանած կը լինին յեղափոխական առողջ սկըզբունքներու դէմ, մինչեւ եթէ նոքա մի քիչ խիղճ, մի քիչ զգացմունք, մի քիչ ազգասիրութիւն ունենային՝ պիտի ջանային ոյժ տալ մեր քարողած վարդապետութիւններուն՝ իրենց օրինակով զգուեցնելով ժողովուրդը իրենցմէ: Բայց միթէ այդ ապականուած բուրժուաները երեք գաղափար ունի՞ն անձնազոհութեան, ինքնամուացումի վրայ: Միթէ նոքա կարո՞ղ են հրաժարիլ, հասարակական օդտի համար, իրենց վարչական, դիւանակիտական կամ մատակարարական կարողութիւններէն:

Մտածեցէ՛ք թէ ժողովրդական մասսաներու համար ի՞նչ շինիչ դաս պիտի լինէր, ի՞նչ փայլուն ապացոյց, եթէ Սանառարեան Խնամակալութիւնը փոխանակ իրեն վստահուած դրամագլուխը եռապատկելու եւ ֆիւֆ կապած ոսկիի դէղեր կուտակելու, յիմարաբար ու ամհաշիւ մախած ըլլար այդ դումարը, այնպէս ինչպէս կը վայելէր ամիրայամենծէֆէնդիական քլիքի մը:

Այնչափ ատեն որ մեր բոլոր դասակարգերը իրենց վրայ պարտադրուած ուրոյն եւ որոշ նկարագիրներն ու բարքերը չիւրացնեն, կարելի չէ իսկական յեղափոխութիւն յառաջ բերել:

Մենծ էֆէնդին պէտք է լինի աղդատեաց, փառամոլ, ազգին շահն իր շահուն զոհող. բուրժուան պէտք է լինի ապականած, դրամապաշտ, անբարոյական. հարուստը պէտք է լինի կեղեքիչ, անխիղճ. յեղափոխականը իւշալիսթ, մաքուր, անշահախնդիր, անկեղծ, անձնուէր: Եւ այսպէս ըստ կարգին:

Մենք կ'ըսենք Պարոն Նորատունկեանի եւ իր նմաններուն.

— Դուք եթէ կը կամիք, կարող էք հասարակական գործերու մասնակցիլ, բայց պայմանաւ որ ձեր գործունէութիւնը լինի կամայական, վնասակար, կործանարար, այսինքն համաձայն այն ուղղութեան, զոր ընկերային պայմանները, ատավիզմի օրէնքները, միջավայրը, դասակարգային ժառանդականութիւնը, մարդկային բնաշրջումը ստեղծած են ձեզի համար: Դուք իրաւունք չունիք շեղելու այդ ճամբէն եւ ջանալով օգտակար գործունէութիւն ցոյց տալ, հերքելու մեծ գիտուններու եւ ընկերաբաններու տեսութիւնները՝ գայթակղութիւն պատճառելով ժողովրդին ու անոր ներշնչելով սիսալ մտածումներ: Մի՛ ապականէք, մի՛ մոլորեցնէք ժողովուրդը, թողէ՛ք որ նա մաքուր մնայ եւ ուղիղ սկզբունքներով առաջնորդուի:

Եւ որովհետեւ Պարոն Նորատունկեան եւ իր նմանները չեն ուղեր լսել այդ խրատը, որովհետեւ նոքա կը յամառին չհետեւելու ընկերային գիտութեան իրենց առջեւ գծած ճամբուն, մենք ի հարկէ իրաւունք կ'ունենանք կատաղօրէն կոիւ մղելու մենծ էֆէնդիական քլիքի դէմ, գիտական սկզբունքներու յաղթանակին համար:

Կը յուսամ որ այս դասախոսութեամբ, Բիւզանդիոնի ընթերցողը որոշապէս հասկցաւ թէ ի՞նչ է մեր բռնած դիրքը Սանասարեան հարցի մասին. մէկ բառով ասեմ.

— Վերահաստատել սկզբունքային նօրմալիան, որ խախտած է չնորհիւ Սանասարեան Խնամակալութեան կատարած գործին:

Դ.

ՀԱՅ ԱԶՆՈՒԱԲՈՒՐԺՈՒԱՅԻԱԿԱՆ
ՄԻ ԿՈԼՈՍԱԼ ԵՂԵՇԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Մի դժոխային ակտ որու մօտ կը նսեմանան նոյն իսկ Պօնոյի եւ իր ընկերներու օղօմօրիլային ոճիրները, կը սեւացնէ մեր ազգային իրականութիւնը՝ մօտաւորապէս եօթն ութը տարիէ ի վեր:

Մի անլուր, անբարոյացուցիչ ձեռնարկ որուն նըպատակն է Հայ Աղդին վերածնութիւնը իր սաղմին մէջ խեղդել, ժողովրդի ազնիւ բնազդները ապականութեան ճախճախուտքին մէջ սպաննել եւ ստրկութեան շղթաներով պրկել անոր ամբողջ ագատամարտ խոյանքը, անպատիժ ի գործ կը դրուի աղնուաբուրժուազիական խմբակի մը կողմէ, անպատկառ խայտառակութեամբ:

Մենք շատ անդամներ առիթ ունեցեր ենք անարդութեան սիւնին դամելու այդ յայտնի ոճրագործները, անոնց հակամարդկային արարքները զզուանքի նշաւակըներու, բայց նոքա, առանց ազդուելու մեր արդար զայընը միջի արտայայտութիւններէն, իրենց եղեռնագործու-

թիւնը առաջ կը տանին՝ օդտուելով իրենց շուրջ բոլորուող ապականած ուժերէն:

Բիւզանդիանի ընթերցողները եթէ իմ դասախոսութիւններուս չնորհիւ, կըցած են դիտակից հասկացողութեան մը տիրանալ, անպայման գուշակած կը լինին որ իմ խօսքերը ուղղակի Եղիստոսի մէջ հիմնուած Հայ Բարեգործական Ընդհ. Միութեան մասին է:

Մեր պատմութիւնը, Հայկ Դիւցաղնի յաղթանակներէն մինչեւ իյանասորի արշաւանքը, մի այսպիսի սեւէջով չէր մրոտուած: Պօղոս փաշա Նուրար, իր դիւտիյն հիմնարկութեամբ, մահացու հարուածը տուաւ մեր կուլտուրական գործին:

Թո՛ղ խօսեն փաստերը եւ թուանշանները:

Եղիպտոսի Բարեգործական Միութիւնը նուիրատուութիւններու աղբեւրները խոտորեցնելով դէպի իր քովը, մօտաւորապէս վաթմուն հազար ոսկիի կորուստպատճառեց ութը տարուան ընթացքին:

Բայց թողնենք նիւթական կորուստը. նա՛ իր գործունէութեամբ ապականեց, անբարոյացուց Հայ ժողովը նկարագիրը: Նորա հրատարակած տարեկան տեղեկագիրները մի մի ոճիրներ են, որոնք կը սպաննեն Հայ ժողովրդի գիտակցութիւնը:

Ապացո՞յց. ահաւասիկ: Մինչեւ հիմա մեր գիտակից ժողովուրդը իր գրամը կուտար յանուն իդէալական գործքերու, առանց յետոյ հաշիւ պահանջելու, առանց հետաքրքրուելու թէ արդեօք գրամը նպատակին գործածուած՝ կամ առ առաւելն կը գոհանար երբ իրեն գաւաստէին թէ գրամը իր նպատակին գործածուած՝ կը հաւաստէին թէ գրամը իր նպատակին գործածուած՝ եւ նոյն իսկ քիչ մըն ալ անդին անցած է: Նա՛ վստահուեւ նոյն իսկ քիչ մըն ալ անդին անցած է:

րիչներուն վրայ, նա՛ չէր գիտեր թէ ի՞նչ է սնտուկի հաշիւը, ելեւմուտի հաշիւը, հաշուեկշիւը, նա՛ որովհետեւ փող էր տուել, չէր ուզեր տոմարակալ դառնալ:

Բարեգործական Միութիւնը իր տարեկան տեղեկագիրներով, իր մանրամասն հաշուետութեամբ կ'ուզէ նուիրատուները դարձնել մի մի տոմարակալ, նրանց ներշնչել սա աղետաւոր գաղափարը թէ իրանք, իբրեւ նուիրատու, իրաւունք ունին իրենց նուէրներուն գործածութեան հաշիւը քննելու: Եւ ահա՛ ձայ ժողովուրդի մէջ ծնունդ առաւ անվատահութիւնը, կասկածը, նորա մաքուր, անկեղծ, միամիտ նկարագիրը ապականուեցաւ: Նա սկսաւ բաղդատութեան դնել հաշիւ տուողները եւ հաշիւ չտուողները. նա դարձաւ հաշուելահանջ: Իդէալը կորաւ պարտի ու պահանջէի գումարներուն մէջ, գաղափարական միամտութիւնը ինկաւ հաշուեկշիւի ոտքերի առաջ, վերացական բարձրութիւններէն՝ նա կօնկրէք տոմարներու վրայ թառաւ:

Ահա՛ այն անքաւելի ոճիրը որ գործեց Բարեգործական Միութիւնը մի քանի տարուայ ընթացքին:

— Տօ՛, յիմարներ, ի՞նչ պէտք տարեկան այդ մանրամասն հաշիւներուն, միթէ ժողովուրդը ձենէ հաշիւ պահանջե՞ց, նա գրամը տուաւ ու պրծաւ: Ի՞նչ հարկ մի առ մի ցոյց տալ թէ այսքան ոսկի տրուեր է այնինչ վարժարանին, այսքան այնինչ որբանոցին, այսքան այնինչ գիւղի աղքատներուն, եւն. եւն: Ինչո՞ւ չէք ուզեր օգտուիլ ուզիւ կազմակերպութիւններու օրինակէն, աւելի հին, աւելի վորձառու կուսակցութիւններէն, որոնք ձեր փաշաէֆէնդիական քլիքէն շատ աւելի լաւ ուսումնասիրած են ժողովրդի հոգեբանութիւնը, նորա կարիքները, նորա մտայնութիւնը:

Օրինակ՝ վեր առէք ուսանողական Փօնդի համար բացուած հանդանակութիւնը, միթէ հաշիւ տրուեցա՞ւ, միթէ տղերքը հաշիւ սլահանջեցի՞ն:

Զէ՞ մի որ գաղափարը արդէն այնքա՞ն գեղեցիկ էր որ ինքնին բաւարարութիւն կը տար դրամ վճարողներու հոգեկան վայելքին:

Բայց միթէ մեր վաշխառու բուրժուաները կարո՞ղ են ըմբռնել ու ճաշակել այս զուտ մտաւորական վայելք-ները: Նոքա գումարի, յաւելումի, բազմապատկութեան ու տոկոսի ստրուկներ են, նրանց իդէալը դրամարկդն է..

Կործանել Եդիպտոսի Բարեգործական Միութիւնը, նորա պահեստի դրամագլուխը՝ կուսակցական կօնտրօլի տակ՝ գործածել աշխատաւոր մասաներու կուլտուրական գործին, հիմնելով զանազան Փօնդեր որոնք մի մի իդէալական սկզբունքներ ներկայացնեն. ահա՛ հրամայողական պահանջը:

Այս կերպ միայն կարելի է քաւել գործուած ոճիրը:

Ե.

ԵՓՐԵՄ ԽԱՆ ՖՕՆԴ

Երկաքը պէտք է տաք սւատ ծեծել .—

Այսպէս է վճռել ազգերու իմաստութիւնը :

Մի ահեղ հարուած սարսեց նախկին Սասանեան երկիրը, ինկաւ Եփրեմ Խան Իրանի կորիւնը պատնէշի վըրայ՝ թշնամու գնդակներէն : Նա պարսիկ պախտիարներու հետ կոռւեցաւ Սալար Էլ Տէօլէի պարսիկ ու քուրդ գունդերու դէմ՝ Պարսկաստանի խորքը, ներկայ պարսիկ իշխանութիւնը պաշտպանելու համար՝ նախկին Պարսից Շահ Մէհմէտ Ալիի դաւերուն դէմ :

Մենք բացատրեցինք թէ ի՞նչպէս Եփրեմ Խան, Թէհրանի ոստիկանապետը, իր այս արարքներով հաւասարեցաւ Վարդան Մամիկոնեանին եւ դարձաւ ազգային հերոս :

Մենք փաստացի կերպով ցոյց տուինք թէ նա' ինչպէս ապրեցաւ, կոռւեցաւ, մեռաւ Հայ ազգի, Հայ Երենիքի, Հայ ժողովրդի համար : Մենք այդ բոլորը ցոյց ենք տուել արձակ եւ ոտանաւոր գրութիւններով, պատկերներով, դօկիւմէնդներով :

Եւ մենք հրաւիրեցինք Հայ ժողովուրդը լաց լինել . Եւ Հայ ժողովուրդը լաց եղաւ : Մենք հրաւիրեցինք Հայ ժողովուրդի որ իր ցաւը արտայայտէ փայլուն կերպով . Եւ նա արտայայտեց :

Բայց դա բաւական չէ : Այդ բոլորը պլադոնական ցոյցեր էին որոնք չեն կարող բաւարարութիւն տալ իրականութեան պահանջներուն :

Մի նորափակ Հայ հերոսի գերեզման կայ մեր առջեւ . մենք պէտք է, ժողովրդի օգտին համար, անկէ քաղենք ինչ որ կարելի է եւ պէտք է քաղենք երբ տակաւին հողը չէ չորացել նրա վրան : Հարկ է երկաքը տաք տաք ծեծել :

Հայ կեղտու բուրժուանե՛ր, իմ կոչը ձեր խուլ ականջներուն կ'սւղեմ եւ կ'ասեմ . ահա' մի գեղեցիկ առիթ մի որոշ չափով քաւելու համար ձեր ամօթալի գոյութիւնը, մի առիթ ցոյց տալու թէ գգացումը բոլորով վին չէ չնջուած ձեր պիղծ հոգիներու խորքը, թէ դուք կարող էք ձեր գետնաքարը կեանքին մէջ գոնէ' մի անդամ, մի բոպէաչափ, աղնիւ մարդ դառնալ, խոնարհիլ մի վսեմ գաղաքարի առաջ, զոհելով ձեր քիւփ կապած ոսկիներէն մաս մը հասարակական կուլտուրական գործին :

Իմ առաջարկը շատ պարզ է :

Հիմնել մի Եփրեմ Խան Փօնդ դիմելով համազգային հանդանակութեան, որուն կարող ըլլան մասնակցիլ փաշէֆէնդիական քլիքը, բուրժուազիան, մտաւորական եշտասարդութիւնը, պատանեկութիւնը, ուսանողութիւնը, գպրոցականները, երախանները, օրօրոցները, ցրուած Հայ գաղթականութիւնները, եւ Հայ աշխատաւոր դասը, եւ Հայ արհեստաւորը, բժիշկը, փաստաբանը, գեղագործը :

ծը, եւ Հայ կաթոլիկը ե՛ւ Հայ բողոքականը ե՛ւ Հայ-
հոռոմը ե՛ւ Հայ բոշան, որովհետեւ մենք իրաւունք չու-
նինք զրկելու մի հայ անհատ իր երախտադիտութեան
պարտքը հատուցանելու Պարսկաստանի ազատութեան
հերոսին. հակառակ դէպքում՝ դա՛ կը լինի չափագանց
եսասիրութիւն, մի աններելի էզօիզմ։

Մի այսպիսի հանդանակութեամբ Հայ ժողովրդին
միջոց կը տրուի իր պարտքը հատուցանելու դէպի այն
կուսակցութիւնը որ իր մէջ ծնաւ Եփրեմ Խաներ։

Թէ ի՞նչ բանի պիտի գործածուի հաւաքուած գու-
մարը՝ դա երկրորդական հարց է որ նշանակութիւն չու-
նի, հանդանակութեան բո՛ւն նպատակը լինելով միայն
միջոց տալ Հայ ժողովրդին, որպէս զի նա կարենայ գո-
հացնել իր երախտադիտական կարիքը դէպի Հայ հերո-
սը, դէպի Հայ հերոսներու վառարանը եղող կուսակցու-
թիւնը։

Այսուհանդերձ հանդանակութեամբ հաւաքուելիք
գումարի գործածութեան մասին կարելի է թելադրու-
թիւններ ընել. օրինակ՝ Հիմնել Հայստանի անծանօթ
գիւղերու մէջ «Եփրեմ Խան» ակումբներ որոնց նպատակը
լինի մայիս մէկի գործաւորական տօնին նշանակութիւնը
բացատրել տգէտ գիւղացուն, կա՛մ գիւղացիական սէն-
տիքաներ կազմել ազրարային կավիթալիսմի դէմ, եւ
կա՛մ կառցկիի, Մարքսի, Էնդէլսի եւ այլ ընկերվարա-
կան վարդապետութիւնները էժանագին հրատարակու-
թիւններով տարածել Հայ գիւղացիներու մութ խաւերուն
մէջ եւ կամ, ինչ որ կը լինի ամէնէն ուղիղ եւ օրինաւոր
ճանապարհը, հանդանակութեամբ ամբողջ գումարը թա-
փել մեր կուսակցութեան գանձարանը, քանի որ մեր ծրա-
գրին մէջ այդ բոլորը նախատեսուած է։

Արդէն ես Եփրեմ Խան Փօնդի առաջարկը բերելով
Հայ բուրժուազիական մամուլի էջերուն մէջ, երբեք նը-
պատակ չեմ ունեցեր գործի նիւթական, Փինանսական
տեսակէտը, մի տասներորդական կարեւորութիւն միայն
ունի դա: Բո՛ւն էականը գաղափարական տեսակէտն է եւ
մենք միմիայն գաղափարական հողի վրայ պէտք է առաջ
տանինք մեր փրօփականտան։

Դրամը, այդ անարդ մետաղը, որ Հայ ժողովուրդը
իր գրպանէն պիտի հանէ՝ պիտի լինի իր գաղափարային
վերացական զդացմունքներուն թանձրացեալ սիմբոլը ոք
հալելով մեր գանձարանին մէջ՝ կը վերածուի իր բո՛ւն
գաղափարային վերացականութեան։

Այս հրաշալի երեւոյթը կարելի է անուանել Հայ
յեղափոխական քիմիադիտութիւն։

խորքը, նա տեսա՞ւ այդ մեր մղած պայքարին իմաստա-
սիրական հայեցակէտը, լոգիկական եղբակացութիւնը...
ապահովաբար ո՛չ բանանք ուրեմն նորա պղտոր աչքերը:

Ընտրական զեղծումներու պատկերացումին մէջ ա-
ռաջին նկատելի փաստը, ուրկէ կը ծնի մի բարոյական
դաս, սա է որ ընտրական զեղծում չէ պատահած հո՛ն ուր
մեր կուսակցութեան ընտրելիները յաջողած են, իսկ ի
փոխարէն զեղծումը հասեր է իր գագաթնակէտին հո՛ն
ուր մեր կանոփաները անայաջող դուրս են եկել: Դա մի
վարկպարապի ենթադրութիւն չէ, այլ իրողութիւն է,
փաստ է, ապացոյց է:

Օրինակ, վեր առնենք Պոլիսը, վեր առնենք Կարե-
նը, վեր առնենք Սվագը եւ Իզմիրը, ի՞նչ կը տեսնենք.—
մի ընտրական օրինաւոր գործողութիւն, որուն նմանը
գուցէ կարելի չէ գանել նոյն իսկ Շվեյցարիայում*): Իսկ
Ռոտոսթոյի^o, Հալէպի^o, Իզմիթի^o, Խարբերդի^o եւ Գո-
գանի^o (Սիսի) մէջ... Կարդացէ՛ք Ազատամարտի չորրորդ
երեսի ընտրական զեղծումներու բաժինը, ուր միմիայն
փաստեր, ապացոյցներ, թուանշաններ կը խօսին իրենց
ջախջախիչ պերճախօսութեամբ: Բայց աւելի զարմանա-
լին կայ. Վանի մէջ ընտրական գործողութիւնները մին-
չեւ վերջին օրերը, ուր մեր ընտրելիի յաջողութիւնը
կասկածի տակ էր, անօրինակ զեղծումներու թատերա-
կան դաշտած էին. բայց ահա հեռագիրը աւետեց թէ մեր
բեմ դարձած էին. բայց ահա հեռագիրը աւետեց թէ մեր
զեղծումներ, ապօրինութիւններ, անկանոնութիւններ

*) Կամ որպէս դուք կ'անուանէք՝ Զուիցերիայի
մէջ:

Զ.

ԸՆՏՐԱԿԱՆ ԶԵՂԾՈՒՄՆԵՐ, ՆՐԱՆՑ ՍԿԶԲՆԱՊԱՏՃԱՌԸ

ՆՐԱՆՑ ԴԱՐՄԱՆԸ

Համաձայնուելով հանդերձ իթթիհատի հետ, մենք
եղանք անոնց կատաղի քննադատը առաջին բոպէէն:
Մենք Օսմանեան Պարլամէնտի ընտրութիւններու առթիւ
տեղի ունեցած զեղծումները մատնանշեցինք անվերապահ
կերպով, մենք առաջին անգամ բողոքի ձայն բարձրա-
ցուցինք, մենք աղաղակեցինք, լացինք, ափսոսացինք:
Մենք նոյն իսկ քաջութիւն ունեցանք դիմելու ձեր Պատ-
րիարքին ու ձեր Գումբ-Գաբուի Պատրիարքարանին՝ հրա-
ւերելու համար նոցա ազդու միջամտութիւնը՝ գործուած
ընտրական զեղծումներու եւ անիրաւութիւններու դէմ:
Մենք, մինչեւ երէկ, օրը օրին արձանագրեցինք ընտրա-
կան զեղծումներու իրողութիւններ՝ հիմնուած, ինչպէս
միշտ, փաստերու եւ թուանշաններու վրայ:

Բուրժուազիական պղասոր միտքը գոնէ օգտուեցա՞ւ
այդ հրապարակումներէն, նա ուսումնասիրէ^o իր առջեւ
դրուած իրողութիւնները, նա կրցա՞ւ թափանցել ինդրին

Ծնջուեցին ու վասպուրականը դարձաւ մի երկրորդ Շվեյցարիա:

Այս երեւոյթը, ինչպէս ամէն բացարձակ ճշմարտութիւն, ընդհանրական է: Ինչ որ պատահեցաւ Օսմանեան Պարլամէնտի ընտրութեան ժամանակի, նոյնը կը պատահէ եւ ամէն օր մեր պատային շրջանակի անձուկ մթնոլորտին մէջ: Թաղական Խորհուրդի ընտրութիւն, երեսփոխանի ընտրութիւն, վարչութեան ընտրութիւն, վերջապէս ամէն գործողութիւններու մէջ, երբ մեր ընարելիներն են որ կը յաջողին՝ ամէն ինչ տեղի կ'ունենայ օրինաւորութեան, արդարութեան, կանոնաւորութեան եւ ուղղութեան սահմանին մէջ, որպէս Շվեյցարիայում: Իսկ երբ մեր հակառակորդներն են յաղթող հանդիսացել, այն ատեն կրնաք վստահ ըլլալ որ գործողութիւնները կատարուած են զեղծումներով, ապօրինութիւններով, բըռնութեամբ, անարդարութեամբ, մի բառով որպէս Փաթակունիայում...

Մրանք չափազանցութիւններ չեն, սրանք իրողութիւններ են: Վկա՛յ չորս տարուան Ազատամարտի համարները:

Ի՞նչ է այս երեւոյթի պատճառը: Մի պարզ դիպւա՞ծ, մի պատահական դէ՞պք. այդպէս մտածել կը լինի տղայամտութիւն եւ հակառակ դիտական սկզբունքներու: Նոր ժամանակի մարդը դիպուածի քամակեն չի բեռցներ ամէն իրողութիւն՝ այլ կ'աշխատի դանւ ամէն երեւոյթի թաքուն պատճառները, բնորոշիչ օրէնքները:

Ինչ որ ձեր նախապաշտեալ ու յետադիմական դանկերու համար տարօրինակ ու անբացատրելի կ'երեւայ, մեր դիտական ուղեղներու համար շատ պարզ ու բնական է: Երեւոյթի գաղտնիքը նրանումն է որ մենք միայն կը

դանուինք ուղիղ ճանապարհէի, օրինաւորութեան շաւղին, ճշմարտութեան գծին վրայ, եւ որովհետեւ ուղիղ, օրինաւոր ու ճշմարիտ ճանապարհէը չէ կարող երկու կամ երեք ըլլալ, անոնք որ մեր ճանապարհէն չեն քալե՞՝ ի հարկէ կը մոլորին խոտոր ուղիներու մէջ. կամ մեր դրամատէր բուրժուաներու աւելի համար ըլլալու համար ըսեմ թէ մենք, ինչպէս Ամերիկացի միլիոնատէրներ, այսպէս ասած, կազմեր ենք անշահախնդրութեան, ազատութեան, ուղղութեան, ճշմարտութեան, օրինաւորականիրութեան, քաղաքացիական պարկեշտութեան մի թրլսթ, այնպէս որ ուրիշները նոյն իսկ եթէ ուղեն այդ առաքինութիւններէն մէկ քանին կամ գոնէ մի հատն ունենալ ափսո՞ս որ չեն կարող:

Յաճախ պատահել է որ մեր կուսակցութեան պատկանող մի անձնուէր, պարկեշտ, ուղղամիտ անձ՝ մի ուեւէ պատահական դէպքով հեռացել է մենէ եւ իսկոյն դարձեր է դաւանան, զեղծարար, ստոր արարած: Այս յայտնի երեւոյթը մի ապացոյց եւ փաստ է իմ վերի ասձներուն:

Եղրակացնեմ իմ այսօրուայ դասախոսութիւնը.
— Զի՞ք ուղղութիւն եւ նշմարտութիւն արտաքոյն մեր կուսակցութեան:

Դա մի Credo է*) որ պէտք է գամել ձեր փոսած ուղեղների խորքը:

*) «Հաւատամեմ»:

Է.

Ե՞ՐԲ ԿԸ ԳԱՅԻ ԽՕՍԵԼՈՒ ՐՈՊԵՆ

Մի Բաշի Բօղուք՝ այսինքն մի ո՛չ-կուսակցական հասարակ մարդ, սա դիտողութիւնը կ'ընէր ինձ՝ երէկ լուրջ կերպարանքով .—

— Ես չեմ հասկնար բնաւ ձեր կուսակցութենէն ընտրուած Մէպուսներուն ընթացքը Օսմ. Խորհրդարանին մէջ: Գոնէ առ երեւոյթ իբրեւ Հայ ժողովուրդի մէպուսներ անոնք մէկ անդամ տակաւին բերաննին չբացին զուտ Հայ ազգային ցաւ մը, արտունջ մը, պահանջք մը ներկայացնելու համար Խորհրդարանին: Ատանայի ջարդերուն ժամանակ լուցին: Անատօլուի հարստահարութեանց մասին միշտ կը լուեն, Հայաստան զրկուելիք յանձնաժողովին մասին ո՛չ մի հարցապնդում չեն ըներ, բերաննին չեն բանար, վերջապէս, Հայ տառապող ժողովուրդը շահագրգոռող խնդիրներու մասին ո՛չ ձայն մը կը հանեն կամքառ մը կ'արտասանեն . . . իսկ ատեն ատեն եթէ երբեք խօսին, այն ալ մեզ շատ քիչ կամ բնաւ չհետաքրքրող հարցերու մասին է. օրինակ՝ չորեքշաբթի օր Պ. Վարդգէսի յարուցած աղմկալից միջադէպը բացօթեայ դումարումներու օրէնքին մասին . . . ի՞նչ ընթացք է այս:

Ի հարկէ այս յիմարական դիտողութիւններուն ես կը պահէի արհամարհական լուռւթիւն, եւ դայն չէի ըներ իմ դասախոսութիւններու առարկայ, եթէ այդ պակասամիտ արարածի խօսքերը չկրկնուէին շատերու կողմէ: Այո՛, ավասո՞ս որ մի որոշ տիպի մարդիկ այդ դիտողութիւնը կ'անեն տարիներէ ի վեր եւ շատեր — ի հարկէ ո՛չ-կուսակցական անգիտակից դասակարգէն — իբրեւ ուղիղ կ'ընդունի նայդ անձունի քննադատութիւնները:

Նոքա որ այդ յիմար դիտողութիւնները կ'ընեն պրօվօֆացիա առաջ բերելու յետին մտքով, երեւի բնաւ գաղափար չունին թուրքիոյ մէջ խորհրդարանական գործունէութեան մեր Պլատֆորմին վրայ: Նոքա չեն դիտեր թէ մեր ընկերներու Սամանեան Պարլամէնտի աթոռներուն վըրայ սպասողական զիրք բոնած են որպէս զի խօսելու ըուպէն հնչէ: Նոքա չեն դիտեր թէ պալիարին, կիսկատար միջոցներով չէ որ մենք կ'ուզենք Հայ ժողովուրդը երջանկացնել, այլ հիմնական, սկզբունքային միջոցներով: Նոքա չեն դիտեր թէ մեր ընկերներու ամբողջ խօսելու ոյժը, այսպէս ասած՝ շոդիկ տակ պահուած է որպէս զի յարմար բոսէին գուրս պոռթկայ . . .

— Ե՞րբ կը գայ այդ բոպէն, պիտի հարցնէ այժմ մի ո՛եւէ տղէտ Հաջի Աղա:

Պարունենք, սպասեցէք ու պիտի տեսնէք:

Թո՛ղ վաղը Օսմանեան Պարլամէնտի սեղանին վրայ գայ ծննդաբերութեան ըրջանին մէջ աշխատող կիներու հարցը եւ պիտի տեսնէք թէ մեր ընկերները ինչպէ՞ս միահամուռ պահանջք պիտի դնեն ծննդաբերութեան ըրջանի համար երկու ամիս արձակուրդ, մեր խորհրդարանական պլատֆորմի համեմատ:

Թո՛ղ ծագի Խորհրդարանին մէջ մի վիճաբանութիւն

համաշխարհային քաղաքականութեան մասին ու այն ա-
տեն կը տեսնէք թէ մեր ընկերները պերճախօսութեան
ի՞նչ հեղեղներ պիտի թափեն պահանջք դնելու համար
տնտեսական եւ քաղաքական մերձեցում Պալքանեան պե-
տութիւններու միջեւ, որպէս կը տրամադրէ մեր Խորհըր-
դարանական պլատֆորմը :

Մեր ընկերները պահանջք պիտի դնեն նաեւ, երբ որ
ժամանակը կը դայ, որ Օսմանեան Պետութիւնը պահէ
խաղաղ բարեկամական յարաբերութիւն եւրոպական երկու
խոշոր քաղաքական հատուածներու հետ: Իսկ չէզոքութիւն
պահպանելու անկարելիութեան պարագային՝ նախապատ-
ռութիւն տայ Արեւմուտքի ազատական Պետութիւններու:
Այո՛, մեր ընկերները ի հարկէ ստիպուած են պահանջել
այս քանի որ հրամայուած է մեր Խորհըրաբանական պը-
լատֆորմի արտաքին քաղաքականութեան երկրորդ յօդ-
ւածով:

Այո՛, Պարոն Զոյիլներ, երբոր ժամանակը կը դայ,
մեր ընկերները կողք կողքի կը բարձրանան Խորհըրաբա-
նական ամբիոնը եւ կը պահանջեն, յամառ պերճախօսու-
թեամբ, հաւասարութիւն ստեղծել պետական բիւտճէի
մէջ, վերամշակել հանդստեան թոշակներու վերաբերեալ
կանոնները, վերակազմել մաքսային արդի ոչքիմը Եւրո-
պայի մէջ գոյութիւն ունեցող տիֆերանսիկ եղանակով,
պայի մէջ գոյութիւն ունեցող տիֆերանսիկ կանոնաւորել որպամական սիստէմը, մշակել ջուրերու եւ
ջրաբաշխութեան վերաբերեալ յատուկ օրէնքներ, ջնջել
Ծերակոյտը. ծագող միջազգային բարդութիւնները լուծել
իրաւաբար ատեաններու միջոցով, կնքելով եւրոպական
Պետութիւններու հետ այդ իմաստով դաշնագիր, ամէն
գնով հետապնդել Զարիզմի տապալման, ոյժ տալ Պարս-
կաստանի սահմանադրական անկախութեան, քաջալերել

Զինաստանի նորահաստատ հանրապետութիւնը, Պելժիս-
կան Քօնկօն վրկել մետրոպոլի հսկողութենէն եւ տալ նը-
կան քաղաքավար կազմակերպութիւն, Մէքսիկա-
բան ուրոյն եւ ինքնավար կազմակերպութիւն, Սիացեալ Նահանգ-
ի անկախութիւնը ապահովել հանդէպ Միացեալ Նահանգ-
ներու, Թէլուջթի մեծ Լամային առանձնաշնորհումները
ջնջել, Ալասքայի Ոսկեհանքերու բանւորներուն օրականը
ջնջել, Ֆիճի կղզիի մարդակերներուն ուտեստը ապա-
տելցնել, Ֆիճի կղզիի մարդակերներուն ուտեստը ապա-
տելցնել, Սօմալիանտի մէջ հիմնել մշակութային-դպրոցա-
հովել, Ավագանութիւններ, եւն. եւն: Վերջապէս ամէն ինչ
կան հաստատութիւններ, եւն. եւն: Վերջապէս ամէն ինչ:
որ նախատեսուած է մեր պլատֆորմի մէջ:

— Բայց պիտի առարկէք, միթէ այդ պլատֆորմի
մէջ Հայ ազգի կարիքներու մասին յօդուածներ չի կա՞ն:
Ավագո՞ս որ չեմ յիշեր, դուցէ այդ կէտը մոռցուել
է... իո՞ս, ամէն բան մտածել չէ կարելի:

Ը.

ՄԻ ԳԱՆԻ ԱՌՈՂՋ ԹԵԼԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Որպէս ժողովրդի խսկական շահերու պաշտպաններ՝
մենք չպէտք է դադրինք մեր հայեցքները պարզելէ եւ
ուղիղ ճանապարհ ցոյց տալէ, հոգ չէ, եթէ կեղեքիչ ու
շահամոլ բուրժուազիան եւ նրան հետեւող կոյր ու տգէտ
ամբոխ յամառին մեղ մտիկ չընելու. կայ մեր ձեռքին
տակ մարզուած գիտակից երիտասարդութիւնը որ կը հաս-
կնայ ու մանաւանդ կը հաւատայ մեզի. դա բաւ է որ մեր
պէս մի աննպաստ հողի վըայ:

Այսօր կ'ուզեմ մատնանիշ ընել իմ դասախոսութեան
մէջ այն ուղիղ ճանապարհ որով կարելի է մի շարք ազ-
գային կնճոռոտ խնդիրներ հասցնել վերջնական լուծումի:

Վեր առնենք՝ օրինակ՝ Երուսաղէմի Վանքին խնդի-
րը որ տարիներէ ի վեր որպէս մի կանսեռ կը թարախէ
աղդի կողքին: Այդ հարցը վաղուց իր օրինաւոր և տրա-
մաբանական լուծումը գտած պիտի լինէր, եթէ փոխանակ-
յանձնաժողովներու, քննիչ մարմիններու, պատուիրակնե-
րու, տեղապահներու յանձնուելու, դիմում ըլլար կուսակ-

ցական բիւրոյին անձնագոհութեան (Արեւելեան կամ Ա-
րեւմտեան, Հիւսիսային կամ Հարաւային՝ դա խնդիր չէ):
Ի հարկէ մենք, ժողովրդի օգտին համար, պիտի ընդու-
նէինք մի այսպիսի խնդիրք եւ խսկոյն պիտի կազմէինք՝
մի յայտնի յեղափոխական գործիչի ղեկավարող ոյժին
տակ՝ մի արշաւախումբ իր ամբողջ լրացուցիչ շարքերով:
Այդ արշաւախումբը գնալով Երուսաղէմ, յանուն կուսակ-
ցութեան եւ պլուէտար ժողովրդին, կը տիրանար վանքին,
դուրս կը շպրտէր պորտաբոյծ վարդապետները, այդ ազ-
գային հաստատութեան կղերայետաղիմական դրոշմը կը
սրբէր վրայէն, կը տար նրան մի յեղամշակութային հան-
գամանք, վերածելով վանքը մի ակումբի կամ քիւպի եւ
անուանելով զայն փոխանակ Սուրբ Յակոբի՝ Աղբիւր Սե-
րոբ կամ Արաւոծ: Յետոյ ձեռք կ'առնէր վանքի նիւթական
մատակարարութեան հոգսը, վաճառելով կալուածները,
հասութեաբեր հողերը, ցեցակեր զարդարդեստները, մգլո-
տած անօթները, կուլտուրական դործին համար բոլորո-
վին անօգուտ մնացած արծաթեղէնները ու ոսկեղէնները
եւ սրանով նա հիմնապէս կը քանդէր դրամական զեղծում-
ներու բոլոր սկզբնապատճառները եւ Երուսաղէմը կը լի-
նէր մի երկրորդ Աղթամար եւ դուք այլ եւս այս վանքին
ո'չ միայն խնդիրը չէիք լսեր, այլ մի քանի տարիէն, իր
գոյութիւնն ալ կը մոռնայիք:

Բայց կա՞ միթէ, աղդային իշխանութեան գլուխ,
գործ տեսնող մարդիկ, ազգի ու ժողովրդի խսկական շա-
հերով հետաքրքրուող մարդիկ... ափսօ՞ս:

Մի ուրիշ հարց որ ահա՛ երեք չորս տարիէ ի վեր
կը գրադեցնէ թէ՛ մամուլը եւ թէ ազգային իշխանութիւ-
նը, դա Եանէսքուի ծանօթ կտակի խնդիրն է: Եթէ առա-
ջին օրէն, Պատրիարք կամ վարչութիւն խելօք ընթացքի

հետեւէին, կտակի պաշտօնաթղթերը, փոխանակուած նամակները, գրութիւնները եւ՝ ի հարկէ՝ դրամագլուխը միասին առած դիմէին ուղղակի մեր օֆիսը եւ ասէին մեզ.

— Կը խնդրենք, դուք ձեր կազմակերպական ոյժերով, գործօն շարքերով կարող էք այս խնդիրը կարգադրել. ուստի մի՛ մերժէք մեր առաջարկը եւ թո՛ղ ձեր կուսակցութիւնը լինի Եանէսքուի կտակակատար...

Միթէ մենք այնքան անխիզմ պիտի լինէինք որ մերժէինք մի այսպիսի առաջարկ եւ վարանէինք մեր օժանդակութիւնը նուիրելու ժողովրդին եւ անոր շահերուն պաշտպանութեան :

Եւ ահա այդ օրէն խնդիրը լուծուած կը լինէր, որովհետեւ մենք կարող էինք լոեցնել թէ՛ Պ. Բասմաճեանը եւ թէ միւս ժառանդորդները, մենք կարող էինք եւ պատրաստել մի բառարան, յարգելով կտակարարին կամքը, մի յատուկ անուններու բառարան որուն մէջ տեղն ի տեղօք նշանակուած կը լինէին մեր բոլոր մեռած ու կենդանի հերոսներու անունները, իրենց մզած պատերազմները, տարած յաղթութիւնները, քաջազործութիւնները, դիւցազնութիւնները: Եւ դա կը լինէր մի Ոսկեմատեան, մի գրաւոր Պանդէոն, որուն առջեւ ծունը կը դար բոլոր երախտապարտ Հայութիւնը, սերունդէ սերունդ :

Միթէ դոյցութիւն կ'ունենա՞ր այսօր մի Սանասարեան վարժարանի խնդիր, եթէ Յուլիս 11էն յետոյ, երբ մեր կուսակցութիւնը դիրք բոնեց մայրաքաղաքի բարձունքը Բերայի մէջ, մենծ էֆէնդիական քլիքը դիմում ընէր մեր աջակցութեան, մեզ յանձնելով Սանասարեան Ծնամակալութեան բոլոր նիւթական, վարչական եւ վարժարանական հոգերը: Միթէ մենք չէի՞նք կարող իսկոյն շարժման մէջ դնել մեր կարինի կոմիտէն որ յանուն ժողովրդական պատկան մէջ դնել մեր կարինի կոմիտէն:

Պովրուի տէր կը դառնար այդ կրթական հաստատութեան, ատալով անոր ներկայ հրամայողական պահանջներու համապատասխան վիճակ, կազմելով ուսանողական հզօր միւսթիւն եւ ենթարկելով ուսուցչութիւնը նրա լիազօր հըսկողութեան եւ դարձնելով Սանասարեանը մի հրաբորբոք կողութեան եւ դարձնելով Սանասարեանը մի հրաբորբոք օջախ, մի վառարան, մի հրաբուխ, ուրկէ դուրս պիտի օջախ, յեղափոխական կրակը, այրելու, տոչորելու համար մի ո՛եւէ դիմակը ոյժ:

Բայց ո՞վ կը լսէ այս իմաստուն խորհուրդները. ո՞վ կը լսէ բանաւորութեան ձայնին՝ մինչեւ այն օրը, ուր գիտակից ժողովուրդը բոնի ոյժով կը տիրանայ իր իրաւունքին:

Այդ օրը կը հասնի շուտով:

թ.

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԵՒ ԱՆՀԱՏԱԿԱՆ
ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՈՒԻ ԹԷՅՐԻԱՆ

Մի բարեպատեհ իրողութիւն՝ կում կապուի թաղական Խորհրդի լնտրութեան միջադէսլը՝ ինձ առիթ կուտայ պարզելու, մի անդամ ընդ միշտ, մի երեւոյթ որյածախ անհասկանալի կը մնայ տղէտ եւ անդիտակից ժողովրդին եւ տեղի կուտայ ցաւալի թիւրիմացութիւններու։ Կուսակցական եւ անհատական հանդամանքներու հարցն է դա։ Ոեւէ գործողութիւն որ կը կատարուի մեր ընկերներու կողմէ ունի կամ կուսակցական եւ կամ անհատական հանդամանք։ Այս դասախոսութեան նիւթը պիտի ըլլայ այդ երկու հանդամանքներու սահմանները ճշգել, բնորոշել։

Սկզբունքային ախիօմա կամ ճշմարտութիւն է թէ՝ հանդամանքը կը բնորոշուի կատարուած գործողութեան համեմատ։

Երկրորդ սկզբունքային ախիօմա է թէ միեւնոյն գործողութիւնը կրնայ կուսակցական կամ անհատական հանդամանք ունենալ տարբեր միջավայրերու մէջ։

Երրորդ սկզբունքային ախիօմա է թէ գործողութիւն մը կրնայ ըլլալ՝ որոշ չափով՝ թէ՛ կուսակցական եւ թէ՛ անհատական միանդամայն։

Հարցը դնելով այսպէս զուտ ընկերաբանա-իմաստասիրական հողի վերայ, մի քանի փաստացի օրինակներով ընդլայնեմ իմ գաղափարը։

Վեր առնենք կում կապուի միջադէսլը։ Մի կուսակցական կլուք՝ Ապարէկ՝ ասպարէզ է եկել մասնակցելու համար ընտրական գործողութեան, կամ աւելի ճիշդ ասած՝ պայքար մղելու համար, ինչ որ ամէն քաղաքացու անկապտելի իրաւունքն է։ Ծագել է կոիւ, խորտակուել է գուէտուփը եւ խանդարուել է ընտրութիւնը։ Լա՛ւ, միթէ այս գործողութիւնը պէտք է համարել կուսակցակա՞ն, որովհետեւ տեղի է ունեցել կուսակցականներու ձեռքով։ Բնա՛ւ երբեք։ Պէտք է նկատի առնել գործողութեան բընութիւնը եւ դայն բաղդատութեան դնել կուսակցութեան պատմական անցեալին հետ եւ այն ատեն ամէն ինչ կը պարզուի։ Ե՞րբ տեսնուեր է որ մեր յեղափոխական կուսարզուի։ Ե՞րբ տեսնուեր է որ մեր յեղափոխական կուսարզուիթիւնը կոիւ մղէ փայտէ տփիկներու եւ թուղթի սակցութիւնը կոիւ մղէ փայտէ տփիկներու դէմ, մեր ո՞ր կոնկրէսին մէջ որոշուեր է պատառիկներու դէմ, մեր ո՞ր կուսակցութիւնը կուտրել քուէտուփը, 1912 Մայիսին, կում կապուի մէջ կուտրել քուէտուփը, մեր ո՞ր ծրագրի մէջ նախատեսուած է այդ բանը։ Հարցը կը լինէր տարբեր, եթէ փոխանակ քուէտուփի՝ մի քանի լինէր լինէր կուտրուէին, լինէին վիրաւորեալներ եւ սպանգլուխներ կուտրուէին, լինէին կուտրուէին կրնար գործուածներ։ այն ատեն կուսակցութիւնը կրնար գործողութեան հայրութիւնը ընդունիլ, որովհետեւ գործողութիւնը կը լինէր մի յեղափոխական ակտ, մի արիւնալի ընդհարում, մի զգայացունց դէպք ո՞րը կարող էր խանդակամանի բանախօսութիւններու, եւ յառաջտալ հրապարակային բանախօսութիւններու, եւ յառաջ-

բերել ոգեւորութիւն, կեանք, շարժում: Ճիշդ է թէ մի երիտասարդ ծեծուել է իրարանցումի ընթացքին, բայց ո՛չ բաւականաչափ որպէս զի կուսակցութիւնը այդ ծեծը որդեղը էր իր հաշւոյն:

Ըստ մեր երկրորդ ախիօմայի կարելի է օրինակի համար, կում կապուի միջադէպը մեր Ամերիկայի ոռկաններուն մէջ ներկայացնել իրբեւ կուսակցական դործ հերքելով հանդերձ անոր կուսակցական հանդամանքը Կ. Պուստ օռկանին մէջ: Դա մի պարզ տակտիկա է:

Այսպէս ուրեմն մի քանի հարիւր կուսակցականներ կարող են մի հաւաքական գործողութիւն անել եւ այդ գործողութիւնը կը մնայ զուտ անհատական, եթէ պարագաները այնպէս կը պահանջեն: Կարելի է նաեւ որ մի անհատ մեր կուսակցութենչն բաժանուած ու անոր հետ դժուուած, գործողութիւններ կատարէ եւ այդ գործողութիւնները զուտ կուսակցական հոչակուին, օրինակ Եփրեմ Խանը որ մենք շինեցինք թունդ Դաշնակցական իր մահէն ետքը: Դա մի պատիւ, մի յարդանքի արտայայտութիւն, մի posthumous (յետ մահու) փառաւորում է, զոր մեր կուսակցութիւնը կը չնորհէ արժանաւորներուն: Գուցէ կը գայ մի ժամանակ, ուր Հայկ նահապեաի, Արամի, Տիգրան Մեծի, Վարդան Մամիկոնեանի, Գայլ Վահանի ու Թաթուլի եւս կը տրուի կուսակցական հանդամանք:

Գանք մեր երրորդ սկզբունքային ախիօմային, ոռուն համեմատ մի գործողութիւն թէ կուսակցական եւ թէ միանդամայն անհատական կրնայ ըլլաւ որոշ չափով:

Օրինակ՝ դիցուք թէ մեր կուսակցութիւնը պաշտօն յանձնեց իր մէկ ընկերին՝ երթալ մի կեղտոս բուրժուայէ 400 ոսկի հրամայողական պահանջք գանձել: Ընկերը կ'երթայ կը տեսնէ կեղտոս արարածը, փաստացի հզօր ու հա-

մողիչ ապացոյցներ ցոյց կը տայ եւ կը յաջողի դանձել, փոխանակ 400ի, 600 ոսկի:

Ի հարկէ 400 ոսկին կը յանձնէ կուսակցութեան գանձարանին եւ 200 ոսկին կը պահէ իրեն:

Ահա! մի բնորոշ գործողութիւն:

Արդ, ի՞նչ հանդամանք պիտի տանք այս գործողութեան: Ո՛չ-կուլտուրական անդիտակից մի անձ գուցէ չփոխուի եւ կարող չլինի գործողութեան հանդամանքը որոշել: Եւ սակայն շատ պարզ եւ լոգիկական է:

Մեր ընկերը գործեց 2/3 կուսակցական հանդաման-

քով եւ 1/3 անհատական հանդամանքով:

Ինչպէս կը տեսնէք՝ թուաբանական կոտորակային չափով կարելի է զանազաններ, միեւնոյն գործողութեան մէջ, երկու հանդամանքները:

Գուցէ հարցնէք թէ բոլոր այս չափերու եւ գործողութեան մէջ ի՞նչ կը լինի դրամները վճարող բուրժուան:

Ես կը պատասխանեմ անկասկած. — Նա՝ ամբողջական որոշ չափով կը մնայ մի կեղտոտած արարած:

ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆԸ

(Պոլսական տիպար մը)

Պահպանողականը կամ հարուստ վաճառական մընէ, կամ հարուստ վաճառական ըլլալու կ'աշխատի եւ կամ իր ապրուստը հարուստ վաճառականի մը քմահաճոյքէն կախուած է: Այս վերջին խմբակցութիւնը որ ամէնէն բազմաթիւն է, իր մէջ կը պարունակէ, բացի փոքր առեւտրականներէ, պաշտանութեամբ իրենց գործին կառչած վարժապետներ ու դպրոցի տնօրէններ, նպաստի կարօտ թերթերու խմբագիրներ, ազգային պաշտօննեով ապրող անձեր, հարուստ յաճախորդներու հետ գործ ունեցող բժիշկներ ու փաստաբաններ եւ վերջապէս կրօնաւորներ:

Պահպանողականը իրեն յատուկ վարդապետութիւն, սկզբունք, ուղղութիւն չունի. բնագդաբար կը գործէ:

Իրեն կանոն ընտրած է հակառակիլ այն ամէն արարքներուն կամ գաղափարներուն որոնք աղատականներուն կամ յեղափոխականներուն կողմէ կը կատարուին կամ կ'արտայայտուին:

Եւ սակայն մէկ քանի հիմնական սկզբունքներ ունի որոնք նախորդ պահպանողականներէ իրեն ժառանգութիւն մնացած են: Ասոնց գլխաւորն է — « Հայ ազգը իր եկեղեցին չնորհիւ պահպանուած է մինչեւ այսօր:

Կը կարծէ՞ք որ պատմութեան փիլիսոփայութեան խորին ուսումնասիրութիւններով հասած է այս եղբակացութեան: Բնա՛ւ երբեք: Քիշէ մըն է այս և իրբեւ պահպանողականութեան թանկագին դոհար մը իր խելապատակին մէկ անկիւնը խնամով պահած է:

Եթէ այս վարկածին փաստերն ու ապացոյցները ուզէք, պահպանողականը՝ անյողդողդ՝ կը պատասխանէ.

— Եֆէնտիմ, աս ասանկ է, Հայ ազգը իր եկեղեցիին չնորհիւ պահպանուած է մինչեւ այսօր:

Ասիկա համոզում մը չէ իրեն համար, այլ հաւատք մը, հետեւաբար ապացոյցի պէտք չունի:

Զուարձալին այն է որ այս բանաձեւին հակառակն ալ. այսինքն՝ « Հայ ազգը իր եկեղեցիին չնորհիւ կործանած է »՝ նոյնքան եւ աւելի ճշմարիտ է գուցէ եւ աւելի դիւրաւ ապացուցանելի, բայց դժբախտաբար յեղափոխական կամ աղատական վարկած մըն է ու չի կրնար մտնել պահպանողականի մը գանկին մէջ:

Հայ եկեղեցին ետքը՝ պահպանողականը պինդ փարած է իր հաւատքին գործի մարդու, շահասէր վաճառականի տրամաբանութեամբ, որ հետեւեալն է.

— Ես կը հաւատամ՝ որովհետեւ հաւատալովս բան մը չեմ կորսնցներ, բայց թերեւս կը շահիմ: Հանդերձեալ կեանքը կամ գոյութիւն ունի կամ չունի: Եթէ չունի՝ ի՞նչ կը կորսնցնեմ հաւատալովս, իսկ եթէ ունի, այն ատեն կը շահիմ:

Այսպէս ուրեմն հաւատքը պահպանողականին համար վիճակահանութեան տոմսակ մըն է որ ձրիաբար իրեն նուէր տրուած է: Եթէ չզարնէ՝ գրալանէն բան մը չի կորսնցներ, իսկ եթէ զարնէ՝ կը շահի: Ուստի խնամով կը պահէ տոմսակը:

Պահպանողականը տեսակ մը աղնուապետական յաւակնութիւններ ունի որոնք սա բանաձեւին մէջ կ'ամփոփուին. « Մենք ուրիշ՝ ժողովուրդը ուրիշ »:

Այսպէս, պահպանողականը կը պահանջէ որ ժողովուրդը «բարոյական» ունենայ, մեծերուն հանդէպ պատկառանք ունենայ, ազգային իշխանութիւնը յարդէ: Եւ երբ դիտել տաս թէ ինք այդ գեղեցիկ յատկութիւնները դործնականապէս ցոյց չի տար իր վրայ, կը պատասխանէ.

— Մենք ուրիշ՝ ժողովուրդը ուրիշ... եթէ ժողովուրդը բարոյական չունենայ մեծերուն հանդէպ պատկառանք չունենայ, ազգային իշխանութիւնը չյարդէ, ի՞նչպէս կրնանք հետը դլուխ ելլել...

Ազգային գործերու մէջ պահպանողականը թաղականէ, կալուածոց հոգաբարձու, կտակաց հոգաբարձու է, ո՞չ թէ օւտակար բան մը ընելու համար, այլ որպէս զի «անօթիները աղդին եկամուտներուն չտիրանան եւ զանոնք կոկորդնին չանցունեն»: Անօթին իրեն համար ոչպահպանողականն է:

Յաճախ կը պատահէի սակայն որ ինք կուշտ ըլլալով եւ նոյն իսկ այդ պատճառաւ, լաւագոյն եւ համեղագոյն պատառներուն ձեռք կը զարնէ եւ զանոնք կուլ կուտայ:

Եւ եթէ բողոքի ձայներ բարձրանան.— «Ժողովուրդը ի՞նչ իրաւունք ունի իսպնուելու, կը գոչէ, քանի՞ փարա տուած է, ի՞նչ կտակ ըրած է, ի՞նչ կալուած շինած է... տարօրինակ բան, ազգը մեր վրայ վստահութիւն ունի, ժողովուրդը չի կրնար դիտողութիւն ընել...»:

Այսպէս ազգ եւ ծողովուրդ տարբեր բաներ են իրեն համար եւ իրարմէ կը զանազանուին սա ձեւով որ ազգը պահպանողական է՝ իսկ ժողովուրդը ազատական:

Ազգային ժողովին մէջ պահպանողականը քիչ կը իսօ-

սի եւ բնաւ չհամոզուիր: Վիճաբանութեամբ զըսւած ոեւէ խնդրի վրայ նախապէս կարծիք մը չունի, բայց քուէարկութեան ժամանակ երբէք չվարանիր: Գիտէ որ ազատականներուն հակառակ պիտի քուէարկէ:


Ժողովին մէջ՝ պահպանողականը ժիտական զօրութիւն մըն է միայն: Պահպանողականը համոզուած է որ եթէ ինք դոյութիւն չունենայ, Հայաստանեայց Եկեղեցին, հաւատքը, բարոյականը, պապենական սովորութիւնները, բարքերը, հայ կնոջ բնածին պարկերշտութիւնները, ազգային կալուածները, հերեսան ու ձուածեղը, նը, ազգային կալուածները, «Բիւղանղիոն»ը, վանքերը, Երուաղէմը, վերջապէս ամէն «Բիւղանղիոն»ը, վանքերը, կը չքանան, կը փճանան: Ասոր հարան կը կործանին, կը չքանան, կը փճանան: Ասոր հարան կը հաւատայ որ ինք ազգասէր է ու միակ ազգասէմար կը հաւատայ որ ինք ազգասէր է:

Պահպանողականին զաւակը ընդհանրապէս ազատական է մինչեւ իր հօրը մահը, անկէ ետքը, անոր ստացկին հետ՝ կը ժառանգէ նաեւ պահպանողականութիւնը:

500

ՀԱՇՈՒԵԿԱՌԻ

Մ թ ու ս թ ա բ	1 Յուլիս 1933 — 31 Պեկտ. 1934	հ 1 ժ
Մատուկը պատրաստ 1 Յուլիս 1933	241.15	Օհան Կարյոլ տպղ. համար
Նուկը փոխան ծաղինիպասնի Օհան	2340.—	Եր. Օնեանի տպգ. առ հաշիւ 2000
Կարոյի զրբին համար	57	2350.—
Բ. Զարդարքեամի հասորէն ծախուած	641.—	Հեղինակի իրաւունի
Հրանդի	24	500.—
Գեղարք Տէր Կարապետ. ի.	27	307.—
Գեղամ Բարձրեամի	42	462.20
Արփ. Արփիարեամի	44	519.—
Գր. Զօդրապի	27	510.—
Տիգր. Զէօլիւրեամի	69	342.—
Օհան Կարյոլ	98	869.—
Բաժմանորդնիրէ	745.60	1077.—
		Սիսուկը պատրաստ 31 Պեկտ. 1934 թ
		392.95
		8053.95
		8053.95



NL0344877

Հ Ա զ ա յ ի ն պ ա ր ա ր ա ն
Հ Ա զ ա յ ի ն պ ա ր ա ր ա ն

61359

« ՆԱՀԱՏԱԿ ԳՐԱԳԷՏՆԵՐՈՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ »

Մատենաշարէն լոյս տեսած են

Թիւ 1	Ռուբէն Զարդարեան	(1930)	Փրաճի	20
, , 2	Մելքոն Կիւրմեան	(1931)	, ,	20
, , 3	Գեղամ Տէր Կարապետեան	(1931)	, ,	30
, , 4	Գեղամ Բարսեղեան	(1931)	, ,	20
, , 5	Արփիար Արփիարեան	(1931)	, ,	20
, , 6	Գրիգոր Զօհրապ	(1932)	, ,	20
, , 7	Տիգրան Զէօկիւրեան	(1933)	, ,	20
, , 8	Օհան Կարօ	(1933)	, ,	20
, , 9	Երուանդ Օտեան	(1934)	, ,	20

Յաշորդարար լոյս պիտի տեսնեն

Երուանդ Սրմաֆէշլսանլեան
 Արտաշէս Յարութիւնեան
 Տիգրան Զրաթէան
 Ռուբէն Սեւակ

Մեր շարժին (12 հատոր) բաժանորդագրուողները
 ամէն երկիրներու համար, պիտի վճարեն 200 ֆրաճի :

Մեր կեդրոնական հասցէն է .—

M. Barsamian,
 121, Rue Marcadet. Paris (18°).

Ամերիկայի հատուածին հասցէն է .—

Dr John K. Erganian,
 175, Fifth av. New-York City (U.S.A.)